Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

167

Ltn
339

1999.

Թիֆլիսի Ընկերութիւն հայերէն գրքերի հրատարակութեան

ՄՕՐԻՍ ԲԼՕՖ

ԳՈՐԾՈՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

զանազան փոփոխութիւններով

Ս. ՊԱԼԱՍԱՆԵԱՆ

ԹԻՖԼԻՍ

Յ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ

1881

Մերդ-Էրեհշանայն

Дозволено цензурою. Тифлисъ. 22 Декабря 1880 г.

Գ 339-60

Հ3 342

Типографія И. Мартиросіанца на Орб. ул. д. № 5.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մեր դարը աշխատութեան դար է: Համարեա բոլոր մարդիկ աշխատում են, ոմանք գլխով, ուրիշները ձեռքերով, և ամենայն օգտակար աշխատութիւն իւր արժանաւոր վարձը ստանում է:

Աշխատութեան արդիւնքները փոխանակվում կամ մէկ ձեռքից միւսն են անցնում, մինչև որ վերջապէս սպառողն են հասնում: Սպառուել, այս է ահա այդ արդիւնքների վերջնական նպատակը:

Ուրեմն մարդս աշխատում է ապրելու համար, և կարելի է համարեա ասել, թէ նա ապրում է աշխատելու համար:

Յատուկ գիտնականները, որոնք յայտնի են ֆոլէոֆէթ անունով, ուսումնասիրել են աշխատութիւնը և նորա արդիւնքները. նոքա ուշադրու-

թեան արժանի դիտողութիւններ են արել այս կարևոր խնդրի վրայ, որ ամէն մարդ պէտք է դիտենայ:

Այդ դիտողութիւնները համառօտապէս ամփոփուած են գրգռիկս էջերի մէջ: Հեղինակը աշխատել է որքան կարելի է պարզ ու հասկանալի ձևով ներկայացնել այդ տեղեկութիւնները, նա ջանացել է մատչելի անել նոցա քիչ շատ զարգացած երիտասարդներին և մինչև իսկ վոբրահասակ մանուկներին:

Երիտասարդները սովորում են թէ ինչպէս պէտք է աշխատել, և քանի որ նորա ստիպուած են աշխատել երանց ապրուստը ճարելու համար, պէտք է հարկաւ ծանօթանան աշխատութեան օրէնքներին, որոնք արտադրութեան օրէնքներն են. նորա պէտք է գիտենան նոյնպէս թէ ինչ ճանապարհ են բռնում արդիւնքները արտադրողի ձեռքից սպառողի ձեռքն անցնելու համար:

Այս վոբրիկ գիրքը ուշի ուշով կարդալուց յետոյ, նորա վերոյիշեալ նիւթերի վերաբերեալ տեղեկութիւնները կ'ունենան. այնուհետև քանի որ հասակները կ'առնեն, կը մնայ նոցա աւելի խորամուխ լինել տնտեսական խնդիրների մէջ և աւելի մանրամասն ու բազմակողմանի տեղեկութիւններ ստանալ նոցա վրայ, յատկութիւն ունեցող այս գիրքը, երբև ժողովրդական ընթերցանութեան համար նշանակուած աշխատութիւն, հարկաւ դուրկ պիտի լինէր:

Թարգմանիչը այս աշխատութիւնը հայ ընթերցողներին օգտակար անելու համար, հարկաւոր համարեց մի քանի նշանաւոր փոփոխութիւններ անել նորա մէջ: Բացի գրքի մէջ բերուած օրինակներից, որ յաճախ պէտք եղաւ փոխել և նոցա տեղ ուրիշ յարմար օրինակներ դնել, նա ստիպուեցաւ շատ տեղ գանազան յաւելուածներ ու յապաւումներ անել. առաջինները վերաբերում են այն նիւթերին որոնց վրայ հեղինակը, երբև ֆրանսիացի ընթերցողների ծանօթ ճշմարտութիւններ, հարևանցի կերպով է անցնում. վերջինները այնպիսի խնդիրների, որոնք մեր կեանքի մէջ չլինելով՝ չէր էլ կարելի նոցա վրայ խօսք անել, կամ գոնեա զգալի փոփոխութիւնների ենթարկել և այնպէս առաջ բերել:

Պարզով լեզուին, թարգմանիչը խոստովանում է որ, որքան և աշխատել է, միշտ չէ յաջողել պահպանել այն ինքնանութիւնն ու կենդանութիւնը որ պահանջվում է ամենայն գրքից և մանաւանդ այնպիսի գրուածներից որոնք ժողովրդական ընթերցանութեան համար նշանակուած

են։ Այս բղխում է հարկաւ նիւթի նորութիւնից, որի բացատրութեան համար դժուար է երբեմն համապատասխան կենդանի ձևերը գտնել մեր լեզուի մէջ։

Դժուարութիւնը այստեղ աւելի էր մանաւանդ այն պատճառով որ գրքի մէջ բերուած անձինքը, բացի մէկից, որ քաղաքական տնտեսութեան տարրերը բացատրում է, բոլորն էլ գիւղացիք են, որոնք ստիպուած են երբեմն այնպիսի բառեր և դուրցուածներ գործածել որ մասամբ գրագէտ քաղաքացոց համար էլ անսովոր են։ Այս անտեղութեան առաջն առնել անկարելի էր եթէ մինչև անգամ գիրքը գաւառաբարբառով թարգմանուած լինէր, միակ ընտիրն լեզուն որով կարելի է խօսել գիւղացու հետ. այս դէպքում չնչաւ բառերն ու դուրցուածները աւելի խորթ կը հնչեին ընթերցողի ականջին։

ՓՈՔՐԻԿ ՁԵՌՆԱՐԿ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ

Օգտակարութիւն եւ արժէք.

Ամբառը իւր հօր հետ գիւղից գնացել էր Թիֆլիս, ուր շատ նոր բաներ էր տեսել։ Մի բան մանաւանդ զարմացրել էր նորան, այն է որ քաղաքում ջուրը փողով են ծախում։

Ընկերները չէին կամենում հաւատալ նորա խօսքին։ «Այդ անկարելի է, ասում էին նոքա, ջուրը ոչ ինչ չարժէ»։

Լեռնը որ ամէնից աւելի բան գիտէր, ասաց ծանրութեամբ. «Կարելի է փողով առնել ցորեն, սիմինդր, եղներ, սայլեր, տրեխներ, իսկ ջուր — այդ չլսուած բան է. ջուրը հանում են գետից կամ ջրհորից»։

Եւ բոլոր ընկերները սկսեցին ծաղր անել Սմբատին։

Բայց Սմբատը ամենևին չկոտրուեցաւ։ «Ջուրը, ասում էր նա, մի տեսակ տակձորների մէջ էր ածած, որ թ ո ւ լ ո ւ խ են անուանում, և ձիու վրայ բարձած, ջրկիրը այդ թուլուխներից ամէն մինը ծախում էր երկու շայով կամ տասը կոպէկով»։

Երեխաների վէճը ուսուցչի ականջին հասաւ։

«Սմբատը իրաւունք ունի,» ասաց նա։

Այս խօսքի վրայ ընկերները ապշած մընացին։

«Ասացէք ինձ, երեխայք, շարունակեց ուսուցիչը, դուք կարո՞ղ էք առանց ջրի ապրել։

— Ո՛չ, ո՛չ, աղաղակեցին երեխաները ամէն կողմից։

— Ուրեմն ջուրը օգտակար է, մինչև անգամ անհրաժեշտ է մարդուս։ Բայց ինչի՞ ջուրը փողով չէք առնում։

— Որովհետև ձրի ենք ստանում, ասաց Տիգրանը, որ պատրաստ էր միշտ պատասխանելու։

— Ճշմարիտ է, շարունակեց ուսուցիչը. բայց եթէ ձրի չստանայիք, չէ՞ որ պէտք է փող վճարէիք։ Այժմ տեսէք, մի մեծ գետ է

անցնում Թիֆլիսի միջով, որից ամէնին թոյլ է տրվում ջուր հանել, և սակայն ջրկիրին փող են վճարում։ Ի՞նչ էք կարծում, իսկապէս ջրի՞ն է վճարվում։

— Ո՛չ, այլ ջրկիրը, աղաղակեց դարձեալ Տիգրանը։

— Այո՛ արդարև ջրկիրը, կամ աւելի լաւ ասենք՝ նորա աշխատութիւնն է վճարվում. նորան տալիս են երկու շայի իւր քաշած նեղութեան և դործ դրած ժամանակի համար ջուրը գետից բերելու։ Բայց հարկաւոր չէ Թիֆլիս գնալ որ տեսնենք թէ ջուրը ծախվում է. հէնց այստեղ՝ մեր գիւղում ջուրը փողով է առնվում, թէև մենք մի փոքրիկ գետակ էլ ունինք։»

Ուսուցիչը այնպիսի ծանրութեամբ էր խօսում որ երեխաները չէին կարող կարծել թէ նա կատակ է անում. նոքա լուռ նայում էին միմեանց երեսին։

Մի րոպէ կանգ առնելուց յետոյ, ուսուցիչը հարցրեց.

«Ո՞ր տեղից էք հանում ջուրը։

Շատ ձայներ միասին. — Ջրհորից։

— Այդ ջրհորը ինքն իրա՞ն է շինուել։

— Ո՛չ, մարդիկ փորել են նորան, ասաց

Սմբատը. մեր ջրհորը 40 մանէթ է արժել։

— Լաւ ուրեմն, եթէ ջրհորը արժէլ է 40 մանէթ, և եթէ նա 20 տարի է բանում, ջուրը ո՞րքան արժէ։

Շատերը. — 20ը 40ի մէջ, 2 անգամ։ երկու մանէթ տարին։

— Եւ մենք այստեղ չենք հաշվում ոչ չուանները և ոչ դոյլերը (տոլչա)։

«Այն առարկաները որ գնվում կամ փոխով առնվում են, ասաց ուսուցիչը իւր խօսքին վերջ տալով, արժէք ունին. սորա համար է որ հարցնում են թէ ո՞րքան արժէ այս ինչ առարկան, կամ ինչ է նորա արժէքը։ Իսկ այն բաները որոնք ձրի են ստացվում, ինչպէս օդը, անձրևը, արեգակի ճառագայթները, օգտակար են, բայց արժէք չունին։»

Իրական և երևակայական օգտակարութիւն.

«Օդը, անձրևը, արեգակի ճառագայթները օգտակար են, բայց արժէք չունին, ասում էր իրան իրան Լևոնը՝ ուսուցչի ասածների վրայ մտածելով։ Ի՞նչպէս թէ արժէք չունին։

Իմ խաղալիկները թէև օգտակար չեն բայց արժէք ունին, քանի որ նոքա փոխով են առած։ Ուրեմն կան բաներ որոնք արժէք ունին, թէև օգտակար չեն։»

Երեկոյեան, երբ Արշակն ու Տիգրանը կանչեցին Լևոնին չիլկափայտ խաղալու, առաւօտուայ խորհրդածութիւնը միտն եկաւ, և հարցրեց իւր ընկերների կարծիքը։

Նոքա կանգ առին չիմանալով թէ ինչ պատասխանեն։

Հէնց այդ միջոցին ուսուցիչը անց էր կենում նոցա մօտով։ «Պարոն ուսուցիչ, ասաց Լևոնը ողջունելով նորան, արդեօք խաղալիկները արժէք ունի՞ն։

—Ոչ ինձ համար, որովհետև ես չեմ խաղում, պատասխանեց նա։

— Բայց մեր հարևան Կիրակոս եղբայրը նոյնպէս չէ խաղում, ասաց Արշակը, և սակայն նա խաղալիկները փոխով է առնում։

— Նա առնում է ծախելու համար, վերջայ բերեց Լևոնը։

— Կիրակոս եղբայրը, կրկնեց ուսուցիչը, փոխով առնում է խաղալիկները Թիֆլիսում, և յետոյ մեր գիւղի մանուկներին փոքր ինչ աւելի գնով է ծախում, որպէս զի իւր աշխա-

տութիւնը վարձատրուի. շահած փողովը նա այնպիսի բաներ է առնում որոնք իրան օգտակար են։

— Բայց մենք, ասացին երեխաները, խաղալիկները առնում ենք խաղալու համար։

— Դասամիջոցներին, արձակուրդի ժամանակ, կրկնեց ուսուցիչը, խաղը թոյլ է տըրվում, նա ձեզ զուարճութիւն է պատճառում, և դուք յօժար էք փող մնխելու պարզ զուարճութեան համար։ Ահա այս պատճառով մի առարկայ որ զուարճութիւն է պատճառում կարող է նոյնպէս արժէք ունենալ։ Զուարճութիւնը նոյնպէս ունի իւր օգտակարութիւնը. անշուշտ այս աւելի ստորին կարգի օգտակարութիւն է, որ պէտք է չափաւոր կերպով գործ դնել, և միայն այն ժամանակ երբ մարդ կամենում է աշխատութիւնից հանգստանալ։ Կան դարձեալ առարկաներ որոնք արժէք ունին, թէև ձեզ և ինձ ոչ օգտակար են, ոչ էլ զուարճութիւն են պատճառում. բայց կը գտնուին ուրիշ անձինք որոնք այս կամ այն պատճառով կը ցանկան ձեռք բերել նոցա, և հէնց որ այդ անձինքը յօժարութիւն են յայտնում այդպիսի առարկաներ փողով առնելու, նոքա արժէք են ստանում։

ԼԵՒՈՆ. — Ուրեմն ինչ որ ծախվում կամ գնվում է արժէ՞ք ունի։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Աւելի ճիշդ կը լինի եթէ ասենք, թէ ամէն առարկայ կամ ամէն ծառայութիւն՝ որ մարդ պատրաստ է փող վճարելով ձեռք բերել, արժէք ունի։ Ցիշեցէք մի քանի առարկաներ որ մարդիկ փողով գնում են։

ՏԻԳՐԱՆ. — Հաց, կօշիկ, գիրք, ձի, և ուրիշ շատերը։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Ցիշեցէք այժմ մի քանի ծառայութիւններ որոնց համար մարդ պատրաստ է փող վճառելու։

ԱՐՇԱԿ. — Վարուցանը, հունձը, կարը։

ԼԵՒՈՆ. — Ամէն աշխատութիւնները, ամէն գործաւորները, վճարվում են փողով։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Դուք աչքի առաջ ունիք միայն ձեռքի աշխատութիւնները. բայց կան նաև ուրիշ ծառայութիւններ որ փողով վարձատրվում են։

ԼԵՒՈՆ. — Բժշկին վարձ են տալիս։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Հապա դիտութիւնը արժէք չունի՞։

ԼԵՒՈՆ. — Ինչպէս չէ, ես շատ բաղդաւոր եմ որ կարդալ գիտեմ։

ՏԻԳՐԱՆ. — Ես էլ՝ որ հաշուել գիտեմ։ Մայրս ինձ է անել տալիս բոլոր հաշիւ-ները։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Ուրեմն մի անգամ էլ կըրկնենք. երևակայական օգտակարութիւն ունեցող առարկաներն ու ծառայութիւնները (այսինքն այնպիսի առարկաներ որոնք լոկ զուարճութեան համար են) արժէք են ստանում, հէնց որ մարդիկ յօժարութիւն են յայտնում փողով ձեռք բերելու նոցա։»

Սեփականութիւն.

Այս խօսակցութիւնից մի քանի օր յետոյ, դասամիջոցին, մի մեծ վէճ ծագեցաւ ուսումնարանի բակում Լևոնի և Արտաշէսի մէջ։ Լևոնը մի վէգ էր գտել և որովհետև Արտաշէսը իւր վէգը կորցրել էր, պահանջում էր որ գտնուած վէգը իրան տրուի, ասելով թէ իրանն է։ Իսկ Լևոնը հակառակն էր պնդում. նա ասում էր թէ շատ վէգեր են կորչում, թէ հէնց ինքն էլ է կորցրել և թէ շատ կարելի է որ իւր վէգերից մէկն է գտել։

Այն ժամանակ Տիգրանի մտքին եկաւ

Արտաշէսին հարցնելու, թէ արդեօք իւր կորցրած վէգը ներկած էր թէ ոչ։

«Կարմիր գոյնով ներկած էր», պատասխանեց Արտաշէսը։

Լևոնը ցոյց տուեց որ իւր գտած վէգը ներկած չէ, և կարողացաւ իւր մօտ պահել նորան։

Ուսուցիչը որ ամէն բան լսել էր առանց երևան գալու, մօտեցաւ երեխաներին այս փոքրիկ անցքից մի խրատ հանելու համար։

«Ես տեսնում եմ, ասաց նա, որ դուք հասկանում էք սեփականութեան իրաւունքը, թէև ոչ ոք չէ բացատրել ձեզ այդ իրաւունքը։ Եթէ ձեզանից մէկը մի փուռան է շինել իւր համար, կամ եթէ հայրը նորան մի ֆռիկ կամ մի բզզան է տուել, նա այդ փուռանի, ֆռիկի ու բզզանի վրայ նայում է իբրև իւր սեփականութեան վրայ, որով կարող է անել ինչ որ կամենում է։ Նա այդ սեփականութեան բացարձակ տէրն է, և պէտք եղած ժամանակը ուժով կը պաշտպանէ իւր իրաւունքը, ինչպէս կը պաշտպանէր իւր ականջները եթէ մէկը կամենար կտրել նոցա։

«Եւ շատ լաւ է որ այդ այդպէս է։

«Ինչի՞։

«Որովհետև մեր ունեցածը վայելելու ապահովութիւնը մեծ եռանդ և հաստատամտութիւն է տալիս մեզ. մարդ անդադար աշխատում է իւր ունեցածը աւելացնելու, և այսպէսով սեփականութիւնը արտադրութեան կրկնապատկուելու, երբեմն տասնապատկուելու և մինչև անգամ հարիւրապատկուելու պատճառ է դառնում. այնտեղ ուր առաջ հարիւր վայրենիք դժուարանում էին իրանց մնունդը գտնելու, այժմ տասը հազար գերդաստան լիութեան մէջ է ապրում, իւրաքանչիւրը իւր ըստացուածքն ու արուեստը ունենալով:

«Եթէ սեփականութիւն ասած բանը չլինէր, ոչ ոք ծառ չէր տնկիլ՝ որի պտուղները մի ուրիշը կարող էր գալ ու խլել, ոչ ոք տուն չէր շինիլ՝ որի մէջ մի ուրիշը իրաւունք կը համարէր իւր բնակութիւնը հաստատելու, ոչ ոք ձի չէր մեծացնիլ՝ եթէ հարևանը կարողանար տէր դառնալ նորան, ոչ ոք վուշ չէր ցանիլ՝ եթէ գործած կտաւից շապիկ չպիտի հագնէր:

«Կարո՞ղ էք, սիրելիք, երևակայել մի այնպիսի երկիր ուր ամէն ոք կարող էր անպատիժ վերցնել ուրիշների ունեցածը, ուր Սրմբաթը կարող էր խլել Արշակի բղջանը, և Տիգ-

բանը Լևոնի փռանը: Կը ցանկայի՞ք ապրել այդպիսի երկրում:

— Ո՛չ, ո՛չ, ո՛չ, աղաղակեցին երեխայքը:

— Տեսնենք այժմ թէ ինչպէս կարելի է ձեռք բերել մի սեփականութիւն, այսինքն մի որ և իցէ առարկայ, մի գիրք, մի եղը, մի տուն կամ մի հող որ արդէն մէկին պատկանում է:

— Գնելով ասաց Տիգրանը:

— Այսինքն նորա փոխարէն մի ուրիշ բան տալով, ասաց դասուցիչը: Ուրիշ ի՞նչ կերպով:

— Ընծայ ստանալով, պատասխանեց Սրմբաթը:

— Էլ ուրիշ միջոց չկա՞յ:

— Կարելի է մի բան ժառանգութեամբ ստանալ, ասաց Արշակը:

— Հայրս ասում է, կրկնեց Տիգրանը, թէ մեզանում տէրութեան օրէնքը թոյլ է տալիս սեփականել մի բան, որի բուն տէրը տասը տարուան ընթացքում ոչ ինչ բողոք չէ յայտնել:

— Այդպէս է, բայց լաւ չէ ուրիշի անհոգութիւնից կամ մոռացութիւնից օգուտ քաղել և գրաւել օտարի սեփականութիւնը: Ուրիշ է եթէ մի բան գտնես որ ոչ ոքի չէ

պատկանում, այդ ի հարկէ կարելի է սեփական-նել։ Այսպէս, օրինակի համար, դեռ կան անբնակ երկրներ, ուր կարելի է մի հող գրաւել ու մշակել, շինել մի տուն և նորա մէջ բնակել, և այդ հողն ու տունը այն մարդու օրինաւոր սեփականութիւնն են դառնում, որ իւր քրտինքը թափել է նոցա վրայ։

«Այսպէս դարձեալ գետնի տակ եղած ջուրը ոչ ոքի չէ պատկանում, բայց եթէ ես մի ջրհոր փորել տամ, այդ ջրհորի մէջ մնած ջուրը իմն է, ես կարող եմ հարկ եղած ժամանակը տալ կամ ծախել նորան։ Ես այդ ջուրը իմ աշխատութեամբ եմ ձեռք բերել, կամ որ նոյնն է՝ ուրիշի աշխատութիւնը վճառելով այն փողով որ ուրիշ ճանապարհով շահեցի, և ինչ որ իմն է, կարող եմ ուզածիս պէս կարգադրել, իհարկէ յարգելով բարոյականութեան կանոնները։»

Ի՞նչ է նշանակում աշխատել.

Անցեալ օր մի առողջ և ուժեղ մարդ գնացել էր ողորմութիւն խնդրելու պարոն Շահպազեանից, որ շրջակայքի հարուստ կալուածատէրերից մէկն է։ «Ի՞նչպէս, ասաց պարոն Շահպազեանը, ամօթ չէ՞ քեզ համար մուրացկանութիւն անել։ — Ներեցէ՛ք, պարոն, անգործ եմ մնացել, պատասխանեց միւսը։ — Ես քեզ գործ կը տամ, կրկնեց պարոն Շահպազեանը։ Վեր առ այս փայտերը բակի ձախ կողմից աջ կողմը կրէ և տասը շայի կը ստանաս։» Մի քանի ժամում այդ գործը կատարուեցաւ, և պարոն Շահպազեանը խոստացած փողը վճարելով՝ ասաց. «Եթէ էգուց էլ գործ չճարես, արի՛ ինձ մօտ։» Միւս օր մարդն եկաւ և պարոն Շահպազեանը պատուիրեց նորան որ փայտը աջ կողմից ձախ կողմը կրէ, յետոյ փողը վճարեց։ Այսպէս մի քանի օր շարունակ փայտը ձախից աջ կրուեցաւ և աջից ձախ, յետոյ մարդն էլ չերևեցաւ, թէև ամէն օր կանոնաւոր կերպով ստանում էր իւր տասը շային։

Պարոն Շահպազեանը հեռուից հասկացրել էր նրան, թէ ազնուութիւն չէ ապարդիւն գործի համար փող ստանալ, և թէ այդ կը նպաստէ միայն մուրացկանութիւնը խրախուսելու։

Եւ մեր մարդը, որ փայտը մէկ կողմից միւսը տանելով էր զբաղուել վերջապէս անտանելի համարեց մի աշխատութիւն, որ թէև

ծանր ու յոգնեցուցիչ էր, բայց ոչ ինչ օգտակար արդիւնք չունէր։

Այս անցքի մասին շատ խօսուեցաւ գիւղում, և ամէնքը համաձայնեցան որ աշխատելու համար՝ բաւական չէ ձեռքերն ու ոտքերը շարժել։ Խաղի ժամանակ էլ կարելի է շատ յոգնել ջանք ու ճիգ թափել, որովհետև կան խաղեր որ առանձին ճարպիկութիւն են պահանջում. իսկ աշխատութիւնը պիտի միշտ մի օգտակար նպատակ ունենայ, և այդ նպատակը մի բան արդարելն է։ Ոմանք արտադրում են երկիրը գործելով, նոքա ժողովում են երկրի արդիւնքները. ուրիշները գործում են երկաթ, փայտը, կտաւեղէնները և հազարաւոր ուրիշ բաներ և ստանում են ճարտարութեան արդիւնքներ. ուրիշները աշխատում են ապրանքներից հակեր շինելով, մէկ տեղից միւսը տեղափոխելով, մաս առ մաս ծախելով, և որովհետև սոքա էլ ծառայութիւններ են մատուցանում, փողով վարձատրվում են։ Ի՞նչպէս կը ստանայինք սուրճը Բրազիլիայից, պղպեղը Հնդկաստանից, տաք մուշտակները Ռուսաստանից՝ եթէ վաճառականութիւնը չլինէր։

Այս բոլոր խօսակցութիւնը լսելուց յետոյ, հետևեալ հարցը ծնաւ մանուկների մէջ։

«Հապա մենք ի՞նչ ենք արտադրում մեր աշխատութեամբ։

— Ի՞նչ էք արտադրում, ասաց ուսուցիչը որ հարցը լսել էր։ Դուք արտադրում էք գիտութիւնն ու իմաստութիւնը, որոնք կ՝օգնեն ձեզ կրթեալ ու բարի մարդիկ լինելու, և միջոց կը տան ձեզ աւելի հեշտութեամբ ձեր ապրուստը ճարելու, պատուաւոր կեանք վարելու և ձեզ և ուրիշներին օգտակար լինելու։ Ես ինքս աշխատում եմ ուսուցանելով ձեզ, ինչպէս որ բժիշկն աշխատում է ձեր հիւանդութիւնները բժշկելով. կարելի է նոյնպէս աշխատել զուարճութեան առարկաներ արտադրելով, որոնք միշտ իրանց առնողները կ՝ունենան, որովհետև եթէ մարդս աշխատում է, ներելի է նորան իւր զուարճութեան ժամերն էլ ունենալ։

Աշխատութիւնը կարիք է.

«Ճշմարիտ է, հարցրեց մի օր Լևոնը, թէ կար ժամանակ որ ցորենը իրան իրան էր բուսնում ու աճում և թէ հարկաւորութիւն չկար ոչ ցանելու, ոչ էլ երկիրը մշակելու։

— Այդ անշուշտ այն ժամանակն էր, ասաց ուսուցիչը ժպտալով, երբ ցորենը իրան իրան էր հնձվում, իրան իրան ջաղացք գնում և աղվում, և երբ ալուրը հաց էր դառնում առանց խմորը հունձելու և առանց փուռը տաքացնելու։

— Ուրեմն ուղիղ չէ այն ինչ որ պատմվում է հէքիաթների մէջ, ասաց Լևոնը։

— Ի հարկէ չէ։

— Բայց ծառերը իրանց իրանց են բուսնում, ասաց մի երեխայ։

— Այո՛, պատասխանեց ուսուցիչը, բայց չէ՞ որ այդ տեսակ ծառերի պտուղները մանր ու անհամ են։ Որպէս զի պտուղները խոշոր ու համեղ լինին, պէտք է որ ծառերը պատուաստուին ու ամէն կերպով խնամուին, և այս բոլորը աշխատութեամբ է լինում։

— Մի թէ ցորե՞նն էլ են պատուաստում, հարցրեց Լևոնի փոքրիկ եղբայրը։

— Ո՛չ, պատասխանեց ուսուցիչը, բայց հողը վարում են, ընտիր հատիկներով սերմում, և առ հասարակ արտը այնքան մշակում են որ հասկերը խոշոր և հատիկները լի լինին. այդպէսով միայն կարելի է այնքան ցորեն ստանալ որ բաւական լինի բոլոր մարդկանց կերակրելու։ Եթէ հողը չմշակուէր, գուցէ միայն մի քանի բարակ հասկեր դուրս գային, որ բաւական չէին լինիլ ամէնին կերակրելու։

— Այսպէս էլ, նկատեց այն կողմից Արշակը որ ուշադրութեամբ լսում էր ուսուցչի ասածները, հագստեղէնը, տները, գրքերը և ուրիշ շատ բաներ ամենևին չէին լինիլ եթէ մարդիկ չշինէին նոցա։

— Ճշմարիտ է, աղաղակեցին բոլոր երեխաները միաբերան։

— Տեսնում է՞ք ուրեմն, ասաց ուսուցիչը խօսքը վերջացնելով, որ աշխատութիւնը կարիք է մարդուս համար։ Առանց աշխատութեան մարդիկ ոչ բաւական սնունդ կ՚ունենային, ոչ բաւական հագուստ, ոչ էլ հաղարաւոր ուրիշ օգտակար առարկաներ։

Աշխատութիւնը պատուաւոր է.

Լևոնը մի բոպէ մտածելով այն բաների վրայ որ փոքր ինչ առաջ լսել էր, ասաց յանկարծ. «Ծա՞նր բան է աշխատելը։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Արդարև աշխատութիւնը շատ անգամ յոգնեցնում է մարդուն, բայց

ծոյլերին միայն ծանր է թվում աշխատելը։

— Եւ ծուլութիւնը ախտ է ասաց Արշակը։

— Այո, մեծ ախտ, կրկնեց ուսուցիչը։ Մարդս միայն այն աշխատութիւնը ծանր է համարում, շարունակեց նա, որ չսիրելով է կատարում։ բայց շատերը սիրում, կարելի է մինչև անգամ ասել զուարճութիւն են զգում աշխատելու։

«Ի՞նչ էք կարծում, ի՞նչ կը լինէր եթէ մարդիկ հողը չմշակէին։

ԱՐՏԱՇԵՍ. — Սովից կը մեռնէին։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Եթէ տներ, հագուստներ չշինէին։

ՏԻԳՐԱՆ. — Ցրտից կը հիւանդանային։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Եւ եթէ հիւանդներին չբժշկէին, շատ տկարներ կը լինէին. եթէ ելեխաներին չկրթէին, նոքա տգէտ ու չար կը մնային։ Միով բանիւ, այն բոլոր անձինքը որոնք իրանց ձեռքերով կամ գլխով աշխատում են, օգտակար են, զանազան ծառայութիւններ են մատուցանում մեզ և մենք պէտք է պատուենք նոցա։

ԱՐՇԱԿ. — Եթէ ծուլութիւնը ախտ է, ուրեմն աշխատութիւնն առաքինութիւն է, այնպէս չէ։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Այդպէս է։ Աշխատանքը շատ անգամ յոգնեցուցիչ է, երբեմն նաև դժուար, բայց պէտք է որ նշանակած աշխատութիւնը կատարուի։ Կան անձինք որոնք չեն կարող աշխատել. նոցա տեղ ուրիշներն են աշխատում, որոնք և համարվում են նոցա բարերարները։ Ահա այսպէս ծնողքը իրանց որդւոց բարերարներն են։

ԼԵՒՈՆ. — Իսկ երբ աշխատութեան համար փող են վճարում։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Փողով վճարուած աշխատութիւնը բարերարութիւն չէ, այլ օգտակարութիւն։ Մենք բարերարութիւններ ընդունում ենք երբ այլապէս չենք կարող անել, և այն ժամանակ պարտաւոր ենք երախտագէտ լինել. բայց միևնոյն ժամանակ մեր պատիւը պահանջում է ծառայութեան փոխարէն ծառայութիւն մատուցանել, օգտակար առարկայի փոխարէն օգտակար առարկայ։ Կարելի էր համարեա ասել թէ մենք աշխատում ենք ուրիշների աշխատութիւնը վճարելու համար, որովհետև շատ անձինք պէտք է աշխատին որ մեր բոլոր պիտոյքները լրանան։

Աշխատութեան բաժանում. — 1) Իրողութիւնը.

Երեխայքը զարմացած էին թվում: Նոքա չէին կարող ըմբռնել այն տեսակ տեսակ աշխատութիւնները որոնք հարկաւոր են մեր ամենօրեայ պիտոյքները լցուցանելու համար: Ուսուցիչը հարկաւոր համարեց մի քանի բացատրութիւններ տալ նոցա: Առնենք մեկ օրինակ: Դուք հագած ունիք մահուդէ շալվար, բամբակէ արխալուխ, կտաւէ շապիկ, կօշիկներ, և այլն: Խօսինք նախ մահուդի մասին, ինչից է շինվում մահուդը:

ԱՐՇԱԿ. — Ոչխարների բրդից:

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Պէտք է ուրեմն հովիւներ ու հօտաղներ լինին ոչխարները մեծացնելու համար: Երբ բուրդը խուզում, լուանում, մաքրում և գզում են, այդ բրդից . . .

ԱՐԱՄ. — Թել են մանում:

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Մեզանում բուրդը տանն են մանում, իսկ լուսաւորեալ երկրներում այդ բանի համար մեքենաներ են գործ դնում, որոնց մէջ մանում են փայտը, երկաթը, կաշին: Քանի՞ մարդ է հարկաւոր այս բոլոր նիւթերը

պատրաստելու և միմեանց հետ յարմարեցնելու համար, իսկ երբ մեքենան պատրաստ է, քանի՞ ուրիշ մարդիկ բուրդը մանելու համար:

«Բայց թողնենք այդ և շարունակենք: Բուրդը մանուեցաւ, պէտք է ներկել նորան: Ո՞վ է ներկում մահուդը:

ԼԵՒՈՆ. — Ներկարարը:

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Բայց ինչո՞վ: Նորան հարկաւոր են դոյն տուող նիւթեր, որոնցից մի քանիսը, ինչպէս լեղակը, հեռաւոր տեղերից են բերվում, այն էլ պէտք է արտադրել նոցա, որովհետև իրանք իրանցից չեն գոյանում:

«Թելը ներկելուց յետոյ, պէտք է մահուդը գործել: Այս բանի համար ջուլհակը ոստանի պէտք ունի. այդ ոստանը բաղկացած է փայտից, երկաթից, կաշուց, որոնցից իւրաքանչիւրը տարբեր գործաւորների ձեռքով են արտադրուել:

«Վերջապէս մահուդը գործուեցաւ, ծախու հանուեցաւ, և տարուեցաւ դերձակի խանութը, որ հագստեղէն կարելու համար՝ մրկրատի, ասեղների ու թելի հարկաւորութիւն ունի: Որքան մարդիկ են հարկաւոր այս իրեղէնները արտադրելու համար:

«Խօսինք այժմ արխալուխի վրայ:

ԼԵՒՈՆ. — Բամբակը, որից շինուած է արխալուխը, մեր երկրում՝ Հայաստանումն է դուրս գալիս, այնպէս չէ՞, պարոն ուսուցիչ:

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Հայաստանում և ուրիշ շատ հեռաւոր երկրներում, ինչպէս են Ամերիկան, Հնդկաստանը, Եգիպտոսը, և այդ երկրները գնալու համար պէտք է ծով ու ցամաք անցնել: Ի՞նչպէս են ճանապարհորդում ծովի վրայ:

ԱՐՇԱԿ. — Մեծ նաւերով:

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Շատ մեծ նաւերով: Եւ որքան մարդ է հարկաւոր մի նաւ շինելու համար. որքանը՝ փայտը, երկաթը, պղինձը, պարանները, առագաստները, պաշարեղէնները ձեռք բերելու համար: Քանի՞ մարդիկ քննել, ընտրել, տաքնել, հաշուել, ամէն կերպով աշխատել են մինչև որ հնարաւոր է եղել նաւը անվտանգ տանել ծովի ալիքների վրայ:

«Ցեսէ՛ք, ես ձեզ խօսում էի երկաթի վրայ. բայց մի հատը միայն ունենալու համար այն բևեռներից որ գործ են դնում նաւերի շինութեան մէջ, հարիւրաւոր կամ գուցէ հազարաւոր մարդիկ են հարկաւոր:

«Պէտք է նախ գետինը փորել երկաթի նիւթը հանելու համար, որ դուրս է գալիս

մանր փոշիի ձևով հողի կամ քարերի հետ խառն: Պէտք է սայլեր պատրաստել և ձեռներ մեծացնել դուրս բերուած հանքը գործատուն տանելու համար (որքան մարդիկ են շինել գործատունը): Գործատան մէջ երկաթի հանքը հալում են ածուխով (որքան մարդիկ բանել են ածուխը այրելու համար): Հալած երկաթը ձողերի են փոխակերպվում փռների մէջ: Այս կերպով պատրաստուած ձողերը բերվում են բևեռագործի մօտ որ ունի իւր դարբնոցն ու փուքսը, որ ուրիշ արհեստաւորներ են շինել, մուրճեր, ունելիքներ և ուրիշ գործիքներ, որոնք նոյնպէս իրանց իրանց չէն շինուել, վերջապէս ածուխ կամ, ուր որ փայտը թանգ է քարածուխ, որ մեծ աշխատանքով գետնի տակից են հանում:

«Մէկ խօսքով ասեմ, եթէ կարելի լինէր ճիշտ հաշուել թէ որքան մարդիկ աշխատել են արտադրելու այն շորերը որ Տիգրանը կամ Արամը հագած ունի, գուցէ 100,000 հոգի դանէլինք, ով գիտէ գուցէ նաև աւելի, և ոչ պակաս:

«Նուտով կը տեսնենք թէ ինչի համար աշխատութիւնները այդպէս բաժանուած են:

Աշխատութեան բաժանում. — 2) Պատճառը.

Մի օր մտնելով հարևանի տունը, ուսուցիչը լսեց որ Արամը ասում էր իւր հօրը. «Բայց եթէ փողը պէտք է շատ խնայելով մրսել, ինչի՞ մենք ինքներս չենք շինում մեր հագուստներն ու կօշիկները, մեր սայլերն ու բահերը։»

Հայրը պատասխանեց. «Որովհետև մենք չենք կարող այդ բոլոր բաները շինել։

— Այդ բաւական չէ, աւելացրեց ուսուցիչը, այլ այն ժամանակ այդ բաները մեզ աւելի թանդ կ՝արժէին։»

Եւ որովհետև բոլոր տան մէջ եղողները զարմացած էին թվում, ուսուցիչը դարձաւ հարցրեց Արամի մօրը. «Ասացէ՛ք, խնդրեմ, ո՞րքան ժամանակ հարկաւոր կը լինէր ձեզ բուրդ մանելու, կտաւեղէն գործելու և հագստեղէն կարելու ամբողջ ընտանիքի համար։

— Գուցէ 200 օր, պատասխանեց Արամի մայրը։

— Եւ ո՞րքան արժէ մի օրուայ աշխատանքը։

— Երկու աբասի։

— Երկու հարիւր օրը կ՝անէ չորս հարիւր աբասի կամ 80 մանէթ։

«Իսկ եթէ խանութից առնէիք, այդ հագուստները ձեզ հազիւ 30 կամ 40 մանէթ արժէին։

«Եւ եթէ դուք ամբողջ օրը մանէիք, գործէիք ու կարէիք, ո՞վ կը մաքրէր ձեր տունը, կ՝եփէր կերակուրը, կը կթէր կովերը։

«Հապա դուք, բարեկամ, հարցրեց նա Արամի հօրը, կարո՞ղ էիք այնպէս շուտ շինել մի գութան ինչպէս դարբինը։

— Ի հարկէ ոչ։

— Եւ ո՞ր տեղից կ՝առնէիք երկաթը. գետնի տակից կը հանէիք ու կը ծեծէիք նորան, ինչպէս նաև պղինձը և ուրիշ մետաղները որ կարող էին պէտք դալ ձեզ։

«Ուրեմն շատ լաւ է, շարունակեց ուսուցիչը, որ աշխատութիւնները բաժանուած են մարդկանց մէջ, որ ոմանք միայն բահեր են շինում, ուրիշները դարձեալ ժամացոյցներ, գրքեր, կօշիկներ։ Մարդս միշտ միևնոյն բանը շինելով, թէ արագ և թէ լաւ է շինում։

— Այժմ հասկանում եմ, ասաց այն կողմից Արամը, թէ ինչի համար երբեմն միևնոյն

նախադասութիւնը մի քանի անգամ գրել էք տալիս ինձ։

— Ուղիղ նկատեցիր, կրկնեց ուսուցիչը ժպտալով։

Յետոյ շարունակեց. «Ով որ շատ նախադասութիւններ կ՚ունենար գրելու ուրիշներին ծախելու համար՝ կը հնարէր տպագրութիւնը, կամ գուցէ միայն երկաթէ գրիչները։ Այն մարդը որ միշտ միևնոյն գործն է կատարում, անդադար աշխատում է այդ գործը աւելի հեշտացնել ու արդիւնաւոր անել, նա հնարում է զանազան գործիքներ ու մեքենաներ. մեքենաներով մարդս հազար կամ տասը հազար անգամ աւելի արագ է բանում քան ձեռքերով։ Տեսէք, օրինակի համար, առաջ մարդը ինքն էր շալակում բեռները. յետոյ նա ընտելացրեց ձիուն որ երկու կամ երեք անգամ աւելի ծանրութիւն է տանում, ապա հնարուեցաւ սայլը որ տասն անգամ աւելի բեռն է կրում. վերջապէս եկաւ շոգեկառքը որ հազար անգամ աւելի է տանում, այն էլ ամենամեծ արագութեամբ.

— Ի՞նչպէս են կոչվում այն մարդիկը որոնք շինում են շոգեշարժ մեքենաները, հարցրեց մի երեխայ։

— Նոքա մեքենագործ են կոչվում, պատասխանեց ուսուցիչը։

— Մեքենագործ, ասաց Տիգրանը։ Ուրեմն Արշակի մեծ եղբայրը, որ այսքան տարի է մեր գիւղից գնացել է, շոգեշարժ մեքենաներ է շինում։

— Այո՛, բայց ոչ ինքը մենակ։ Մէկը որ սովորել է մաթեմատիկական գիտութիւնները և մեքենաբանութիւնը, յատակագիծն է կազմում. միւսը մեքենան նկարում է թղթի վրայ փոքր ձևով, յետոյ բաժանում են նորան զանազան մասերի և իւրաքանչիւր արհեստաւոր միայն մի կտորն է շինում, այն էլ միշտ միևնոյն կտորը, որպէս զի սովորի լաւ և շուտ շինել. յետոյ ուրիշ մարդիկ գալիս են, որ այդ կտորները իրարու հետ յարմարացնում են և ամբողջ մեքենան դուրս բերում։

— Այդ տեղ էլ նոյնն է լինում ինչ որ մի մեծ կալուածի մէջ, ասաց իւր կողմից Աբրամի հայրը. այն տեղ կայ հովիւ ու հօտաղ, մի կամ աւելի սայլապաններ, հերկողներ, ցանողներ ու հնձողներ և ուրիշ շատ մշակներ, որոնցից ամէն մէկը իւր յատուկ գործն ունի, և այս բոլոր մարդկանց ու կանանց կառավարում է կալուածատէրը կամ իւր գործակալը,

որ կարող է շատ գործ ունենալ, թէև նա ոչ դուքանի մաճն է բռնում, ոչ էլ ուրիշ գործիքի մատենում։

— Այժմ կարո՞ղ ես ասել, Արամ, ասաց ուսուցիչը, թէ ինչի՞ համար սահմանուեցաւ աշխատութեան բաժանումը։

— Որպէս զի ամէն մարդ կարողանայ աւելի լաւ, աւելի արագ և աւելի ժան գնով պատրաստել։»

Մի քանի օրից յետոյ, Արամը առիթ ունեցաւ ցոյց տալու իւր ընկերներին որ օգուտ է քաղել այս խօսակցութիւնից։

Փոխանակութիւն.

Տօնավաճառի օր էր, և գիւղի երեխայքը ազատ էին։ Սմբատը գրպանները վէգերով լցրեց և դուրս եկաւ տանից մի խաղընկեր գտնելու։ Նա պատահում է Արշակին, որ փողոցում կանգնած պտոյտ էր տալիս իւր ֆռիկը։ Սմբատը շատ է հաւանում ֆռիկին և նորա փոխարէն վէգեր է առաջարկում։ բայց Արշակը չէ համաձայնում, որովհետև միայն մի ֆռիկ ունէր։ Սմբատը առաջարկում է նորան

հետզհետէ տասը, տասնհինգ, քսան վէգ, բայց բոլորը զուր եղաւ։ Այդ միջոցին վրայ հասաւ Արամը, որ լսելով իւր ընկերների խօսակցութիւնը ընդունում է Սմբատի առաջարկութիւնը, որովհետև ինքը երեք ֆռիկ ունէր, և երեք երեխաները սկսեցին իրանց ֆռիկները պտոյտ տալ։

Բայց անկարելի էր հանգիստ խաղալ այդ օրը. մարդիկ ու սայլեր անդադար անց ու դարձ էին անում փողոցով, և շուտով Սմբատը, Արշակն ու Արամը ֆռիկները գրպանները դրին և բաղմութեան հետ գնացին մինչև տօնավաճառի տեղը։

Այնտեղ ամէն տեսակ ապրանքներ շարուած էին. ոմանք ծախում էին կօշիկներ, ուրիշները տրեխներ, այստեղ գուլպաներ, այնտեղ դանակներ, ուրիշ տեղ դարձեալ շաքարէ հացեր, արխալուխներ, բահեր, և հազարաւոր ուրիշ բաներ։

Այս տեսակ տեսակ ապրանքները յիշեցրին Արամին իրանց տանը լսած խօսակցութիւնը աշխատութիւնների բաժանման վրայ, և նա խօսք բաց արեց այդ մասին իւր ընկերների հետ։ Սոքա իսկոյն հասկացան որ երբ մարդ աւելի առարկաներ է արտադրում քան որքան իրան հարկաւոր է, փոխանակում է նոցա ու-

րիշ առարկաների հետ որ ինքը չունի կամ դժուարութիւն կը քաշէր արտադրելու։ Զէ՞ որ փոքր ինչ առաջ նոյն պայմանների մէջ փոխանակուել էին վէգերն ու Ֆռիկները։

Բայց ի՞նչ անես որ ոչ ոք չէր համաձայնիլ շաքարէ հաց կամ միրգ տալ նոցա իրանց վէգերի կամ Ֆռիկների փոխարէն։

Ինչի՞։

Հարկաւոր չէր բացատրել նոցա այդ բանը։ Ի՞նչ կ'անէր քաղցրավաճառը կամ մրգավաճառը նոցա խաղալիկներով։

«Ա՛խ, երանի՜ թէ փող ունենայինք։

— Երբ որ կը մեծանանք, փող կը վաստակենք։

— Բայց ինչի՞ կարելի է ամէն բան գնել փողով, ասաց Սմբատը։

— Դորդ, ինչի՞, կրկնեցին միւսները։

— Գնանք հարցնենք մեր ուսուցչին, ասաց մէկը, ահա նա գալիս է։»

Երեխայքը շրջապատեցին իրանց դաստիարակին։

«Պարոն ուսուցիչ, ինչի՞ ամէն բան կարելի է գնել փողով։

— Նախ և առաջ, պատասխանեց ուսուցիչը, ամէն բան չէ կարելի փողով գնել։ Կը

համաձայնէիք ծախել, օրինակի համար, ձեր ականջները։

— Ո՛հ, ոչ, պատասխանեցին երեխայքը միաբերան։

— Ուրեմն միայն այն բանը կարելի է փողով առնել ինչ որ ծախու է։ Եւ ինչի՞ համար այս վաճառականը կամենում է ծախել իւր դանակները։

— Փող ունենալու համար, եղաւ երեխաների պատասխանը։

— Եւ ի՞նչ պիտի անէ նա այդ փողով, արդեօք պիտի ուտի՞։ փորձեցէք ուտելու այս արաստանոցը։

— Նա փողը չի ուտիլ, այլ հաց ու միս կը գնէ նորանով, պատասխանեց Սմբատը։

— Կամ շորեր կ'առնէ, աւելացրեց ուսուցիչը, կամ տան վարձը կը վճարէ, կամ երկաթ և կամ ուրիշ բան կը գնէ։

«Այժմ գուցէ թէ ինքն էլ դեռ չէ իմանում թէ ինչ կը գնէ։ Շատ կարելի է որ նա ամէն տեսակ բաների պէտք ունի, և երբ փող ունենայ, կը մտածէ թէ ինչպէս գործածէ այդ փողը։»

Այդ միջոցին մի քանի անձինք եկան և սկսեցին խօսել ուսուցչի հետ, որ սարսափեցաւ

հեռանալ իւր աշակերտներից։ Գնալիս նա հրաւիրեց երեխաներին որ երեկոյեան մի քանի ընկերների հետ իւր մօտ գան խօսակցութիւնը շարունակելու համար։

Փող.

Երեխայքը նշանակուած ժամին հաւաքուել էին իրանց դասախարակի մօտ։ Նոքա դեռ լաւ չէին ըմբռնել թէ ինչպէս է լինում որ ամէն բան կարելի է փողով առնել։ Ուսուցիչը վերցրեց երկու կտոր չուան և ասաց. «Ի՞նչ պէտք է անել որ իմանանք թէ այս երկու չուաններից ո՞րը աւելի երկար է։

ԵՐԵԽԱՅՔԸ. — Պէտք է չափել նոցա։

— Ինչո՞վ պէտք է չափել։

ԲՈԼՈՐԸ. — Արշինով։»

Չափեցին և գտան որ չուաններից մէկը տասնմէկ արշին երկարութիւն ունէր, իսկ միւսը միայն տասն արշին։

Ուսուցիչը շարունակում է. «Ահա երկու դոյլ մէկը կարճ է ու լայն, միւսը երկայն ու նեղ, ո՞վ կարող է ասել թէ ո՞րը աւելի ջուր կը պարունակէ։»

Երեխայքը զանազան կարծիքներ յայտնելով, հարկ եղաւ դոյլերը չափել։ Վերցրին մի շիշ և շուտով երևեցաւ որ դոյլերից մէկը հինգ շիշ ջուր էր պարունակում և միւսը վեց։

«Գիտէ՞ք այժմ թէ ինչի համար փողով են բան առնում,» հարցրեց ուսուցիչը։

Երեխայքը միմեանց երեսին նայեցան. նոքա դեռ չէին հասկացել։

Ուսուցիչն ասաց. «Ես ձեզ կ՝օգնեմ, սիրելիք։ Ահա մի սեղան և մի աթոռ, սոցանից ո՞ր աւելի թանդ արժէ։ Զգիտէ՞ք, ես ձեզ ասեմ. սեղանը արժէ 4 մանէթ, իսկ աթոռը 1 մանէթ 50 կոպէկ։

Այժմ ասացէ՛ք, ո՞ր աւելի արժէ։

ԵՐԵԽԱՅՔԸ. — Սեղանը։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Եւ ո՞ր քանով։

ԵՐԵԽԱՅՔԸ. — 2 մանէթ և 50 կոպէկով։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Դուք տեսնում էք որ ես մանէթանոցը գործ դրի սեղանի ու աթոռի արժէքը չափելու կամ որոշելու համար։»

Սմբատը այս բացատրութիւնը լսելով՝ ասաց. «Մէկ ֆունտը արժէ 5 կոպէկ, և 5 կոպէկով կարելի է 15 վէրշոկ առնել. ուրեմն այս առաւօտ ես Արամին 5 վէրշոկ աւելի եմ տուել։ Երանի՜ թէ այդ բանը գիտենայի։»

Արամը անհանգիստ էր թվում, նա արդէն վախենում էր որ կը ստիպուի 5 վէգը յետ դարձել։

Ուսուցիչը հանգստացրեց նորան ասելով. «Եթէ փոխանակութիւնը երկու կողմերի ազատ համաձայնութեամբ է լինում, վաւերական է և այլևս չէ կարելի նորա մասին խօսք անել։»

Օրինաւորութիւնը բաւական եղաւ Արամի խիղճը հանգստացնելու, բայց այդ միշտ բաւական չէ. պէտք է ոչ միայն օրէնքի՝ այլև արդարութեան համաձայն վարուիլ։

Այս էլ կայ որ, ինչպէս ուրիշ անգամ կը տեսնենք, մի առարկայի արժէքը յաճախ փոխվում է, և գինը չէ յայտնում թէ առարկան ինչ արժէ ամէն ժամանակ, այլ թէ ինչ արժէ նա գնուելու կամ փոխանակուելու րոպէին։

«Բայց ինչի՞ պղինձը, արծաթը կամ ոսկին գործ են ածում առարկաների արժէքը որոշելու համար,» հարցրեց Արամը։

— Այդ շատ հեշտ է բացատրել, պատասխանեց ուսուցիչը։ Մի ժամանակ ասում էին. այս ինչ բանը արժէ երկու ոչխար, 5 գառը, կամ 2 եղ, 3 կով. բայց այդ շատ անյարմար փող էր, որովհետև չէր կարելի նորան ոչ գրպանը դնել, ոչ էլ մանր կտորների

բաժանել։ Եթէ ոչխարը 2, 3, կամ 8 կտոր բաժանուէր, այդ կտորները չէր կարելի երկար ժամանակ պահպանել. իսկ եթէ ոչխարը ողջ պահուէր, պէտք կը լինէր կերակրել նորան։

«Զնայելով այս անյարմարութեանը, մարդիկ երկար ժամանակ կենդանիներն ու բնական բերքերը փոխի տեղ էին գործ դնում։ Այսպէս, Հոմերոսի դարում առարկաների արժէքը որոշվում էր եզներով, հին Գերմանացւոց մէջ ձիաններով, Ռուսաստանում, մինչև տասներորդ դարը, կզաքիսի մորթով, Դանիայում— ցորենով։ Այսօր իսկ, Պարսկաստանի թափառական ցեղերի մէջ արժէքը որոշվում է ոչխարներով, կամ երբեմն նաև ցորենով, յարդով ու բրդով. իսկ Աֆրիկայի ներսերը նոյն նպատակի համար գործ է ածվում աղը, որ այն կողմերը հաղուագիւտ է և կարաւաններով է բերվում։ Ուրիշ տեղեր էլ կան ուր փողի տեղ մի տեսակ խեցի են գործածում, որին «ջրի» են ասում։ բայց որովհետև այդ խեցիից շատ են գտնում, պէտք է մի պարկ այդ տեսակ փող մի եզ գնելու համար, և այս յարմար չէ։

«Այն ինչ մետաղները այդպիսի քանակութեամբ չեն գտնվում, նոքա երկար ու ծանր աշխատանքով են ստացվում, պահպանվում են

այնքան ժամանակ որքան մարդ կամենայ, և կարելի է բաժանել նոցա մանր կտորների, որոնց արժէքը իրանց կշռի համաչափ կը լինի։

«Հասկանո՞ւմ էք այժմ, հարցրեց ուսուցիչը։

«Այո՛, հասկանում ենք, ասաց Սմբատը. փողով չափում են առարկաների իսկական արժէքը։

— Աւելի լաւ կը լիներ ասել, նկատեց ուսուցիչը, թէ փողով յայտնում են առարկաների իսկական արժէքը, որովհետև արժէքը փոփոխութեան ենթակայ է։ Բայց բառերի վրայ չվիճենք։

— Բացի սորանից, աւելացրեց Արամը, փողը կարելի է պահել մինչև որ մարդ հարկաւորութիւն ունենայ մի բան գնելու։

— Այս էլ կայ որ ամէն մարդ ընդունում է փողը, ասաց ուսուցիչը իւր կարգին, որովհետև փոխանակութիւնները հեշտացնելու լաւ միջոց է. ուրիշ ոչ մի նիւթ չէ կարող նոյն ծառայութիւնը անել, որովհետև փողի նման ոչ ինչ չէ կարող առարկաների իսկական արժէքը որոշել։

Գ՝ին.—Արտադրութեան ծախքերը.

Դուք գիտէք այժմ, շարունակեց ուսուցիչը, որ փողով ամէն տեսակ ապրանք կարելի է առնել, եթէ միայն առնողն ու ծախողը գնի վրայ համաձայնում են։ Բայց ձեզանից ոչ ոք չմտածեց հարցնելու թէ ինչի՛ ապրանքների գինը երբեմն բարձրանում է և երբեմն իջնում։»

Երեխայքը, ճշմարիտ է, այդ բանի վրայ չէին մտածել բայց դժուար չէր նոցա հասկանալ, որ մի կով աւելի թանգ պիտի արժէր քան մի հորթ և մի սեղան աւելի թանգ քան մի ֆռիկ։

Բայց ինչի՞ համար։

Երեխայքը նկատեցին նախ՝ որ այդ առարկաներից մէկը միւսից մեծ է, և երկրորդ որ աւելի ժամանակ ու աշխատութիւն է հարկաւոր մի սեղան շինելու քան մի ֆռիկ։

«Եւ աւելի փայտ, աւելացրեց ատաղձագործի որդին, և փայտը այժմ թանգ է։

— Տեսնում էք, ասաց ուսուցիչը, թէ սեղան շինելու համար հարկաւոր է փայտ որ փող արժէ, հարկաւոր է նոյնպէս մի քանի ժամանակ աշխատել, և այդ միջոցում ատաղ-

ձագոցը ուտում է, խմում է, շորեր է մաշում, և այս բոլոր բաները նա չէ կարող ձեռք բերել առանց փող մխսելու։

«Նոյնը պէտք է հասկանալ ուրիշ ամէն առարկաների համար, այսինքն թէ ոչինչ չէ կարելի արտադրել առանց ծախքեր անելու. կան առարկաներ որոնց արտադրութիւնը քիչ ծախք է պահանջում, կան էլ՝ որոնք շատ ծախք են պահանջում։ Օրինակի համար, մի թի կամ փայտե գդալներ որ ձեռքով են շինվում՝ պակաս արժեն քան մի ոչխար, որովհետև քիչ փայտ է հարկաւոր մի գդալ շինելու համար և մի օրում կարելի է շատ գդալներ շինել, մինչդեռ երկու կամ երեք տարի է հարկաւոր և շատ խոտ մի ոչխար մեծացնելու համար։ Նոյնպէս եղը աւելի թանգ է քան ոչխարը, որովհետև աւելի խոտ է սպառում մինչև մեծանալը և աւելի երկար ժամանակ է կերակրում իւր տիրոջը կամ տէրերին։ Եւ եթէ համեմատելու լինինք այս փոքր գրքոյկը այն մեծ գրքի հետ, իսկոյն կը հասկանանք թէ ինչի մէկը 1 մանէթ արժէ, իսկ միւսը միայն 25 կոպէկ։

«Ուրեմն, երբ վաճառանոցում ապրանքներ ենք տեսնում և կամենում ենք մեզ ու մեզ նոցա գինը որոշել, սկսում ենք նախ հաշուել

արտադրութեան ծախքերը, այսինքն թէ այդ ապրանքները օրքան են արժել կամ, ինչպէս մեղանում ասում են, ինչ են նստել ծախողին։

Ինչի՞ համար։

ԱՐԱՄ. — Որովհետև ոչ ոք չի համաձայնիլ իւր ապրանքը նստած գնից պակաս ծախել։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Ի հարկէ այդպէս է. եթէ ծախողը իւր ապրանքը արժած գնովը տայ, կը վնասուի և չէ կարող իւր առուտուրը երկար շարունակել։ Այս պատճառով, մի ապրանք գնելիս՝ պէտք է ամէնից առաջ աշխատել նոյն ապրանքի արտադրութեան ծախքերը գնահատելու։

Գին. — Առաջարկ և պահանջ.

Մի հարևան, որ կամացուկ ներս էր մտել մինչ ուսուցիչը այս բացատրութիւնները տալիս էր, խառնուեցաւ խօսակցութեան մէջ և ասաց. «Բայց ապրանքը իւր արժած գնով չէ կարելի ծախել. ի՞նչպէս էք կամենում որ ես առանց վաստակի բան ծախեմ։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Անշուշտ, պատասխանեց ուսուցիչը, և ես կամենում էի հէնց այդտեղ

դալ։ Ոչ ոք, արդարև, չէ բաւականում, եթէ միայն կարող է, իւր արած ծախքերը հանելով։ Եթէ մէկը մի օգտակար բան է արտադրել, վաստակը օրինաւոր է. բանն այն է միայն թէ որքան պէտք է վաստակել։

ՀԱՐԵԻԱՆԸ. — Ամէն մարդ աշխատում է որքան կարելի է աւելի վաստակել։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Այո՛, բայց պատուաւոր կերպով։

ՀԱՐԵԻԱՆԸ. — Այդ ինքնըստինքեան հասկանալի է։ Երբ ես բան եմ ծախում, պէտք է փոքր ինչ իմ կողմը քաշեմ, քանի որ գնողն էլ իւր կողմն է քաշում։ Իմ կրած նեղութիւնը ապրանքը արտադրելու և ծախելու համար մի որոշ, հաստատուն գին չունի, և բնական է որ ես ցանկամ իմ աշխատութիւնը լաւ վարձատրուած տեսնել քան վատ։ Եթէ օրէնը 3 մանէթ վաստակելու տեղ՝ կարող եմ 4 կամ 5 մանէթ վաստակել, այդ ինձ համար աւելի լաւ է. միայն թէ գնողը աշխատում է որքան կարելի է քիչ տալ, նա միշտ կամենում է 4 արասու տեղ 3 արասի վճարել։ Եթէ ապրանքը քիչ է գտնվում, նա ստիպուած է իմ առաջարկած գինը վճարել՝ եթէ անպատճառ ուզում է այդ ապրանքն առնել. իսկ եթէ նոյն ապրանքից

շատ կայ, ես ստիպվում եմ զիջողութիւն անել, ապա թէ ոչ նա ուրիշի մօտ կ՝երթայ, և գտնվում են միշտ վաճառականներ որոնք հարկաւորութիւն ունին ծախելու, և որոնք կը համաձայնին պակաս գնով տալ իրանց ապրանքը։ Բայց այդ ինձ ձեռնտու չէր լինիլ որովհետև իմ ապրանքը կը մնար. ուստի ես շտապում եմ զիջողութիւն անել քանի որ դեռ գնողը իմ խանութից չէ հեռացել։

— Ահա այս են անուանում առաջարկ և պահանջ,» ասաց ուսուցիչը։

Արամը պատմեց այն ժամանակ թէ նոյն առաւօտ մի խնձոր ծախող կին առաջարկում էր տասը խնձորը տալ երկու կոպէկով։ Եւ որովհետև ինքը առնելու դիտաւորութիւն ունէր, մօտեցաւ կնոջը և հարցրեց. «Ի՞նչ արժեն խնձորները։» Կինը պատասխանեց. «Տասը հատը 3 կոպէկ.» բայց երբ Արամը չհամաձայնեցաւ, կինը խնձորները 2 կոպէկով տուաւ։ Ուրեմն նա խնձորները պակաս գնով տուաւ, որովհետև առնողները քիչ էին։

«Եթէ քո ընկերներից մի քանիսը քեզ հետ միասին եկած լինէին խնձոր գնելու, աւելացրեց հարևանը, կինը անշուշտ 3 կոպէկից պակաս չէր առնիլ, որովհետև ապրանքի պա-

հանջը շատ կը լինէր։ Իսկ եթէ ոչ ոք եկած չլինէր, հաւանական է որ նա վերջը վերջը առաջարկէր խնձորները 1 կոպէկով տալու։

— Սորանից երևում է, կրկնեց ուսուցիչը, որ ապրանքի գինը բարձրանում է երբ հաղուագիւտ է, և իջնում է երբ առատութեամբ է գտնվում։ Երբ վաճառման գինը այնքան պակասում է որ արտադրութեան ծախքերից ցած է իջնում, ոչ ոք այլևս չէ կամենում այդ ապրանքը պատրաստել, որովհետև ոչ ոք չէ կամենում վնասով աշխատել։ Անկարելի կը լինէր այսպիսի մի առուտուր երկար շարունակել առանց աղքատանալու։

— Իսկ եթէ ապրանքի գինը շատ բարձրանար, ի՞նչ կը լինէր, հարցրեց Սմբատը։

— Եւ եթէ մի ֆունտը 5 մանէթ արժէր, հարցրեց իւր կարգին ուսուցիչը։

— Չէի կարողանալ գնել, պատասխանեց Սմբատը։

— Շատ լաւ ասացիր, նկատեց ուսուցիչը, հէնց այդպէս է պատահում միշտ։ Երբ ապրանքը շատ է թանգանում, գնողների թիւը, այսինքն պահանջը, պակասում է և գները սկսում են իջնել։

«Առնենք մի օրինակ.

«Ենթադրենք թէ խնձոր ծախող կինը հարիւր խնձոր ունի և առաջարկում է ծախել 10 հատը 2 կոպէկով. եթէ քսան հոգի են գալիս խնձոր առնելու, գինը իսկոյն բարձրանում է, որովհետև իսկոյն երևում է որ ամէնին խնձոր չի հասնիլ։ Իրանք առնողները սկսում են գինը աւելացնել մէկը առաջարկում է 3 կոպէկ, միւսը 4. այս տեսնելով ծախողը պահանջում է 5 կոպէկ։ Բայց այս գնով միայն վեց հոգի են ցանկանում գնել, և ծախողին մնում է էլի քառասուն խնձոր. կը նշանակէ այս դէպքում նա աւելի խնձոր կ՝ունենայ քան որքան կարող էր ծախել։ Այն ժամանակ անշուշտ գինը կ՝իջնի մինչև այն կէտը որ ծախողն էլ առնողներն էլ գոհ լինին։»

«Իսկ եթէ մի քանի օր շարունակ խնձորների գինը բարձր մնայ և ուրիշ հարևան գիւղեր այդ իմանան, իսկոյն ամէն կողմից խընձոր կը բերեն, և գինը առաջուան պէս կ՝իջնի։

Գին. — Ո՞վ աւելի ազդեցութիւն ունի գնի վրայ, գնողը թէ ծախողը.

Խօսակցութիւնը շատ էր հետաքրքրում երեխաներին։ Նոցանից մէկը կամեցաւ իմանալ թէ արդեօք ո՞վ աւելի յաջող ստիպուած է զիջողութիւն անել, ծախողը թէ գնողը։

Հարևանը, որ առուտուրի տէր մարդ էր, յայտնեց թէ իւր կարծիքով ծախողը աւելի յաջող զիջողութիւն է անում։

«Անշուշտ այդպէս էլ պէտք է լինի, ասաց ուսուցիչը։ Ի՞նչ ես կարծում, Սմբատ, միթէ արհեստաւորը զուարճանալու և ժամանակ անց կացնելու համար է աշխատում առաւօտից մինչև երեկոյ, կամ վաճառականը ամբողջ օրը բաց է պահում իւր խանութը։

ՍՄԲԱՏ. — Ոչ, այլ փող շահելու համար, որպէս զի թէ իրանք կերակրուին և թէ իրանց ընտանիքը կերակրեն։

— Հապա գնողը, շարունակեց ուսուցիչը, միթէ վաճառականին զուարճութիւն պատճառելու համար է այս կամ այն բանը գնում. թող Արամը պատասխանէ։

ԱՐԱՄ. — Ամենևին ոչ, այլ նա գնում է այն ինչ որ իրան հարկաւոր է։

— Նա գնում է նոյնպէս զուարճութեան առարկաներ, աւելացրեց Տիգրանը։ (Նա մտածում էր այն խաղալիկների վրայ որ նոյն օրը հայրը գնել էր իւր համար։)

— Շատ ուղիղ է, ասաց ուսուցիչը. կասկած չկայ որ ամէն մարդ ապրանք առնելիս՝ իւր սեփական շահը աչքի առաջ ունի և ոչ ծախողին զուարճութիւն պատճառելու ցանկութիւն։ Իրօք, երբ մի ապրանքի համար սակարկութիւն է լինում (առուտուր են անում), նոյն է թէ այսպիսի մի խօսակցութիւն տեղի ունենար գնողի ու ծախողի մէջ։

ԳՆՈՂ. — Ո՞ւրքան արժէ այս ինչ բանը։

ԾԱԽՈՂ. — 5 մանէթ։

ԳՆՈՂ. — Ինձ համար 5 մանէթ չարժէ։

ԾԱԽՈՂ. — Բայց ես նորա վրայ մի օր եմ աշխատել և բացի դորանից մի քանի մանէթ էլ մսխել եմ նախնական նիւթերի համար. ապա ուրեմն 5 մանէթ պահանջելով շատ թոյլ վարձատրութիւն կը մնայ ինձ, դորանից աւելի պակասեցնել չեմ կարող։

ԳՆՈՂ. — Իմ յանցանքը չէ եթէ ձեր արտադրութեան ծախքերը խիստ մեծ են։ Եթէ

դուք այնքան անխոհեմ ու անփորձ եղած լինէիք որ տասն օր աշխատած և քսան մանէթի նախնական նիւթեր գործածած լինէիք, իսկ ձեր աշխատութեան արդիւնքը միայն 1 մանէթ արժէր ինձ համար, հարկաւ միայն 1 մանէթ կը տայի ձեզ, որքան էլ մեծ լինէին ձեր ծառայութեան ծախքերը։

ԾԱԽՈՂ. — Բայց արդար բան չէ որ ես ձրի աշխատիմ։

ԳՆՈՂ. — Եթէ դուք անօգուտ տեղը ուզում էք աշխատել այդ ձեր գիտնալու բանն է։ Ես ոչ թէ ձեր գործ դրած ժամանակի, ձեր նեղութեան և ոչ իսկ ձեր աշխատութեան համար եմ վճարում ձեզ, այլ ձեր մատուցած ծառայութեան և իմ ստացած օգտակարութեան համար։ Եթէ ձեզ մէկ տարի ժամանակ հարկաւոր լինէր շինելու մի առարկայ որ ուրիշից կարող եմ 1 կոպէկով ստանալ և նոյնքան լաւ շինած, և եթէ այդ առարկան ինձ համար աւելի չարժենար, մի՞թէ ես 1000 մանէթ պիտի տայի ձեզ ձեր գործ դրած աշխատութեան համար։ Եւ եթէ մի բոլորովին անօգուտ բան շինէիք, միթէ նորա համար էլ պէտք է փող վճարէի ձեզ. եթէ այդպէս անէի, աշխարհի բոլոր գանձերը բաւական չէին լինիլ ինձ։

ԾԱԽՈՂ. — Տեսնում եմ որ պէտք է ձեր կամքը կատարել. որքան արժէ այս բանը ձեզ համար։

ԳՆՈՂ. — Շատ շատ 4 մանէթ. եթէ աւելի թանգ է՝ չեմ առնիլ, առանց դորան էլ կարող եմ դիմանալ։

ԾԱԽՈՂ. — Առէք։

«Աւելորդ է կրկնել շարունակեց ուսուցիչը, որ այս խօսակցութիւնը երևակայական է. ոչ ոք երբէք այս կերպով չէ խօսում, բայց ճիշդ այսպէս մտածում ու զգում են։ Սակայն ծախողն էլ իւր կողմից զիջողութիւն չէ առնում առանց սառաջուց պէտք եղած տեղեկութիւնները հաւաքելու. նա պէտք է համոզուի որ բոլոր գնողները կը մերժեն իւր նշանակած գներով ապրանքներն առնելու։

«Դիցուք այժմ թէ գնողը ուզում է մի ապրանք առնել որ իրան շատ հարկաւոր է, երևակայական խօսակցութիւնը այսպէս կը փոխուէր. ասենք թէ խօսքը տաք վերմակի վրայ է։

ԳՆՈՂ. — Ի՞նչպէս կարող էք 10 մանէթ պահանջել մի վերմակի համար, մինչդեռ 7 մանէթը բաւական լաւ գին է ձեր ծախքը և աշխատանքը վարձատրելու համար։

ԾԱԽՈՂ. — Ես 10 մանէթ եմ պահան-

ջում, որովհետև ձեզ մատուցած ծառայութիւնս այս ցուրտ ժամանակ՝ մեծ է, և ուրիշները յօժարութեամբ վճարում են այս գումարը վերմակի համար. դուք ինքներդ էլ վերմակը 10 մանէթից լաւ էք համարում:

ԳՆՈՂ. — Եթէ ձեր ասած գնից էք ուզում ոչինչ պակասեցնել, ահա 10 մանէթ:

ԱՐՏԱՇԷՍ. — Միթէ անիրաւութիւն չէ՞ ծախողի կողմից այդքան փող պահանջել մի վերմակի համար:

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Զեղծմունքը միշտ պարսաւելի է. ծախողը չպէտք է օգուտ քաղէ ապրանքի սակաւութիւնից գները չափազանց շատ բարձրացնելու համար, բայց և գնողը չպէտք է օգուտ քաղէ ապրանքի առատութիւնից գները շատ կոտրելու համար. այլ երկու կողմից էլ պէտք է չափաւորութիւն լինի:

ՀԱՐԵՒԱՆԸ. — Պէտք է ասել նոյնպէս որ ապրանքը յաճախ սակաւ է լինում արտադրութեան թանգ լինելու պատճառով:

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Ընդհանրապէս խօսելով, արտադրողը աշխատում է սպառողի համար. Եթէ նա աչքի առաջ ունեցել է սպառողի պիտոյքը, իւր ապրանքը ծախվում է և աշխատութիւնը վարձատրվում. իսկ եթէ սխալուել

է, պատժվում է՝ իւր արդիւնքները կորուստով ծախելով: Եթէ կօշկակարը մի զոյգ կարմիր կօշիկ կարէր ինձ համար միայն այն պատճառով որ նա կարմիր կօշիկները սէրից աւելի գեղեցիկ է համարում, միթէ ես պարտաւո՞ր պիտի լինէի այդ կօշիկները ընդունել, ամենևին ոչ:

«Ուրեմն սպառողն է իսկապէս որոշում ապրանքների արժէքը, որովհետև նա է փող վճարում նոցա համար, և հէնց այս պատճառով նա աւելի մեծ ազդեցութիւն ունի գների վրայ քան արտադրողը:»

Ոսկի և հարստութիւն.

Մի ուրիշ օր դարձեալ խօսք բացուեցաւ փողի վրայ, և ուսուցիչը պատմեց հետևեալը.

«Մեզանից շատ առաջ մի զօրաւոր թագաւոր, բազմաթիւ զօրքով ճանապարհ ընկաւ գնալու հեռաւոր երկրներ նուաճելու համար. նա հասաւ մի փոքրիկ ու անծանօթ երկիր որի անունն անգամ չգիտէր: Այս երկրի իշխանը նորա առաջ բերեց ոսկէ հաց, ոսկէ միս և ոսկէ պտուղներ:

— Միթէ ոսկի՞ են ուտում ձեզանում, հարցրեց թագաւորը։

— Ոչ, պատասխանեց իշխանը, բայց սովորական հայ, միս ու պտուղներ անշուշտ ձեր երկրումն էլ կայ, և հարկաւորութիւն չունէիք այդքան հեռու տեղից գալ այստեղ ուտելու համար։»

«Ի՞նչ է այս պատմութեան բարոյականութիւնը։»

Բոլոր երեխայքը աղաղակեցին միաբերան.

«Այն՝ որ ոսկին չէ ուտվում։

— Անտարակոյս, և հագստեղէն էլ չեն շինում ոսկուց, ոչ էլ տներ։ Հապա ինչի՞ ոսկին արժէք ունի։

— Որովհետև նա գործ է ածվում դեղեցիկ զարդեր շինելու, ասաց մէկը։

— Եւ փող կտրելու, աւելացրեց մի ուրիշը։

— Եւ փողով, վրայ բերեց ուսուցիչը, կարելի է գնել ամէն բան որ մարդուս հարկաւոր է։ Բայց եթէ մենակ գտնուէիք մի կղզում ինչպէս Որբինզօնը, և նորա նման մի մեծ կտոր ոսկու հանդիպէիք, դէցուք 100,000 մանէթ արժողութեամբ, ի՞նչ կանէիք այդ ոսկով։»

Երեխայքը չգիտէին թէ ի՞նչ պատասխան տան։

«Դուք Որբինզօնի պէս կ՝անէիք, շարունակեց ուսուցիչը, անտարբերութեամբ կ՝անցնէիք ոսկու մօտով ասելով. Ա՛խ, երանի՞ թէ երկաթ լինէր։ Երկաթը գոնեա մի բանի պէտք կը գար. նորանից կարելի կը լինէր կացիններ, դանակներ, բեւեռներ շինել։ Դուք հասկանում էք ուրեմն, և իմ ասածը միտներդ կը պահէք, թէ ոսկին ինքն ըստ ինքեան շատ քիչ արժէք ունի, նա ոչ հարկաւոր է, ոչ օգտակար, այլ միայն զուարճալի։ Մարդիկ միայն այն պատճառով ոսկու ետևից են լինում որ նորանով օգտակար բաներ ձեռք բերեն, որովհետև ոսկուց, ինչպէս և արծաթից ու պղնձից, փող են կտրում, և փողով կարելի է ամէն բան ձեռք բերել։

«Ենթադրենք թէ մի մարդ այնքան ոսկի ունի որ այս սենեակը կարելի էր լցնել, բայց հաղիւ թէ ցամաք հաց կամ պտուղներ կարող է ձեռք բերել կերակրուելու համար, թէ նորա բոլոր հագուստը մի հասարակ մորթ է կոպիտ ձևով պատրաստուած, և թէ նա պառկում է մի քարայրի մէջ չոր տերևների վրայ, միով բանիւ վայրենիի կեանք է վարում. ենթադրեցէք այժմ թէ մի ուրիշ մարդ մի ինչին կտոր ոսկի չունի, բայց ամառը բնակում է զով

տան մէջ և ձմեռը տաք բնակարանում, լաւ անկողին ունի, յարմար հագուստներ և փոփոխական սնունդ, թողնենք ուրիշ զուարճութիւնները. այս երկու մարդիկներից որը աւելի հարուստ է, նա որ ոսկի՞ ունի թէ նա որ չունի։

Երեխայքը հասկացան թէ ոսկին ինքն ըստ ինքեան հարստութիւն չլինելով, վայրենին չէր կարող աւելի հարուստ համարուիլ։ Նոքա հասկացան թէ մի մարդ որ ունի տուն, արտ, հագստեղէն, սնունդ և ուրիշ հարկաւոր բաներ, ոսկու պէտք չունի այդ բոլոր բաները գնելու համար։ Նոքա հասկացան նոյնպէս թէ ոսկին լոկ մի յարմար ապրանք է, որ լաւ է պահպանվում, ինքը փոքր է բայց մեծ արժէք ունի, կարող է փոքր մասերի բաժանուիլ առանց իւր արժէքից մի բան կորցնելու (երբ մի շէշ կոտրվում է, կտորները էլ ոչինչ արժէք չունին), միով բանիւ, թէ ոսկին, ինչպէս և փողը, բուն հարստութիւնը չէ, այլ մի միջոց ձեռք բերելու այն բոլորը որ կազմում է հարստութիւնը։

Թղթադրամ։

Մի երեկոյ ուսուցիչը մնաւ դիւղի Տանուտէրի մօտ այն ժամանակ երբ սա ցոյց էր տալիս իւր երեխաներին մի հատ 100 մանէթանոց թղթադրամ, որ քաղաքից նոր էր բերել։ այդ առաջին 100 մանէթանոցն էր որ նոքա տեսնում էին։

— Արդեօք ուրիշ երկրներում էլ կա՞ն այդպիսի մեծ արժողութեամբ թուղթ փողեր, հարցրեց դիւղացիներից մէկը։

— Այո՛, շատ երկրներում կայ, պատասխանեց ուսուցիչը։

— Միթէ ամէն մարդ կարո՞ղ է փող կըտրել, հարցրեց Սմբատը։

— Բաւական չէ, պատասխանեց այն կողմից Տանուտէրը, մի կտոր քառակուսի թղթի վրայ տպագրել փող բառը և մօտը մի թուանշան աւելացնել, որ փող լինի կամ թղթադրամ։ պէտք է որ ամէն մարդ ընդունի այդ թուղթը մի պարտքի կամ ապրանքի դիմաց։

— Միայն տէրութիւնը արտօնութիւն ունի փող կտրելու, ասաց ուսուցիչը։ Երբ նա չէ կարող ոսկի, արծաթ ու պղինձ փող կտրել,

թուղթ փող է շինում. բայց այդ մի պարաք է որ նա յանձն է առնում ժողովրդի առաջ. նոյնն է թէ ասէր. Առէք առ այժմ թուղթը, ես ձեզ դորա փոխանակ լաւ փող, այսինքն ոսկի ու արծաթ կը վճարեմ, հէնց որ հնար ունենամ:

ՅԱԿՈԲ ԳԻԻՂԱՅԻՆ. — Ո՞ւմն է ասում տէրութիւնը որ թուղթ փողն ընդունի:

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Իւր պարտատէրներին: Երբ տէրութիւնը ծախքեր ունի անելու և փող չունի, նա վճարում է թղթով որին թղթադրամ են ասում: Այդպիսի ժամանակ ասում են թէ տէրութիւնը թղթադրամ է դուրս տալիս:

ՏԻԳՐԱՆ. — Եւ ի՞նչպէս է փող վճարում նա իւր դուրս տուած թղթի տեղ:

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Զանազան եղանակներով: Օրինակի համար, նա ինքը ոսկու ու արծաթի տեղ ընդունում է այն թուղթը որ դուրս է տուել, այսինքն իրաւունք է տալիս ժողովրդին թղթադրամով վճարելու իւր հարկերը: Եթէ կառավարութիւնը ոչնչացնում է (այրում է) տէրութեան գանձարանը մնած թղթադրամի մի մասը, այդ նոյնն է թէ ոսկի կամ արծաթ վճարեր նորա տեղը, որովհետև

ոչնչացած թուղթը այլևս ժողովրդի ձեռքումը չէ կամ, ինչպէս որ ասում են, շրջաբերութեան [1]) մէջ չէ:

«Տէրութիւնը կարող է նոյնպէս ժողովրդին ասել որ թղթադրամը իրան բերեն՝ խոստանալով նորա տեղ ոսկի և արծաթ վճարել: Ուրիշ միջոցներ էլ կան թուղթը շրջաբերութիւնից քաշելու:

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Ես չեմ սիրում թղթադրամը, որովհետև միշտ վախենում եմ որ նորա արժէքը չպակասի:

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Թղթադրամի արժէքը պակասում է երբ շրջաբերութեան մէջ շատ է լինում: Որքան տէրութիւնը աւելի թուղթ է դուրս տալիս, այնքան աւելի նա պարաքի տակ է ընկնում, շուտով ժողովուրդը վստահութիւնը կորցնում է, նա աւելի լաւ է համարում ոսկի և արծաթ ունենալ, և եթէ օրէնքը թոյլ տար՝ բոլորովին կը մերժէր թուղթն ընդունելու. բայց բանն այն է որ տէրութեան դուրս թողած թղթադրամը, միշտ բռնի ընթացք ունի, այսինքն թէ ամէն մարդ սիրուած է թուղթն ընդունելու և իրաւունք չունի նորա տեղ ոսկի կամ արծաթ պահանջել:

[1]) օբրաշչենիէ.

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Այս էլ կայ որ օտար երկրներում, ինչպէս ասում են, ոսկին ուրախութեամբ առնում են, իսկ թուղթը շատ դժուարութեամբ են ընդունում, և այս դժուարացնում է առուտուրը։

ՈՒՍՈՒՑԻՉԸ.—Թղթադրամի ամենամեծ անյարմարութիւնն այն է որ գները բարձրացնում է։

ՏԻԳՐԱՆ. — Այդ ի՞նչպէս։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Երբ 25 մանէթանոց թղթադրամը 20 մանէթի է իջնում, այն ժամանակ 25 մանէթ ոսկու կամ արծաթի համար 30 մանէթ թղթադրամ են պահանջում։ Սորա համեմատ և վաճառականը 30 մանէթ կը պահանջէ մի ապրանքի համար որ ուրիշ ժամանակ 25 մանէթով կը տար։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Նա հարկադրուած կը լինի այդ անելու եթէ իւր ապրանքը վաճարելու համար՝ ստիպուած է եղել 30 մանէթով 25 մանէթի ոսկի գնել։»

Պարտամուրհակ. — Բանք.

«Ես լսել եմ մեր վաճառականներից, շարունակեց Տանուտէրը, որ մի քանի երկրներում, Ֆրանսիայում և Անգլիայում, թղթա-

դրամը և ոսկին նոյն արժէքն ունին, և ուրեմն թղթադրամի դինը չէ պակասում։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Պատճառն այն է որ այն երկրներում այդ թղթերը միայն մասնաւոր բանքերն են դուրս տալիս և ոչ կառավարութիւնը։

— Բայց ի՞նչ բան է բանքը, հարցրին երեխայքը։

— Կ՚աշխատիմ հասկացնել ձեզ, եթէ միայն փոքր ինչ համբերութիւն ունենաք ինձ լսելու, ասաց ուսուցիչը։

«Առնենք օրինակի համար հացաթուխին։ Ինչո՞վ է շինում նա հացը։

ԵՐԵԽԱՑԻՔԸ, Բոլորը գոչին. — Ալիւրով։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Բայց ո՞ր տեղից է առնում նա ալիւրը։

ԵՐԵԽԱՑԻՔԸ. —Ջաղացպանից է գնում։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Այդպէս է, միայն բոլորդ միասին մի՛ պատասխանէք։ Իսկ ջաղացպանը ո՞ր տեղից է ստանում ալիւրը, Արտաշէս։

ԱՐՏԱՇԷՍ. — Նա աղում է ցորենի հատիկները որ գնել է հողագործից։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Մի՞թէ հացաթուխը ձրի՞ է ստանում ալիւրը։

ԼԵՒՈՆ. — Ո՛չ, փողով գնում է։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Բայց եթէ նա իւր արկղումը փող չունի, ի՞նչպէս կը վճարէ։

ՅԱԿՈԲ ԳԻՒՂԱՅԻՆ. — Նա տալիս է մի պարտամուրհակ։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Միշտ պարտամուրհակ չէ տալիս, այլ երբեմն ասում է ջաղացպանին. Այժմ փող չունիմ, բայց մի քանի օրից յետոյ, երբ ձեզանից առած ալիւրից թխած հացը ծախեմ, կը վճարեմ ձեզ։ Եթէ ջաղացպանը համաձայն է, էլ ի՞նչ խօսք. բայց ջաղացպանը կարող է փողի հարկաւորութիւն ունենալ նոր ցորեն առնելու համար, մանաւանդ եթէ հացաթուխին ծախած ալիւրի քանակութիւնը շատ մեծ է։ Այն ժամանակ ջաղացպանը պարտամուրհակ է ուզում, այսինքն մի գրաւոր խոստում որով հացաթուխը պարտաւորվում է որոշեալ գումարը պայմանադրած ժամանակին վճարելու։

— Ի՞նչ կ՝անէ ջաղացպանը այդ պարտամուրհակով։

— Նա կարող է գնալ հողագործին ասել. Տուէք ինձ 100 մանէթի ցորեն, ահա հացաթուխի պարտամուրհակը, նա կը վճարէ ձեզ։

— Կարո՞ղ է նա այդպիսի բան առաջարկել։

ԱՐՏԱՇԷՍ. — Կարծեմ թէ կարող է։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Բայց եթէ նա այդպիսի մի պարտամուրհակով ինձ մօտ գայ, կը տեսնեմ նախ թէ ի՞նչ մարդ է հացաթուխը, որովհետև ես ամէն մարդու վրայ վստահութիւն չունիմ, քանի՞ ու քանի՞ անգամ խաբել են ինձ։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Այդ բաւական չէ։ Դուք կարող էք համարել թէ հացաթուխը կարող է վճարել և իւր պարտքը ճշդութեամբ կը հատուցանէ, և սակայն մուրհակը կը մերժէք ընդունելու։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Ի հարկէ, եթէ ես անմիջապէս փողի հարկաւորութիւն ունենամ, իսկ մուրհակը մէկ կամ երկու ամսից յետոյ վճարելի լինի։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Մէկ մտածեցէք, սիրելի հարևան, ուրիշ հանգամանք էլ կարող է լինել որ արգելք լինի գործի գլուխ գալուն։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Անշուշտ, եթէ, օրինակի համար, պարտամուրհակը 100 մանէթի է և ես միայն 75 մանէթի ցորեն ունենամ ծախու, գործը գլուխ չի գալ։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Համառօտենք ուրեմն. հացաթուխի պարտամուրհակը ընթացիկ չէ (այսինքն թէ ամէն մարդ չէ ընդունում նորա

մուրհակը), նախ՝ որովհետև յայտնի չէ թէ պարտապանը կարող է վճարել. երկրորդ, որովհետև հատուցման ժամանակը շատ ուշ է. երրորդ, որովհետև մուրհակի գումարը ապրանքի արժէքին հաւասար չէ։

«Ի՞նչ է անում ուրեմն ջաղացպանը։ Նա գնում է մի սեղանաւորի (զարաֆի) մօտ, այսինքն այնպիսի մարդու մօտ որ պարտամուրհակներ առնում և փող է տալիս, և ահա այս առուտուրին բանք են ասում։ Եթէ սեղանաւորը վստահութիւն ունի ջաղացպանի վրայ, մուրհակը կ՚ընդունի և փողը կը հատուցանէ՝ մի փոքրիկ գումար իւր համար պահելով իբրև տոկոս. և ահա այդ գործողութեանը ասում են մուրհակը զեղչել։ Սեղանաւորը սպասում է մինչև պարտամուրհակի հատուցման ժամանակը լրանայ, և այդ մուրհակը ներկայացնում է հացաթուխին, որից լրիւ ստանում է իւր փողը։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Մեծ քաղաքներում տեսակ տեսակ բանքեր կան։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Հէնց այդտեղ էի ուզում դալ։ Կան մանաւոր բանքեր որ մի մարդու են պատկանում, կան էլ որ շատ անձանց բաժանորդագրութեամբ են հիմնվում։ Շատ ան-

ձինք ընկերանում են բանքի հիմնական դրամագլուխը կազմելու համար, որ երբեմն միլիոնների է հասնում։ Բանքի գործերը կառավարում են մի կառավարիչ իւր օգնականներով, որոնց ընկերութեան անդամներն են ընտրում։ Կայ և մի խորհուրդ բանքի գործողութիւնների վրայ հսկող, որի անդամները ընկերութիւնը իւր միջից ընտրում է։ Այս տեսակ բանքերը հարկաւ ընդարձակ գործեր են կատարում, մեծ գումարներ փոխ են տալիս, շատ մուրհակներ են զեղչում։ Այստեղ կարող է դալ և մեր հացաթուխի պարտամուրհակը։ Տեսնենք այժմ արդեօք մտաբերո՞ւմ էք թէ ինչ ճանապարհ կարող է անել այդ մուրհակը։

ԱՐՏԱՇԵՍ. — Հացաթուխը պարտամուրհակը տուել է ջաղացպանին, որ ներկայացնում է նորան սեղանաւորին կամ բանքի կառավարութեանը։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Լաւ։ Հացաթուխը խոստանում է վճարել, և ստորագրում է մուրհակը. ջաղացպանը երաշխաւոր է կանգնում հացաթուխի համար, և իւր անունը ստորագրում է մուրհակի ետևի կողմը, որովհետև բանքը կամենում է ապահով լինել որ իւր փողը չի կորչիլ ուստի և մուրհակը ընդունե-

լու համար դոնէ երկու ստորագրութիւն է պահանջում: Այսպէսով մուրհակը ներկայացնում է բանքի վարչութեանը, որ խորհրդի հաւանութիւնը առնելուց յետոյ՝ փողը վճարում է ջաղացպանին և մուրհակը պահում է մինչև որ հատուցման ժամանակը դայ: Եթէ ժամանակին հայաթուխը փողը չհատուցանէ, անքը այդ փողը ստանում է ջաղացպանից, որ այդպէսով իւր անզգուշութեան համար պատժվում է:

«Եւրոպայի շատ երկրներում կան բանքեր որոնք արտօնութիւն ունին փողի տեղ իրանց դուրս տուած տոմսակներով վճարել. այդ տոմսակները բոլորովին մեր թղթադրամի նման են, այն զանազանութեամբ միայն որ բանքերը պարտաւոր են ոսկով վճարել երբ ներկայացնեն նոցա իրանց տոմսակները, և բացի սորանից, ամէն մարդ պարտաւոր չէ ընդունել նոցա, որովհետև կառավարութիւնը բռնի ընթացք չէ տալիս նոցա: Այնտեղ այդ տոմսակները ընդունվում են միայն նորա համար որ աւելի յարմար են շրջաբերութեան համար:»

Վարկ.

Խօսակցութիւնը շարունակուելով, Տանուտէրը առիթ ունեցաւ ասելու թէ ինքը չէ սիրում վարկով (նիսիա) ապրանք ծախել սպառողին և թէ՝ եթէ վարկը յաճախ օգտակար և մինչև անգամ հարկաւոր է արտադրողի համար, սպառողի համար վտանգաւոր ու վնասակար է:

Երեխայքը լաւ էին հասկացել թէ ինչ է նշանակում վարկով ծախել (ապրանքը իսկոյն տալ և փողի համար սպասել), բայց չէին հասկանում թէ ինչի՛ վարկը ոմանց համար օգտակար էր և ուրիշների համար վնասակար: Տիգրանը դիմեց ուսուցչին, և նա յանձն առաւ պէտք եղած բացատրութիւնները տալ:

«Դուք մտաբերում էք ասաց նա, որ մենք ենթադրեցինք թէ հացաթուխը ալիւր է գնում և փողի տեղ պարտամուրհակ է տալիս:

Այո՛, այո՛, աղաղակեցին երեխայքը միաբերան:

— Մուրհակը, շարունակեց ուսուցիչը, փող չէ, այլ միայն փողը վճարելու գրաւոր խոստում. երբեմն ապրանք գնելիս՝ բաւականանում են բերանացի խոստմամբ, որովհետև

պատուաւոր մարդը, որ փող ունի, վճարում է մուրհակ տուած կամ չտուած լինի։

«Վարկ բանալ այսինքն հաւատալ թէ փոխ առնողը կը կամենայ և կը կարողանայ վճարել, այդ վստահութեան գործ է։

«Այժմ ենթադրենք թէ ջաղացպանը վստահութիւն չունի և ալիւրը վարկով չէ ծախում, ի՞նչ կ՚անէ հացաթուխը։

ՏԻԳՐԱՆ. — Մի ուրիշի մօտ կ՚երթայ։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Իսկ եթէ բոլոր ջաղացպանները մերժե՞ն վարկով ծախելու նորան։

ԱՐՇԱԿ. — Նա ալիւր չի ունենալ և հաց չի թխիլ։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Եւ եթէ հաց չթխէ, ի՞նչպէս ճարէ իւր ապրուստը։ Վարկը հարկաւոր է նորան աշխատելու և իւր ընտանիքը կերակրելու համար։ Առանց ալիւրի, հացաթուխը անգործ կը մնայ և նորա փուռը փակ։

ՍՄԲԱՏ. — Իսկ մենք հաց չենք ունենալ ուտելու։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Շատ ուղիղ է, սպառողը նեղութիւն կը քաշէր, որովհետև հացի պակասութիւն կը լինէր։ Բայց այդ բաւական չէ. եթէ ջաղացպանը ալիւրը վարկով չէ տալիս, և կանխիկ (նագդ) փողով ծախելու էլ առիթ

չէ ունենում, ի՞նչ կ՚անէ նա իւր ալիւրը։

ՏԻԳՐԱՆ. — Շտեմարանում կը պահէ։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Բայց եթէ ալիւրը երկար ժամանակ մնայ, կը փչանայ։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Նա կը սկսի պակաս ալիւր աղալ։ Ի՞նչ հաշիւ կը լինէր նորա համար ցորեն առնել և աշխատանք ու ժամանակ զոհել նորան աղալու, եթէ իւր աշխատութիւնը պիտի կորչի։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Իսկ եթէ նա ցորենը վարկով գնած լինի և ալիւրը չկարողանայ ծախել, ի՞նչպէս կը վճարէ նա ցորենի գինը, կամ եթէ հողագործը չկամենա՞յ իւր ցորենը վարկով տալ։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Տարակոյս չկայ որ աւելի լաւ կը լինէր եթէ արտադրողը կարողանար միշտ կանխիկ գնել ու ծախել, բայց որովհետև այդ դժուար է, ստիպուած են լինում վարկով գործ տեսնել, միայն իհարկէ զգուշութեամբ։ Այդ լինում է հետևեալ կերպով. հողագործը ցորենը ծախում է ջաղացպանին և նորանից մի պարտամուրհակ է ստանում, որ իւր մօտ պահում է մինչև պայմանագրած ժամանակը. երբեմն նա կարող է մուրհակը սեղանաւորի մօտ տանել և կանխիկ փող ստանալ

կամ եղներ գնելիս՝ փողն տեղ եղների վաճառականին տալ, եթէ նա ճանաչում է ջաղացպանին։ Ջաղացպանը, իւր կողմից, ցորենը կ՝աղայ և ալիւրը կը ծախէ հացաթուխին՝ մուրհակ ստանալով նորանից. վերջապէս հացաթուխը հաց կը թխէ և սպառողին կը ծախէ։

«Դիցուք թէ սպառողը կանխիկ է վճարում, ինչպէս որ լինում է սովորաբար, այն ժամանակ հացաթուխը հարկաւոր փողը կ՝ունենայ ջաղացպանին վճարելու, և այս վերջինը պայմանադրած օրը իւր պարտքը կը հատուցանէ հողագործին։ Իսկ եթէ հողագործը պարտամուրհակը փոխանցել է եղների վաճառականին, ջաղացպանը ուղղակի սորան կը տայ փողը, այնպէս որ վերջ ի վերջոյ սպառողը վճարած կը լինի ամէնին։

ՍՄԲԱՏ. — Քանի որ ամէն բան սպառողի համար է շինվում, հարկաւ նա պէտք է ամէն բան վճարէ։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Արդարև այդպէս է։ Մենք տեսանք որ վարկը հեշտացնում է արտադրութիւնը, յանձնելով նախնական նիւթերը այն անձանց որոնք կարող են զանազան բաներ արդիւնաւորել։ Մեր օրինակի մէջ՝ նոյն է թէ ջաղացպանը ասէր հողագործին. Ես կ՝աղամ

ձեր ցորենը, հացաթուխը կը վճարէ իմ աշխատութիւնը. հացաթուխն իւր կարգին ասում է. ես հաց կը թխեմ, և սպառողը մեզ ամէնիս կը վճարէ։ Կը հարցնեմ ձեզ այժմ, ինչի՞ համար սպառողը պէտք է կանխիկ վճարէ։

ԱՐՇԱԿ. — Որպէս զի արտադրողները կարողանան իրանց փողը ստանալ։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Այդ բաւական չէ։ Եթէ սպառողը կանխիկ չէ վճարում, կարող է պարտքի տակ ընկնել, որովհետև նա արտադրելու համար փոխ չէ առնում, այլ սպառելու համար. և ինչ որ մարդ սպառել է, ոչինչ արդիւնք չէ կարող տալ։

ՈՒՍՈՒՑԻՉԸ։ — Ճիշդ այդպէս է, միակ օգտակար վարկն այն է որ արտադրութեան համար է տրվում. ուրիշ ամէն տեսակ վարկ միայն դժբաղդութիւն կարող է պատճառել»

Դրամագլուխ.

Մի կիրակի օր, մի քանի գիւղացի մարդիկ ու կանայք նստած էին մի մեծ կաղնի ծառի տակ, և երեխայքը հետաքրքրութեամբ ականջ էին դնում նոցա խօսակցութեանը։

Խօսքը գիւղի և շրջակայքի մի քանի բնակիչների վրայ էր, որոնք իրանց մանկութեան ժամանակ աղքատ էին եղել, բայց ժամանակ անցնելուց յետոյ՝ իրանց աշխատութեամբ և տքնութեամբ չափաւոր կարողութիւն և մինչեւ իսկ հարստութիւն են ձեռք բերել:

Այս խօսակցութեանը առիթ տուել էր Մարկոսը, Ջաղացպանի որդին, որ նոյն օրերում մի փոքրիկ տուն և բաւական ընդարձակ մշակելի հող էր գնել 3000 մանէթով. 2000ը կանխիկ էր վճարել, իսկ մնացածի համար վեց ամիս ժամանակ էր խնդրել հատուցանելու: Ոչ ոք չզարմացաւ այս բանի վրայ, որովհետև ամէնքը գիտէին որ Մարկոսը օրէնը 2 մ. 50 կ. էր շահում և միայն 1 մ. 50 կ. էր մսխում:

Եւ գիւղացիքը ասում էին որ եթէ Ջաղացպանի որդին շարունակէ այդպէս խնայող լինել, շուտով հարստութիւն կը կապէ:

Երեխայքը լսելով Մարկոսի գովասանքը, յօժարութիւն էին յայտնում մի օր նորա օրինակին հետևելու. նոքա փափաքում էին նոյնպէս հարուստ լինել:

«Դորա համար, ասաց Տանուտէրը, երկու բան է հարկաւոր. աշխատել և խնայողութիւն անել, այսինքն չափաղանց շատ չմսխել:

— Պէտք է մանաւանդ խնայողութիւն անել, վրայ բերեց ուսուցիչը: Որքան էլ մարդ շատ աշխատի, եթէ օր դատի՝ օր ուտէ, երբէք դրամագլուխ չի ունենալ: Մարդս աշխատութեամբ է փող ձեռք բերում, բայց միայն անտեսութեամբ կարելի է պահել փողը և դրամագլուխ կազմել:

— Դրամագլուխը փողն է, այնպէս չէ՞, հարցրեց Տիգրանը:

— Անշուշտ աղաղակեցին շատերը ամէն կողմից:

— Ոչ միշտ, պատասխանեց ուսուցիչը:

Եւ որովհետև կարծում էին թէ կատակ է անում, «Սպասեցէք, ասաց նա, ես այստեղ 5 հատ աբասանոց ունիմ. այս փողն է, այնպէս չէ՞:

— Այո՛, այո՛:

— Շատ լաւ. եթէ ես այս փողով հաց առնեմ ուտելու համար, այդ դրամագլուխ չի լինիլ. եթէ ընդհակառակն մի գիրք գնեմ ձեզ դաս տալու համար, աշխատութեան գործիք գնած կը լինիմ, գիրքը իմ բահն է, իմ մուրճը, իմ սղոցը — և որովհետև աշխատութեան գործիքները դրամագլխի մասն են կազմում, ուրեմն գիրքը գնելու համար տուած 5 աբասին իմ դրամագլխի մի մասը կը լինի: Այն

փողը որ մարդ մնխում է իւր պիտոյքները լցնելու համար՝ դրամագլուխ չէ, այլ եկամուտ։»

Ուսուցիչը նկատեց որ իւր ունկնդիրները լաւ չէին հասկացել իւր ասածները։

Նա ստիպուեցաւ գլխից սկսել և ապացուցանել որ փողը ինքնըստինքեան ոչինչ բանի չէ ծառայում, թէ նորան չեն ուտում, թէ չէ կարելի փողով գրել, սղոցել, կարել, հողը վարել, և թէ փողը օգտակար է լոկ իբրև մի միջոց պէտք եղած բաները գնելու։ Այսպէսով փողը ներկայացնում է երբեմն հաց, երբեմն մի գործիք, երբեմն մի ուրիշ բան։

Այս յայտնի ճշմարտութիւնները յիշելուց յետոյ, նա շարունակեց, դառնալով դէպի մի ջուլհակ. «Դուք, Թոմաս եղբայր, կտաւ էք գործում. ի՞նչ է հարկաւոր ձեզ ձեր արհեստը բանեցնելու համար։

ԹՈՄԱՍ ԵՂԲԱՅՐԸ. — Ոստան և թել։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Ուրեմն, ձեր ձեռքերը, ձեր աշխատութիւնը բաւական չեն. ձեզ անպատճառ հարկաւոր է թել, որ ձեր նախնական նիւթն է, և մի ոստան, որ ձեր գործիքը կամ մեքենան է։ Լաւ ուրեմն, ձեր թելը, ձեր ոստանը, այն տեղը ուր դրած է ձեր գործիքը, ինչպէս նաև ուրիշ բաները որ հարկաւոր են

ձեզ աշխատելու համար՝ կազմում են ձեր դրամագլուխը, որովհետև միայն այդ բաները ունենալով կարող էք արտադրել, կարող էք կըտաւ գործել։ Ամէն բան, չխօսելով աշխատութեան վրայ որ հարկաւոր է մարդուս արտադրելու համար, դրամագլուխ է։

ԱՐՇԱԿ. — Գութանը, եզները, ոչխարները նոյնպէս դրամագլուխ են։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Անտարակոյս։ Ենթադրենք մի երիտասարդ որ սկսում է փող շահել, և դիցուք թէ նա օրէնը 6 շայի մի կողմն է դընում. մէկ տարուց յետոյ նա կ՝ունենայ 100 մանէթ։ Որպէս զի որոշենք թէ այդ դրամագլուխ է թէ ոչ, պէտք է տեսնենք թէ ինչ գործածութիւն կ՝անէ երիտասարդը այդ փողից։ Առ այժմ, քանի որ փողը նորա արկղումն է, պէտք է նկատուի լոկ իբրև մի միջոց բան գնելու։ Նա կարող է վճռել փողը իւր զուարճութեան համար մնսելու. եթէ այդպէս է, այդ դրամագլուխ չի լինիլ. բայց եթէ նա իւր փողը խնայողութեան արկղը դնէ և տարին 5 մանէթ ստանայ, այն ժամանակ դրամագլուխ է, որովհետև եկամուտ է բերում։ Եթէ այնուհետև նոր խնայողութիւններ անելով՝ իւր գումարը այնքան մեծացնէ որ նորանով կարողա-

նայ ոստան ու թել դնել, նա իւր փողն դրամագլուխը ճարտարութեան դրամագլխի կը փոխարկէ, որ, պէտք է ասել աւելի արդիւնաբեր է։

«Ուրեմն դրամագլուխը կազմվում է խնայողութեամբ։ Խնայողութիւն անել նշանակում է իւր անձը զրկել բայց ով որ իրան զրկում է՝ մի բան հաւաքում է։ Թռչունը կամաց կամաց է շինում իւր բունը, և փոքրիկ առուներից մեծ գետեր են կազմվում։ Խնայողութիւն անելու համար հարկաւոր չէ շատ շահել, կարելի է յաճախ քիչ շահելով խնայողութիւն անել, բաւական է միայն որ մարդ պակաս մսխէ քան որքան շահում է։»

Զանազան տեսակ դրամագլուխներ.

Գիւղացիքը մի բոպէ լուռ մնացին, մտածելով ուսուցչի խօսածների վրայ։ Նոցանից մէկը դժուարանում էր ընդունելու որ թելը նոյն դրամագլուխը կարողանայ շինել ինչպէս և ոստանը, կամ թէ ցորենը դրամագլուխ է այնպէս ինչպէս և դաշտը, և այլն։

Ուսուցիչը պատասխանեց. «Ուրիշներն էլ ձեզ նման դատել են որ այս զանազան տեսակ

դրամագլուխների մէջ տարբերութիւններ կան, և հէնց այս պատճառով զանազան անուններ են տուել նոցա. մէկը կոչվում է հաստատուն դրամագլուխ, միւսը՝ շրջաբերելի դրամագլուխ։ Առնենք իբրև օրինակ ջուլհակի դրամագլուխը, որ բաղկանում է գլխաւորապէս ոստանից և թելից, չեմ յիշում ուրիշ բաները։ Ոստանը հաստատուած է գործանոցի մէջ և իւր տեղից չէ շարժվում։ իսկ թելը, ընդհակառակն, մտնում է գործանոցը, փոխարկվում է կտաւի, դուրս է գնում, և նորա տեղ ուրիշ թել է բռնում։ Թելը, կտաւը, փողն նման, ձեռքէ ձեռք են անցնում կամ, ինչպէս սովորութիւն է ասել, շրջագայում են։ Լաւ միտ դրէք, շրջագայել այստեղ նշանակում է մէկ մարդու ձեռքից ուրիշ մարդու ձեռքն անցնել։

«Այժմ հասկանալի է, կարծեմ, որ ջուլհակի ոստանը նորա հաստատուն դրամագլուխն է, իսկ թելը շրջաբերելի դրամագլուխը։

«Բայց ոստանը հարկաւ միակ հաստատուն դրամագլուխը չէ։ Ոչ կ՝ասէ ինձ մի քանի առարկաներ որ հաստատուն դրամագլուխների կարգը դասուելու են։

ԱՐՇԱԿ. — Գործանոցը։

ԼԵՒՈՆ. — Դաշտը, մարդը։

ՏԻԳՐԱՆ. — Շոգեշարժ մեքենան։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Եւ ընդհանրապէս այն առարկաները որ յաճախ չեն նորոգվում կամ որոնցով առուտուր չեն անում։ Այն եղը որ նիհար են գնում պարարտացնելու և նորից ծախելու համար՝ շրջաբերելի դրամագլուխ է համարվում այնպէս ինչպէս ջուլհակի թելը, կօշկակարի կաշին, դերձակի մահուդը, ածուխն ու ձէթը մեքենան տաքացնելու ու քսելու համար, այն փողը որով վճարում են հարկերը, բնակարանների վարձը, դործաւորների աւուրչէքը, սպասաւորների ռոճիկը, ցանի սերմերը և հազարաւոր ուրիշ ծախքեր են անում։

«Այժմ ես ձեզ մի դժուար հարց կ'առաջարկեմ։ Ի՞նչ էք կարծում, կառքը հաստատո՞ւն թէ շրջաբերելի դրամագլուխ է։

ՇԱՏԵՐԸ. — Շրջաբերելի դրամագլուխ է։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Դուք դատում էք արտաքինի վրայ։ Ես իմ կարծիքը յայտնելուց առաջ, կը սկսիմ նախ տեղեկանալ թէ կառքը ումն է պատկանում և ինչ բանի է ծառայում։ Եթէ ինձ ասեն, թէ կառքեր շինողին է պատկանում, կը դիտենամ թէ կառքը վաճառելի ապրանք է, այսինքն շրջաբերելի դրամագլուխ, որովհետև նա մէկ ձեռքից միւսն է անցնում։

Իսկ եթէ ընդհակառակն ասեն, թէ կառքը կառավարին է պատկանում, կ'իմանամ որ նա հաստատուն դրամագլուխ է. որովհետև կառավարի աշխատութեան գործիքն է, որով նա ինձ մի ծառայութիւն է անում, այսինքն մի տեղից միւսը փոխադրում է, ծառայութիւն որի համար փող եմ վճարում նորան։ Եթէ վերջապէս ինձ ասեն թէ կառքը մեր շրջակայքի հարուստ կալուածատիրոջն է . . . ո՞վ կարող է իմանալ թէ ո՞ր տեսակ դրամագլուխների կարդում պէտք է դասել նորան։»

Ոչ ոք չպատասխանեց։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Դուք չդիտէք թէ ինչ պատասխանէք, և իրաւամբ. բանն այն է որ ղբօսանքի համար գնուած կառքը ոչ մի տեսակ դրամագլուխ չէ, քանի որ ոչինչ չէ արտադրում, այլ լոկ սպառման առարկայ է։ Կառքի տէրը գործ է ածում նորան մինչև որ մաշուի կամ, ինչպէս ասում են, սպառուի. «սպառել» բառը չէ նշանակում միայն «ոչնչացնել», այլ և գործ ածել։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Արդարև վաճառականութեան մէջ վերջին գնողին են ասում սպառող։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Այժմ ուրիշ բան հար-

ցընեմ։ Բժշկի գիտութիւնը ի՞նչ տեսակ դրամագլուխ է։

«Դուք զարմանում էք որ գիտութիւնը դրամագլուխ եմ անուանում։ Բայց միթէ բժշկի գիտութիւնը աշխատութեան գործիք չէ՞, քանի որ նա իւր գիտութեամբ բժշկում է ձեզ. նա արտադրում է ձեր առողջութիւնը, ինչպէս որ երկրագործը ցորեն է արտադրում և ջաղացպանը ալիւր, և դուք ուրախութեամբ ու երախտագիտութեամբ փող էք վճարում նորան իւր մատուցած ծառայութեան համար։

«Բժշկի, փաստաբանի, ուսուցչի և սոցա նման անձանց դրամագլուխը մտաւոր կամ ան-նի-նակն դրամագլուխ է, և կարող է, աշխատութեան գործիքներից շատերի նման, հաստատուն դրամագլուխների կարգը դասուիլ։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Ըստ ինքեան այդ ուղիղ է։ Ես իմ որդուն ուսումնարան եմ ուղարկում, տարիներով ուսում եմ առնել տալիս նորան և շատ փող եմ մսխում։ Իմ որդին իւր կողմից, աշխատում է և ամէն օր իւր յիշողութեան մէջ մի կողմն է դնում ոչ թէ արծաթի աբասիներ, այլ քիչ քիչ գիտութիւն. մի քանի ժամանակից յետոյ, նա այդ գիտութիւնից օգուտ կը քաղէ։ Այո՛, ես այժմ հասկանում

եմ, գիտութիւնը նոյնպէս դրամագլուխ է։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Գործաւորը՝ որ իւր արհեստին հմուտ է և միևնոյն ժամանակ ճարպիկ է, ունի նոյնպէս դրամագլուխ. նորա դրամագլուխը իւր ճարպիկութիւնն է, որի համար նորան աւելի են վճարում քան մի անշնորհք արհեստաւորի, և մանաւանդ քան մի օրով վարձուած մշակի, որ միայն իւր երկու կռնները կարող է առաջարկել ձեզ։»

Դրամագլխի տոկոսը.

Փոքր ինչ մտածելուց յետոյ, տանուտէրը ասաց ծիծաղելով. «Մտաւոր դրամագլուխը միայն մի պակասութիւն ունի, այն է որ չէ կարելի շահով տալ նորան։

— Դորա փոխարէն, պատասխանեց ուսուցիչը, չէ էլ կարելի գողանալ նորան։ Հին ժամանակների իմաստուններից մէկը, Բիաս, որ միանգամայն թէ հարուստ էր և թէ գիտուն, ստիպուած լինելով փախչել իւր ծննդեան քաղաքից որ թշնամիների ձեռքն էր ընկել, հեռացաւ առանց իւր ստացուածքից մի բան տանելու։ Հարևան մարդիկը յայտնեցին իրանց զար-

մանքը այդ բանի վրայ։ «Ես ինձ հետ տանում եմ, ասաց նա ակնարկելով իւր գիտութեան վրայ, իմ հարստութեան այն մասը որ ոչ մի թշնամի և ոչ մի գող չէ կարող յափշտակել ինձանից։»

— Ի՞նչ բան է շահով փող տալ, հարցրեց, Յովսէփը։

— Այդ շատ պարզ է, պատասխանեց Նոյան հայրը, որ բոլոր խօսակցութիւնը լսել էր։ Եթէ դու խնայողութեամբ 100 մանէթ հաւաքել ես, և փոխանակ այդ գումարով գործիքներ և նախնական նիւթեր առնելու՝ մի ուրիշին փոխ տաս, փոխառուն այդ բանի համար ուրախութեամբ 5 մանէթ շահ կը տայ քեզ տարէնը։ Այդ նոյնն է թէ մի տուն վարձով տայիր Նոյան, նա վճարում է քեզ փոխ առած փողի վարձը։

ՈՒՍՈՒՅԻՉԸ. — Երբ մի դաշտ են վարձում, կալուածատիրոջ վճարուած փողին ագարակավարձ են ասում։ Երբ մի տուն կամ ուրիշ հաստատուն շինութիւն են վարձում, դորան պարզապէս վարձ են ասում, իսկ երբ փող են վարձում, կամ երբեմն նաև ապրանքներ, դորան տոկոս են կոչում։

— Ես լսել եմ, ասաց Սօսը որ մի քանի

ժամանակ քաղաքում կացել ու բանել էր, թէ պէտք է փոխ տալ առանց տոկոս պահանջելու։

— Այդ պատահում է երբեմն ազգականների ու բարեկամների մէջ։ Եթէ ձեր եղբայրը իւր հարստութիւնը կորցրել է և դուք Նոյան ձեր տան մէջ բնակութիւն էք տալիս, այդ ձեր կողմից մեծ եղբայրսիրութիւն է. նոյնպէս եթէ ձեր բարեկամը նեղութեան մէջ է և դուք գումարով օգնութիւն էք հասնում Նոյան, առանց տոկոսի փոխ տալով կամ մինչև անգամ ընծայելով Նոյան այդ գումարը, գեղեցիկ գործ արած կը լինիք, և ամէնքը կը գովեն ձեզ։ Բայց այդ առևտրական գործ անել չէ, արտադրել չէ։ Արդ, իւրաքանչիւր մարդ իրաւունք և յաճախ նաև պարտաւորութիւն ունի իւր դրամագլխից որքան կարելի է աւելի օգուտ քաղել միայն իհարկէ պատուաւոր կերպով։

ՏԱՆՈՒՏԻՐԸ (իւր Սօս եղբօրորդուն). — Քո բարեկամները որ այնպէս բարեսիրտ են, չը լինի՞ թէ նոքա էլ ձրի են աշխատում։

ՍՕՍ. — Այդ բոլորովին ուրիշ բան է։ Աշխատութիւնը յոգնեցնում է մարդուն, և բացի դորանից արհեստաւոր մարդը վարձ պիտի ստանայ որ ապրի. փոխ տալը չէ յոգնեցնում,

և դրամագլուխ ունեցողները մեծ մասամբ հարուստ են։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Արհեստաւորը փող է ըստանում որովհետև մի ծառայութիւն է մատուցանում, և դրամատէրը նոյնպէս փող է ըստանում որովհետև մի ծառայութիւն է մատուցանում։ Դուք արհեստաւորներդ միայն ձեռքի աշխատութիւնն էք տեսնում, իբրև թէ ուրիշ կերպով չէ կարելի ծառայութիւն մատուցանել մարդկանց, կամ օգտակար լինել նոցա։ Կան անձինք որ թէև ձեռքերով չեն աշխատում, բայց մտքով շատ են յոգնում, ծանր աշխատութիւններ են կատարում։ Ես ձեզ հաւատացնում եմ որ թէև հողը չեմ փորում, ոչ էլ փայտ սղոցում եմ կամ բան կարում, այնու ամենայնիւ յաճախ շատ յոգնած եմ լինում երեկոյեանները։ Բայց չխօսինք իմ մասին, տեսէք օրինակի համար բժիշկը, ի՞նչ կ՝անէր նա եթէ պահանջէին որ ձրի բժշկէ հիւանդներին։

«Լաւ միտս եկաւ. անցեալ օր գնացել էի քաղաք, ուր գործ ունէի մի հարուստ վաճառականի մօտ։ Անց կացայ մի դրասենեակով ուր շատ գործակատարներ զբաղուած էին զանազան գաներ գրելով, և մտայ նորա աշխատութեան սենեակը։ Այդ սենեակը հաղորդակցութիւն

ունէր նորա ննջարանի հետ մի դռնով որ երբէք չէր փակվում։ բաւական է այդ երկու սենեակները տեսնել որ մարդ համոզուի թէ աշխատութիւնը եռ է գալիս այնտեղ։ Պահարանները լի էին քարտոններով, գրասեղանը ծածկուած զանազան թղթերով և անկողնի մօտ մի փոքրիկ սեղանի վրայ կային մատեաններ և աշխարհի ամէն անկիւններից եկած նամակներ, որ վաճառականը մի կողմը դրել էր նոյն գիշերը մէկ մէկ կարդալու համար։

«Ի՞նչ էք կարծում, ո՞վ աւելի երկար ու ծանր աշխատանք ունի կատարելու, վաճառակա՞նը թէ իւր գործակատարներից ամէն մէկը առանձին առած։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Ինչ ասել կ՝ուզէ որ վաճառականը աւելի է աշխատում, այդ ինձ յայտնի է։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Անտարակոյս այդպէս է։ Երեկոյեան, գործակատարը յետ է դառնում տուն, անհոգ, հանգստանում է, պարկում է և խաղաղ քնում։ Իսկ վաճառականը շարունակում է մտածել իւր արած և անելիք գործերի վրայ, և հէնց այն օրը որ ես նորան տեսայ՝ բաւական նշանաւոր գումար էր կորցրել. ո՞վ գիտէ, մէկ-երկու այդպիսի կորուստներ գուցէ

բոլորովին քանդեն նորան։

ԱՐՇԱԿ. — Բայց ի՞նչ է արտադրում վաճառականը որ այդպէս աշխատում է։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Շատ բաներ։ Նա այն է անում որ մենք ունինք սուրճ, բրինձ, համեմներ, որ շաքարը այնքան թանգ չէ, և ուրիշ շատ բաներ։ Եւ այս բոլորը գլխի աշխատանք է։

ՍՕՍ. — Բայց այն մարդիկը որոնք գլխով են աշխատում, այսինքն նոքա որոնք իրանց խելքով կամ գիտութեամբ ծառայութիւններ են մատուցանում, այս կամ այն կերպով վարձատրվում են, այն ինչ փողը չէ աշխատում։ Ինչի՞ համար են վճարում նորան որ փող է տալիս, ուրիշ խօսքով, ինչի՞ դրամագլուխը տոկոս է բերում։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Մուրճը չէ աշխատում, ոչ էլ ասեղը, այլ ձեռքն է բռնում այդ գործիքները և խելքն է առաջնորդում կամ գոնեա պէտք է առաջնորդէ ձեռքին։ Արդ, փողը գործիք է, — կամ ներկայացնում է այն գործիքները որ գնվում են նորանով. — խելքն է կանոնաւորում նորա գործածութիւնը։

«Տեսէ՛ք, օրինակի համար, այն վաճառականը որի մասին փոքր ինչ խօսում էի, գիտէր որ սուրճի պակասութիւն պիտի լինի. նա մի նամակ գրեց Եւրոպա, պահանջելով որ 10,000 մանէթի սուրճ ուղարկեն իրան։ Սուրճը պարկերի մէջ է դրվում և վաճառականի պատուէրի համեմատ նաւով ճանապարհ է դրվում։ բայց յանկարծ մի մեծ փոթորիկ է բարձրանում, և նաւն ու սուրճը ծովի յատակն են գնում։ Սուրճը գնելով ու բերել տալով, վաճառականը մի ծառայութիւն էր մատուցանում, որ ոչ ոք չպիտի զլանայ վճարելու. բայց բացի դորանից, մի՞թէ ուրիշ ոչինչ չի հասնիլ նորան, քանի որ նա իւր ունեցածը կորուստի է ենթարկում։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Եւ եթէ վաճառականը բաւական փող չունի և ես նորան փող տալիս, այդ նոյնն է թէ նորա հետ ընկերանայի։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Ճշմարիտ է։ Եւ երբ երկու հոգի այդ կերպով ընկերանում են, կարելի է երկու տեսակ պայման կապել. կամ դրամագլուխի տէրը առաջարկում է օգուտն ու վնասը կէս անել, կամ նա ասում է. Որովհետև դուք պիտի կառավարէք գործը, և ես ձեզ միայն փողն եմ յանձնում, մինչդեռ այդ միջոցում ուրիշ գործով կը պարապիմ, բաւականանում եմ 100ի 5 պահանջելով ձեզանից։ Քանի որ դուք պիտի բանեցնէք դրամագլուխը, իրաւացի

է որ (100ի 5ը ինձ վճարելուց յետոյ) բոլոր օգուտը ձերը լինի. միւս կողմից, որովհետև ես գործին մասնակից չեմ, չեմ կամենում հնթարկուիլ այն վնասներին որ կարող են առաջ գալ ձեր անհոգութիւնից կամ անընդունակութիւնից: Ուրեմն ահա իմ դրամագլուխը, թէ բան շահիք կամ չշահիք, ես իմ 100ի 5ը կը ստանամ ձեզանից ամէն տարի:

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Մի մարդ որ 3,000 մանէթ ունի և այդ գումարով մի ագարակ է գնում, կամ մի տուն շինում, կամ մի առուտուր սկսում, կամ վերջապէս այդ 3,000 մանէթը ուրիշին փոխ է տալիս, պէտք է անշուշտ որ այդ փողը մի եկամուտ բերէ իրան՝ վարձի, շահի կամ տոկոսի ձևով, ապա թէ ոչ կամ ոչ ոք խնայութիւն չէր անիլ, և կամ՝ որ համարեա նոյնքան ցաւալի կը լինէր, ամէն մարդ իւր խնայած փողը կը թաքցնէր: Ուրեմն աշկարայ է որ առանց դրամագլխի ոչինչ չէ կարելի անել, թէ լաւ է որ մարդ վարկ (էհտիբար) ունենայ և կարողանայ պէտք եղած ժամանակը փոխ առնել՝ փոխատուին յայտնի տոկոս վճարելով:

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Եւ այդ տոկոսը ամէն մարդ պատրաստ է վճարելու, որովհետև ա-

տաղձագործը ի՞նչպէս կ՚աշխատէր եթէ տախտակ չունենար, և դարբինը՝ եթէ երկաթ չունենար: Այն դրամագլուխը որ նոքա փոխարինաբար առնում են դրամատէրից, միջոց է տալիս նոցա ապրանքներ արտադրելու, ուրեմն և փող շահելու, և նոքա իրանց շահածի մի մասը շնորհակալութեամբ տալիս են փոխատուին, որ այդպէսով միջոց է տուել նոցա աշխատելու և փող շահելու: Այդ մի ծառայութիւն է որի համար նոքա վճարում են. ով որ այդ ծառայութիւնը մատուցել է, պէտք է մի քանի ժամանակ զրկուէր իւր դրամագլխից, և այդ զրկանքը վարձատրութեան արժանի է: Պահանջել որ մի գումար ձրի փոխ տան ձեզ (երբ այդ բարեկամական ծառայութիւն չէ՝ այլ առուտուրի գործ), նոյնն է թէ պահանջէիք որ կօշիկներ ձրի տան ձեզ. ամէն աշխատութիւն և ամէն ծառայութիւն վարձատրութեան արժանի են:»

Դրամագլխի տոկոսը և շահը.

Գիւղացիքը շատ էին խօսում նոր շինուելիք երկաթուղու վրայ, և ամէն մարդ իւր դատողութիւնն անում էր այս մեծ ձեռնարկու-

թեան յաջողութեան ու օգտակարութեան վրայ։ Հաշվում էին թէ շատ փող և շատ մարդիկ հարկաւոր են այդ գործը գլուխ տանելու համար. ոմանք մինչև անգամ մտածում էին գնալ իրանց ծառայութիւնը առաջարկել Ճանապարհի շինութեան համար, բայց չգիտէին թէ ինչպէս անեն և ում դիմեն։

Խնդիրը պարզելու համար, մի կիրակի երեկոյ, մի քանի հարևաններ գնացին ուսուցչից խորհուրդ հարցնելու. նոքա իրանց գերդաստանների հետ էին, և որովհետև եղանակը գեղեցիկ էր, նստան կակղի ծառի տակ։

Առաջին հարցը որ առաջարկուեցաւ ուսուցչին այն էր թէ ով է շինում երկաթուղիները և ինչ միջոցներով։

Նա պատասխանեց. «Ընդհանրապէս երկաթուղիները կամ տէրութիւնն է շինում, կամ տէրութիւնից արտօնութիւն ստացած ընկերութիւնները։ Եւ որովհետև այսպիսի մեծ գործի համար, ինչպէս դուք էլ լաւ հասկանում էք, մեծամեծ գումարներ են հարկաւոր, ընկերութիւնը, երբեմն նաև տէրութիւնը, հասարակութեան օգնութեանն է դիմում և մեծ ու փոքր դրամատէրերին հրաւիրում է ձեռնարկութեանը մասնակից լինելու։

«Ի՞նչպէս։

«Նա դուրս է տալիս երկու տեսակ արժէթղթեր, որ ամեն մարդ կարող է ձեռք բերել ընկերութեան գանձարանը մի որոշեալ գումար տանելով. այդ արժէթղթերին բաժնէտոմս[1] և պարտատոմս[2] անուններն են տալիս։

«Ով որ ուզում է գործի մէջ մասն ունենալ, նա բաժնէտոմս է առնում։ Բաժնէտոմսերով նոյն իսկ ընկերութիւնը կազմվում է, և բաժնէտոմս ունեցողը ընկերութեան անդամակից է համարվում։ Նա բերում 100 մ., կամ 200 մ., կամ աւելի ընկերութեան գանձարանը, և եթէ շահ (օգուտ) կայ՝ իւր բաժինը ստանում է, իսկ եթէ չկայ՝ ոչինչ չէ ստանում։ Իւրաքանչիւր բաժնէտոմսին ընկած շահի մասը կոչվում է բաշխ[3], որովհետև շահած գումարը հաւասար մասերի բաշխվում է բոլոր բաժնէտոմսերի վրայ, որոնք միևնոյն ձեռնարկութեան մէջ նոյն արժէքն ունին։ Իւրաքանչիւր բաժանորդ կարող է մի քանի բաժնէտոմս ունենալ։

«Ուրիշ բան է պարտատոմսը։ Ով որ 200 մանէթի պարտատոմս է առնում, նա նոյն գումարի պարտատէրն է դառնում ընկերութեան առաջ, և որոշեալ տոկոս է ստանում

[1]) акція. [2]) облигація. [3]) дивидендъ.

(100 ի 5 կամ աւելի տարէնը), առանց ընկերութեան շահին մասնակից լինելու, բայց և առանց իւր փողը կորուստի ենթարկելու։ Պարտատոմսի տոկոսը վճարվում է բաշխից առաջ, որ բաժնէտոմսի շահած բաժինն է։ Պարտատոմսի տէրը միշտ միևնոյն գումարն է ստանում. իսկ բաժնէտոմսի տէրը երբեմն աւելի և երբեմն պակաս, նայելով տարիներին, բայց — եթէ գործը յաջող է գնում, — բաշխը միշտ տոկոսից աւելի է, և այդպէս էլ պէտք է լինի, քանի որ բաժնէտոմսի տէրը իւր գումարը վտանգի է ենթարկում։

«Այժմ պարզ տեսնում էք թէ ի՞նչ է բաժնէտոմսը և ի՞նչ է պարտատոմսը։ Գիտեմ որ ձեր մէջ կան այնպիսիները որոնք միջոց ունին այդ տոմսերից մէկ կամ միւս տեսակը ձեռք բերելու, և ո՞վ որ այդ կ՚անէ հաղիւ թէ սխալուի, որովհետև դժուար թէ կարելի լինի կասկածել երկաթուղու յաջողութեան վրայ։ Բայց և այնպէս, քանի որ մ՚ի նոր ձեռնարկութեան յաջողութեան վրայ առաջուց չէ կարելի հաստատուն կերպով խօսել, ձեզ իւրաքանչիւրիդ մնում է քննել թէ արդեօք աւելի լաւ է համարուս՞ իւր փողը քիչ շատ վտանգի ենթարկել և մի բաժնէտոմս առնել, որ կարող է մեծ շահ

բերել թէ կամենում է քիչ պակասով գոհ լինել միայն թէ վստահ լինի որ որոշեալ ժամանակին կանոնաւորապէս կը ստանայ իւր տոկոսը։»

Երկար վիճեցին այս խնդրի վրայ, իւրաքանչիւրը իւր կարծիքը յայտնեց այն մասին թէ ի՞նչ յաջողութիւն կարող է ունենալ երկաթուղին մեր երկրում։ Ո՛վ որ յոյս ունէր թէ մեծ շահ կարող է ունենալ, վճռեց բաժնէտոմս ձեռք բերել իսկ ով որ կարծում էր թէ այնքան օգուտ չի լինիլ, որոշեց պարտատոմս առնել։

«Այսպիսի մեծ ձեռնարկութեան մէջ որպիսի է երկաթուղու շինութիւնը, շարունակեց ուսուցիչը, շատ գործ կայ այն մարդկանց համար որոնք եթէ մի կողմ դրած փող չունին, գորա փոխարէն առողջ բազուկներ ունին և կամք աշխատելու։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Ո՛րքան մարդիկ հարկաւոր կը լինին գետինը հարթելու, կամուրջներ շինելու, գերաններ տաշելու և նոցա վրայ երկաթագծերը տեղաւորելու համար։

ԿԱԼԱՏՈՋ ՅՈՎՍԷՓ. — Ես մտածում էի գետինը հարթելու գործով պարապիլ. բայց, ինչպէս ասում են, այդ գործը մեծ մեծ բաժիններով պիտի տրուի, այսինքն մի քանի հա-

ըիւր կամ գուցէ հազար սաժէն միասին, և ես մենակ չեմ կարող այդքան բան շինել, ինձ հարկաւոր են օգնականներ։ Բայց եթէ մշակներ առնեմ, պէտք է օրական վարձ վճարեմ նոցա, և ես բաւական փող չունիմ այդ բանի համար. իսկ ուրիշից փոխ առնել չեմ կարող, որովհետև ոչ մի դրամատէր չեմ ճանաչում, ուրեմն և վարկ գտնելու յոյս չունիմ։ Մի միջոց էլ է մընում, որ նոր միտս եկաւ, գուցէ կարելի լինի ընկերանալ ուրիշ գործաւորների հետ։

Այս միտքը հաւանելի երևեցաւ դիւղացոց, և սկսան մի առ մի քննել թէ ով կարող էր ընկերանալ Կալատոզ Յովսէփի հետ։

Մէկը առաջարկեց Մուրատենց Յովհաննէսին։

Միւսը յիշեց Քարտաշենց Փիլիպպոսին։

Երրորդը Դարբնենց Յակոբի անունը տուաւ։

Ուրիշ շատ մարդիկ էլ մէկ մէկ յիշուեցան, բայց ամէն մէկի համար ասուեցաւ թէ կամ չի կամենալ, կամ չի կարողանալ ընկերանալ Կալատոզ Յովսէփի հետ։

Եւ ինչի՞ չպիտի կարողանայ։

Որովհետև այդպիսի գործերի մէջ ձեռնարկուին ամէն օր փող չեն վճարում, այլ որոշեալ ժամանակամիջոցից յետոյ, դիցուք երեք

ամիսը մի անգամ, իսկ այդ գործաւորները միջոց չունին այդքան սպասել իրանց փողը ստանալու համար։ Եթէ նոքա մի փոքրիկ դրամագլուխ ունենային, կարող էին ձեռնարկութեան մէջ մտնել, բայց որովհետև չունին, պէտք է օրական վարձ ստանան։

Այս էլ կայ որ գործաւորների մեծ մասը չեն սիրում կորուստ ունենալու վտանգի մէջ լինել, ուստի և փոքրիկ ու յայտնի օգուտը մեծ բայց անյայտ օգուտներից աւելի լաւ են համարում։

«Իսկապէս, ասաց ուսուցիչը, աշխատութիւնը և դրամագլուխը միևնոյն պայմանների մէջ են գտնվում, թէ այստեղ և թէ այնտեղ կարելի է երկու տարբեր ձևերով ընկերանալ. կամ մարդ ձեռնարկութեան յաջողութիւնը և անյաջողութիւնը աչք է առնում, ուրեմն և օգուտին ու վնասին մասնակից լինում, կամ թէ՝ չէ կամենում կորուստի ենթարկուիլ, այլ որոշ եկամուտ ունենալ, և այն ժամանակ դրամագլուխը վճարվում է տոկոսով և աշխատութիւնը վարձով։»

Վարձի զանազան տեսակները.

Մի քոպէ լռութիւնից յետոյ, Տանուտէրը դարձաւ ասաց Կալատոզ Յովսէփին. «Դուցէ մենք կարողանայինք ընկերանալ քո ասած գործի համար, ես կը խօսիմ Խնամի Բարսեղի հետ, և եթէ նա էլ համաձայնի մեզ հետ ընկերանալու, բաւական դրամագլուխ կ՝ունենանք։ Բանն այն է միայն թէ ինչպէս ես մտածում գործը կատարել։»

ԿԱԼԱՏՈԶ ՅՈՎՍԷՓ. — Առհասարակ այսպէս է լինում. մշակների հետ օրով են կապվում, և նայելով պայմանին՝ շաբաթը կամ երկու շաբաթը մի անգամ վճարում են նոցա։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Դժբաղդաբար մշակները միշտ արիութեամբ չեն աշխատում, այնպէս որ բաւական գործ չէ շինվում մի օրուայ մէջ։

ԿԱԼԱՏՈԶ ՅՈՎՍԷՓ. — Ճշմարիտ է, և հէնց այս պատճառով աւելի լաւ կը համարէի չափով կամ, ինչպէս ասում են, կտորով պայման կապել քան թէ օրով. մի սաժէնի համար ոչոչոն կ՝առաջարկեմ, և ամէն մէկին իւր շինած գործի համեմատ կը վճարեմ. այս աւելի ձեռնտու է։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Այդպէս է. միայն, եթէ

օրով բանող մշակը փոքր ինչ ծանր է շարժում, սովորաբար աւելի լաւ գործ է դուրս բերում, այն ինչ չափով կամ կտորով բանողը առ հասարակ շտապում է և կիսկատար գործ է շինում։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Երկաթուղու ընկերութիւնը ունի իւր երկրաչափները, որոնք քննում են թէ ճանապարհը ինչպէս է հարթած ու շինած, և միայն այն ժամանակ են ընդունում երբ գործը լաւ է կատարած։

ԿԱԼԱՏՈԶ ՅՈՎՍԷՓ. — Բայց ես ինքս էլ գործը աւարտած չեմ համարում, եթէ լաւ շինած չէ։ Ինչ կ՝ուզէ լինի, չափով տրուած գործը աւելի արագ է գնում քան թէ օրով բանածը, կարելի է կապուիլ պայմանադրած օրը գործը յանձնել։

ՏԻԳՐԱՆ. — Երկրաչափները օրով են աշխատում թէ կտորով։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Այդ կախուած է գործից։ Կայ ճարտարապետ երկրաչափ որին առաջարկում են մի գործատան, մի ջրանցքի, մի ջաղացքի յատակագիծը շինել, կամ մի ծրագիր պատրաստել. նա իւր յանձն առած գործը կատարում է, իւր աշխատութեան վարձը ստանում է, և դորանով ամէն բան վերջանում

է. այս դէպքում նա կտորով աշխատած կը լինի։ Բայց կան ուրիշները որոնք տարով են աշխատում և որոշեալ ռոճիկ են ստանում։ այդպիսիները նոյն է թէ օրական վարձ ստանային։ Եթէ մի երկրաչափ տարին 1,800 մանէթ է ստանում, օրէնը 5 մանէթ վարձ ստացած կը լինի։

ԱՐԱՄ. — Հապա բժիշկը։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Քաղաքական բժիշկը սովորաբար ամէն մի այցելութեան համար վարձ է ստանում, իսկ զինուորական բժիշկը օրական վարձ է ստանում, որովհետև հաստատուն ռոճիկ ունի։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Երբ մարդ հաստատուն ու որոշ վարձ է պահանջում, պէտք է օրով կամ կտորով բանի։

ՏԻԳՐԱՆ. — Ուրեմն կայ վարձ որ հաստատուն ու որոշ չէ։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Կան դարձեալ գործեր ուր աշխատողը արդիւնքի մի մասն է ստանում։ զորօրինակ, ծովային ձկնորսութեան մէջ այդպէս են անում ուրիշ երկրներում, թէ և այդ սովորութիւնը ձկնորս մշակի համար ձեռնտու չէ, որովհետև երբեմն պատահում է որ շատ սակաւ ձուկ է դուրս գալիս։ Նոյնպէս և

հողի մշակութեան մէջ, երկրագործ կապալառուն կալուածատէրից հողը ստանում է և արդիւնքը նորա հետ կէս անում։ Սորա նման ուրիշ պայմաններ էլ կան, ուր մէկ կողմից արդիւնքն է տրվում, իսկ միւս կողմից աշխատութիւնը։

ՍՕՍ. — Ասում են, օրինակի համար, թէ տեղ տեղ հնձողները տասը կամ տասներկու խուրձից մէկն են ստանում։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Բայց այստեղ արդիւնքն այնքան անորոշ չէ, ոչ էլ կորուստի վտանգ կայ. որովհետև հնձուելու ցորենը արտերումն է, նա շատ է կամ սակաւ, բայց եղածն երևում է, ուրեմն կարելի է նորա արժէքը գնահատել. եթէ ցորենը սակաւ է, պակաս աշխատութիւն էլ է հարկաւոր նորան հնձելու համար։ Այդ նոյնն է թէ մարդ կտորով աշխատէր, նա գիտէ թէ հարիւր կապած խուրձերից որքան պիտի ստանայ. միայն փոխանակ իւր վարձը փողով ստանալու, բնական բերքով է ստանում։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Այդ սովորութիւնը այժմ վերանում է։ Առաջուայ ժամանակները փողը շատ սակաւ էր, ուստի և աւելի բնական բերքերով էին վճարում. այդ վճարը համարեա

միշտ կատարած աշխատութեան համեմատ էր լինում։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Ինչ տեսակ էլ լինի վարձը, աշխատութեան գինը միշտ առաջուց որոշվում և ընդունվում է երկու կողմից։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Հէնց այս էլ մի պատճառ է որ վարձերը երբեմն տէրերի կամ գործաւորների ցանկացածից բարձր են լինում, երբեմն ցածր։ Եթէ գործը շտապով է և գործաւորները սակաւ, վարձերը բարձրանում են. իսկ եթէ գործաւորները աշխատանք չունին, նոքա համաձայնում են պակաս վարձով բանել։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Ճշմարիտ է, բայց այդ տեսակ վարձերը սովորական չեն և չեն կարող տևել։ Երբ վարձագինը շատ բարձր է, տէրը չէ կարող ծախել իւր արդիւնքները, որ շատ թանգ են. իսկ երբ վարձագինը շատ ցածր է, գործաւորները ապրելու միջոց չունին և աշխատում են որքան հնար է ուրիշ զբաղմունքներ գտնել։»

Դասնակաւոր. — Բանթող.

Տիգրանը չէր կարող հասկանալ թէ ինչի՞ վարձագինը երբեմն շատ բարձր և երբեմն շատ ցածր պիտի լինի. նա այդ անիրաւ բան էր համարում ինչպէս տէրերի, նոյնպէս և գործաւորների կողմից, ուստի և իւր տարակոյսը յայտնեց դաստիարակին։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Ասա՛ տեսնեմ, Տիգրան, երբ ֆռիկները հաղուագիւտ են, միթէ աւելի չարժէ՞ն քան երբ շատ են, երբ ամէն երեխայ ֆռիկ ունի։

ՏԻԳՐԱՆ. — Բայց այդ միևնոյն բանը չէ։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Իհարկէ, ֆռիկը աշխատութիւն չէ, մենք խօսում ենք աշխատութեան և ոչ ֆռիկի գնի վրայ։ Բայց դիցուք թէ մի գործաւոր դիմում է մի կօշկակարի, որ միայն երկու գործաւորի համար աշխատանք ունի. ի՞նչ պատասխան կը տայ վարպետը դործ խնդրող կօշկակարին։

ՏԻԳՐԱՆ. — Նա կը պատասխանէ թէ պէտք եղած մարդիկն ունի, թէ նոր մարդու հարկաւորութիւն չունի։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Այժմ ենթադրենք թէ

այդ գործաւոր կօշկակարը ուրիշ շատ վարպետների է դիմել, որոնց արհեստանոցներում ազատ տեղ չլինելով՝ ոչ մէկից չէ ընդունուել. ի՞նչ կ՝անէ նա առանց աշխատանքի։»

Տիգրանը չգիտենալով թէ ինչ պատասխան տայ, Տանուտէրն աւելացրեց. «Ի՞նչ կ՝անէ նա որ քաղցած չմեռնի։

ԱՐՇԱԿ. — Ուրիշ գործի կը կպչի։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Բայց պէտք է կարողանայ. նա փաստաբան կը դառնայ, կամ բժիշկ, այնպէս չէ՞։»

Երեխայքը սկսան ծիծաղել, և ուսուցիչը այսպէս բացատրեց Տանուտէրի կատակը. «Գործաւորը որ այս կամ այն պատճառով չէ կարող իւր արհեստը բանեցնել, բայց ապրուստը ճարելու համար ստիպուած է անգործ չմնալ, միայն այնպիսի հասարակ գործի կարող է կցչել, որ սովորելու հարկաւորութիւն չկայ։ Արդ, հասարակ աշխատութիւնները, որ ամէն մարդ կարող է կատարել, քիչ են վճարվում. բայի սորանից, այն աշխատութիւնները որոնց մարդ սովորած չէ, աւելի են յոգնեցնում. վերջապէս շատ ժամանակ է կորչում նոր գործ որոնելու համար, որ մարդ չէ իմանում թէ ուր գտնէ։ Այս բոլոր պատճառներով, գործաւորը աւելի

լաւ է համարում ասել իւր արհեստի վարպետին. Տուէք ինձ գործ, ես ուրիշներից պակաս գնով կը բանիմ, գոնեա առ ժամանակ։

ՍՕՍ. — Լաւ չէ որ վարպետը օգուտ է քաղում գործաւորի թշուառութիւնից։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Ուզում ես ասել թէ աւելի լաւ կը լինէր եթէ նա պատասխանէր գործաւորին. Տղա՛ս, ես չեմ կարող քո աշխատութիւնը իւր սովորական գնով վճարել, ուրեմն մեռիր քաղցից։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Վարպետը օգուտ չէ քաղում գործաւորի թշուառութիւնից, — այդ շատ վատ բան կը լինէր նորա կողմից. — Ընդհակառակն, նա երբեմն օգնում է նորան իւր. ինասը աչքի առաջ ունենալով, մինչև անգամ երբ պակաս գնով աշխատութիւն է տալիս նորան, [illegible] որ նա այնքան աշխատող չէ՝ [illegible] որքան [illegible] [illegible] [illegible]։

ՍՕՍ. — Այդ ի՞նչպէս։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Ահա ինչպէս։ Մենք խօսում էինք կօշկակարի վրայ, շարունակենք այն օրինակը։ Կօշկակարը կօշիկներ է ծախում, դիցուք զոյգը 5 մանէթով։ Այդ 5 մանէթից մի մասը կաշուն է գնում, մի մասը գործաւորին, մի մասը ուրիշ ծախքերի, և ինչ որ կը

մնայ, այդ վարպետի օգուտն է։ Հասկանալի է որ նա այնքան կոշիկներ է պատրաստել տալիս որքան կարող է ծախել. դիցուք թէ նա կարող է 300 զոյգ ծախել։ Գալիս է մի գործաւոր և ասում է նորան. ես էլ կը բանիմ ձեզ համար։ Կոշկակարը պատասխանում է. ես արդէն 300 զոյգ կարել եմ տալիս, աւելի չեմ կարող ծախել։ — Բայց ես պէտք է աշխատիմ որ կարողանամ ապրել, ասում է գործաւորը, ուստի յանձն կ՚առնեմ պակաս գնով բանել։ Այն ժամանակ կոշկակարը ինքն իրան ասում է. ես այդ աւելորդ կոշիկները պակաս գնով կը տամ, դուցէ առնողներ գտնեմ։ և նա ընդունում է գործաւորի առաջարկութիւնը։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Այսպէսով նա իւր դրամագլխի մի մասը գործ է դնում աւելորդ կաշի առնելու և վարձ վճարելու համար, և եթէ չկարողանայ կոշիկները ծախել, դրամագլուխը ոչինչ եկամուտ չի բերիլ նորան, նա իւր փողի տոկոսը կը կորցնէ։

ԿԱԼԱՏՈՉ ՅՈՎՍԷՓ. — Ես միշտ տեսել եմ որ երբ աշխատանքը շատ է՝ վարձը աւելանում է, և երբ քիչ է՝ պակասում է. այդ բանի առաջ ոչնչով չէ կարելի առնել։

ՍՕՍ. — Ի՞նչպէս չէ կարելի։ Ես լրա-

գրում կարդացել եմ որ ուրիշ երկրներում գործաւորները երկու միջոց ունին տէրերին ստիպելու որ իրանց վարձը աւելացնեն, դաշնակապը և բանթողը։»

«Ի՞նչ է դաշնակապը և բանթողը,» հետաքրքրութեամբ հարցրեց Լեւոնը դառնալով դէպի իւր դաստիարակը։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Ես այդ մասին ոչինչ չասացի, որովհետև մեզանում դաշնակապ ու բանթող ասածը կամ ամենևին չկայ, կամ ուր որ կայ, շատ թեթև ձևով է երևում։ Ուրիշ բան է եւրոպական երկրներում։ Այնտեղ, երբ միևնոյն արհեստի տէր գործաւորները իրանց ըստացած վարձից ժգոհ են, խօսքերը մէկ են անում պահանջելու որ վարձագինը աւելացրնեն, — այդ դաշնակապն է. իսկ երբ տէրերը մերժում են գործաւորների առաջարկութիւնը, սոքա հրաժարվում են հին պայմաններով աշխատելու, — այդ բանթողն է։ Բանթող լինելը ինչպէս հայերէն բառից երևում է, նշանակում է աշխատելուց դադարել։

ՍՕՍ. — Գործաւորը այդ իրաւունքն ունի։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Այո՛, բայց միշտ ձեռնտու չէ նորան գործ դնել իւր իրաւունքը։ Շատ անգամ պատահում է որ մի քանի շաբաթ

կամ մի քանի տարի բանթող լինելուց յետոյ, գործաւորը ստիպվում է զիջումն անել. որովհետև անգործ մնալով, նա ոչինչ չէ շահում, և եթէ մի քիչ խնայած փող ունի, այն էլ ուտում է: Եթէ մինչև անգամ յաջողվի՞ էլ իւր վարձագինը փոքր ինչ աւելացնել տալ, այդ յաւելուածը թանդ գնով է ձեռք բերվում, և ոչ ոք չէ կարող երաշխաւոր լինել թէ անխախտ կը մնայ:

ՍՕՍ. — Ծանր է ուրեմն խեղճ գործաւորի վիճակը եթէ միշտ իւր տիրոջից կախում պիտի ունենայ:

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Չպէտք է մոռանալ որ տէրը զուարճանալու համար չէ աշխատում, այլ իւր աշխատութեան արդիւնքը ծախու հանելու համար: Գնողը կամ սպառողը, իւր կողմից, ծախողին զուարճութիւն պատճառելու համար չէ գնում, այլ որովհետև ցանկանում է ծախու հանուած ապրանքը ձեռք բերել. միայն թէ նա կը կամենայ այդ ապրանքը այս ինչ գնով ստանալ և կը մերժէ այն ինչ գնով առնել: Եթէ նա չհամաձայնի նշանակուած գինը վճարելու, հապա՞ կը պատահի որ ծախողը ստիպէ նորան այդ գնով առնել. ընդհակառակն, համարեա միշտ այնպէս է լինում որ սպառողը

հարկադրում է ծախողին իւր գները իջեցնելու: Ուրեմն քանի որ տէրը չէ կարող իւր ուզածին պէս ապրանքի գինը բարձրացնել, չէ էլ կարող միշտ գործաւորների վարձագինը աւելացնել:

ԿԱԼԱՏՈՉ ՅՈՎՍԷՓ. — Հասկանալի է որ նա աւելի լաւ կը համարի գործը դադարեցնել քան թէ վնասով աշխատել:

ՍՕՍ. — Բայց եթէ գործաւորը այնքան չէ՞ ստանում որ կարողանայ ապրել:

ԿԱԼԱՏՈՉ ՅՈՎՍԷՓ. — Գործաւորները միշտ բաւական վարձ չեն ստանում, այդ ուղիղ է. բայց շատ անգամ պատահում է որ ծոյլ մարդիկ չեն աշխատում պատճառ բռնելով թէ իրանց աշխատութիւնը քիչ է գնահատվում:

ՏԱՆՈՒՏԻՐԸ. — Այդպիսիները լաւ կ'անէին եթէ աշխատէին մի քիչ խնայութիւն անել. որքան աւելորդ ծախքեր են լինում:

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Մարդ պէտք է գիտենայ տնտեսութեամբ ապրել: Եթէ մէկը կամենում է իւր գործը փոխել, թող փոխե՝ թէ կարող է ուրիշ արհեստ բանեցնել. միայն այս չպէտք է մոռանալ, որ ամէն մարդ կարող է իւր վիճակը բարւոքել՝ որքան կարելի է շատ և լաւ գործ ձեռքից դուրս բերելով:

Գործակցական ընկերութիւն.

ՅՕՍ. — Ես կարդացել եմ որ լուսաւորեալ երկրներում արհեստաւորները, իրանց վիճակը բարւոքելու նպատակով, գործակցական ընկերութիւններ են հիմնում: Ինչպէս երևում է, դուք հաւատ չէք ընծայում այդ տեսակ ընկերութիւնների յառաջադիմութեանը, որ այդ մասին ոչինչ չասացիք:

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Ես հաւատ եմ ընծայում միայն կրօնական նիւթերի մէջ. ուրիշ ամէն՝ բանի մէջ, բարեկամ, ես ցանկանում եմ գիտենալ, քննում եմ իրողութիւնները, հաւաքում եմ փորձերը, և միայն այն ժամանակ իմ դաղափարը կազմում եմ իրերի վրայ:

«Օրինակի համար, երբ կամենում եմ գիտենալ թէ ճշմարիտ է որ կրակին դիպչելով մարդ այրվում է, մատս կրակին մօտեցնում եմ: Եթէ կամենամ գիտենալ թէ արդեօք աւելի լաւ է ամբողջ գետնախնձորներ ցանել քան թէ կտորներ, երկուսից էլ ցանում եմ և արդիւնքները համեմատում եմ:

«Նոյնը կ՚ասեմ և գործակցական ընկերութեան մասին. որպէս զի չսխալուինք, պէտք է սպասենք տեսնել այդ տեսակ ընկերութիւնների արդիւնքները:

ԱՐՏԱՇԷՍ. — Ի՞նչ է գործակցական ընկերութիւնը:

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Գործակցել նշանակում է միասին գործել, միասին աշխատել: Կան մարդիկ որոնք կարծում են թէ՝ եթէ գործաւորները միմեանց հետ ընկերանան, փոխանակ իրանց գլխին մի տէր ունենալու, աւելի կը շահին և բոլորն էլ երջանիկ կը լինին:

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Եթէ ժամանակին անձրև և լաւ եղանակ չլինի, կը ցանկայի իմանալ թէ այդ ձեր ասած ընկերութիւնը ինչպէս կը բուսցընէ և կը հասցնէ պտուղները. և եթէ պատերազմ լինի, ինչպէս կ՚աղատէ տները այրուելուց:

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Ես չէի կամենում խօսել գործակցական ընկերութիւնների վրայ, քանի որ դեռ Եւրոպայումն անգամ բաւական փորձեր չեն արել այդ մասին: Քիչը կան այդ տեսակ ընկերութիւնների մէջ որ յաջողած լինին, շատերը ընդհակառակն երկար տևողութիւն չեն ունեցել և սակայն գուցէ դեռ վաղ լինի դատել նոցա մասին: Բայց եթէ կամենում էք, կ՚ասեմ ձեզ իմ արած դիտողութիւններս այդ խնդրի վրայ:

ԲՈԼՈՐԸ. — Այո՛, այո՛, ասացէ՛ք։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Նախ մտածեցի ես, մարդ միայն այն բաների համար է ընկերանում որ մենակ չէ կարող անել։ Եթէ ես կարող եմ մենակ շինել մի գործ որ ինձ 5 մանէթ կը բերէ, ուրիշի հետ չեմ ընկերանալ իմ եկամուտիս կէսը նորան տալու համար։

«Ուրեմն մարդ միայն այն ժամանակ է ընկերանում երբ այլապէս չէ կարող անել, կամ որովհետև բաւական հարուստ չէ, կամ որովհետև բաւական կարողութիւն և ճարպիկութիւն չունի ինքը մենակ մի գործ կամ մի աշխատութիւն գլուխ տանելու։

«Մարդս չէ սիրում իւր շահերը ուրիշի շահերի հետ խառն տեսնել, այնպէս որ մի գործի համար ընկերացող անձինքը կարծես միմեանց վրայ տէր լինէին։

«Դարձեալ երբ մի քանի հոգի ընկերանում են, յաճախ պատահում է որ ամէն մի ընկերակցիչ կամենում է գործը կառավարել, որով և անհամաձայնութիւն է ծագում. բայց հարկաւոր է որ մէկը լինի կառավարող, և ով որ կառավարում է՝ պէտք է միևնոյն ժամանակ և բանել գիտենայ և ծախել։

«Վերջապէս, այդ տեսակ ընկերութիւննե-

րի մէջ, կամենում են հաստատել վարձերի հաւասարութիւնը, որ անարդարութիւն է. որովհետև ամէն մարդ պէտք է իւր աշխատութեան համեմատ վարձ ստանայ։

ԱՐՇԱԿ. — Այդ նոյնն է թէ միևնոյն գինը տային մի եղան և մի արջարի համար։

ԿԱԼԱՏՈՉ ՅՈՎՍԷՓ. — Երբ գործերը ամենի համար վատ են գնում, գործաւորների ընկերութեան համար էլ վատ կը գնան։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Բանն այն է որ գործարանի տէրը, դրամագլուխ ունենալով, կարող է շատ անգամ ձախորդութեան դիմանալ և իւր գործաւորներին պարապեցնել սպասելով աւելի յաջող ժամանակների. իսկ գործաւորների ընկերութիւնները շուտով նեղութեան մէջ կ՚ընկնին։

ԿԱԼԱՏՈՉ ՅՈՎՍԷՓ.— Եւ գնողները իհարկէ աւելի թանգ գնով չեն առնիլ նոցա ապրանքները։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Տեսնում է՛ք, սիրելի Սօս, մեր հարևանները այն կարծիքը չունին թէ գործակցական ընկերութիւնները կարող են բոլոր մարդկանց երջանկացնել. չկայ և երբէ՛ք չէ կարող լինել մի հաստատութիւն որ ամէնին երջանկացնէ։ Այս աշխարհում պէտք է որ ամէն

մարդ ինքը պատրաստէ իւր երջանկութիւնը, և դորա համար, կրկնում եմ դարձեալ, մի միայն հաստատուն միջոց կայ. աշխատել և խնայել։

Մեքենաներ.

ՅՕՍ. — Ես ընդունում եմ որ աշխատութիւնն ու խնայութիւնը յառաջադիմութեան միջոցներ են մարդու համար, որնոր այդպէսով կարող է լաւ դրութեան և մինչև իսկ հարբստութեան հասնել։ Բայց ի՞նչ շահ Մարկոսի ու Կիրակոսի համար որ Պետրոսը իւր աշխատութեամբ ու խնայութեամբ իրան և իւր դերդաստանին օգուտ է բերում։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Եթէ բոլոր մարդիկ աշխատասէր ու խնայող լինէին, և ամէնքը իմաստուն ու հարուստ դառնային, էլ որ տեղից կը լինէին ծոյլ շռայլ ու չքաւոր մարդիկ։ Եթէ ամէն ոք բարութիւն անէր, էլ չարութիւն անող չէր լինիլ. թող ամէն մէկը իւր կողմից աշխատի առաջ գնալ, և ամէնքը յառաջադիմութիւն կ՝անեն։ Ամէնքը ասելով, պէտք է հասկանալ հասարակութիւնը, և աւելի ընդարձակ մտքով՝ մի երկրի ժողովուրդը, բոլոր մարդկային ազգը։

«Բայց եթէ ես այստեղ յատկապէս ամէն մի մարդու վրայ առանձին եմ խօսում, չը պէտք է մոռանալ և այն՝ որ կան դէպքեր ու հանգամանքներ որոնք մի անգամից կարող են մեծ բարիք կամ չարիք անել մարդկային ընկերութեանը։

«Օրինակի համար, պատերազմը մի չարիք է որի հետևանքները զգալի են ամբողջ հասարակութեան համար. ընդհակառակն, շոգեշարժ մեքենայի գիւտը այնպիսի մի բարիք է որի համար մարդկութիւնը յաւիտեան պիտի երախտագէտ լինի։ Ամենայն մեքենայ նպաստում է ընկերական յառաջադիմութեանը։

ՏԻԳՐԱՆ. — Այդ ի՞նչպէս։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Մի օրինակով բացատրեմ։ Կար ժամանակ, և այդ մեզանից շատ առաջ էր, երբ ցորենի հատիկները սանդի (հավան) մէջ ծեծում և ապա մաղից անց էին կացնում ալիւր ստանալու համար։

ԱՐՇԱԿ. — Այդ շատ դժուար և շատ ծանր պիտի լինէր։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Անտարակոյս։ Ամէն տան մէջ պէտք է մէկը ամէն օր մի քանի ժամ շաբունակ ցորենը ծեծելով պարապէր։ Իսկ այժմ ի՞նչ են անում։

ՍՄԲԱՏ. — Ցորենը ջաղացք են տանում։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Եւ յաճախ մի միայն ջաղացպան բաւական է ամբողջ գիւղի ցորենը աղալու։

ՏԻԳՐԱՆ. — Ես տեսել եմ թէ ինչպէս է աշխատում ջաղացպանը։ Նա լցնում է ցորենը մի տեսակ փայտէ ձագարի մէջ. կամաց կամաց հատիկները թափվում են երկանաքարերի վրայ, որոնցից վերինը պտտելով հատիկները աղում է և աղածը ածում է մի փայտէ արկղի մէջ։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Տեղ տեղ, ուր որ արհեստները աւելի կատարելագործուած են, այդ փայտէ արկղի մէջ մի մաղ կայ պարկի ձևով կախ արած, որ անդադար շարժվում է, այնպէս որ ալիւրը մաղուելով հաւաքվում է արկղի մէջ, իսկ թեփը գնում թափվում է ուրիշ արկղի մէջ։ Երբ բոլոր հատիկները աղուած են, այսինքն երբ ձագարը դատարկ է, մի փոքրիկ զանգակի ձայն է լսվում, որ իմաց է տալիս ջաղացպանին թէ պէտք է ձագարի մէջ ուրիշ հատիկներ ածել։

ՍՄԲԱՏ. — Ի՞նչ հիանալի բան։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Արդարև, հիանալի է։ Մեքենան կատարում է գործի ամենամեծ և մի-

անդամայն ամենադժուար մասը, բացի սորանից նա արագ և լաւ է բանում։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Առաջուայ ժամանակները արհեստաւորները կարծում էին որ եթէ մեքենաները շատանան, իրանք անգործ կը մնան. իսկ այժմ փորձը ցոյց տուեց որ մեքենաները ոչ միայն վնաս չեն բերում, այլ նաև օգտակար են արհեստաւոր դասի համար։

ԿԱԼԱՏՈԶ ՅՈՎՍԷՓ. — Ի՞նչպէս կարելի է բացատրել այդ բանը։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Այդ հասկանալի է։ Մեքենաները շուտ բանելով պակասեցնում են ապրանքների գինը. ապրանքները աւելի են ծախվում, ուրեմն և աւելի շինվում են, արհեստաւորների թիւն էլ հարկաւ պիտի աւելանայ։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Շատ ճշմարիտ է։ Հին ժամանակներում, մի գիրք ունենալու համար, պէտք էր ձեռքով արտագրել Նորան. դորա համար երբեմն երեք ամիս ժամանակ էր հարկաւոր, և ուրեմն այդպիսի մի գիրք ձեռք բերելու համար՝ պէտք էր արտագրողի երեք ամսուայ վարձը վճարել, դիցուք 200 մանէթ։ Այսօր որ տպագրութեան արհեստը կատարելագործուած ու տարածուած է, 200 մանէթով դուցէ կարելի լինի 200 հատոր այդպիսի

գիրք ձեռք բերել։ Քիչ մարդիկ կարող էին գնել այդ գրքերից, որոնց օրինակելը միայն (առանց հաշուելու ուրիշ ծախքերը, որպիսի են թուղթը, կազմը, գրավաճառի օգուտը,) 200 մանէթ արժէր, մինչդեռ այժմ հազարաւոր մարդիկ կարող են 1 մանէթանոց գիրք գնել։ Գրքերի գինը պակասելով, առաջուանից աւելի են շինվում, և ով որ առաջ տասը հատոր գիրք ունէր, այսօր տպագրութեան շնորհով հազարաւոր հատորներ ունի։ Տպագրութեան շնորհով է նոյնպէս, որ ուր որ առաջ ՝ի արտագրող կար, այժմ հարիւրաւոր տպագրողներ ենք գտնում։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Մի արհեստաւոր որ օրէնը հինգ դանակ է շինում և հատը 10 շայով է ծախում, մեծ բան չէ շահում։ Եթէ հնար ունենայ տասը դանակ շինելու և հատը 2 արաւով ծախելու, աւելի կը շահի, թէ և դանակների գինը պակասեցրած կը լինի գնողների համար։ Իսկ եթէ մեքենայի օգնութեամբ օրը հարիւր դանակ դուրս բերէր և հատը 3 շայով ծախէր, նա կը հարստանար — և արժանի կը լինէր հարստանալու, — որովհետև այդպէսով միջոց կը տար դանակները ձեռք բերելու այն անձանց որոնք չեն կարող 3 շայից աւելի

մնալ այդ օգտակար գործիքի համար։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Դորան ասում են՝ դանակները ամէն կարգի անձանց մատչելի անել։ Եթէ մարդ կարողանար 1 մանէթով կօշիկ կարել, էլ տրեխ հագնողներ և բոպիկ մանեկողներ չէին լինիլ. և եթէ կարելի լինէր մի վերարկու 2 մանէթով տալ...

ՍՕՍ. — Աժան գնով օգտակար ապրանքներ պատրաստել և միևնոյն ժամանակ փող շահել թէ արտադրողի և թէ սպառողի համար ձեռնտու է. դորանով գործաւորը ոչ միայն ինքն է շահվում, այլ և հասարակութեանը ծառայութիւն է մատուցանում։ այդ կատարեալ բարերարութիւն է։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Ուրեմն, մեքենաները ազատում են մարդկանց ամենածանր աշխատութիւններից. նոքա բազմացնում են արդիւնքները, նոցա գները պակասեցնում են և ամէն կարգի ու կարողութեան տէր անձանց մատչելի են անում։ Նոքա մինչև անգամ այնպիսի աշխատութիւններ են կատարում որ մարդիկ կարող չեն անել. բաւական է յիշել միայն երկաթուղիների շոգեշարժ մեքենաները։ Բայց չպէտք է կարծել թէ միայն մեծ մեքենաները մեծ ծառայութիւններ են մատուցանում մարդկանց.

մի փոքրիկ մեքենայ և մինչև իսկ մի հասարակ գործիք կարող են շատ օգտակար լինել և մեր բարօրութեանը նպաստել։

«Միով բանիւ, մի հասարակութեան մէջ որքան շատ արդիւնքներ պատրաստուին, այնքան այդ հասարակութիւնը աւելի հարուստ է. և ամենայն ինչ որ նպաստում է արդիւնքները աւելացնելու, օգնում է մարդկանց բարեկեցութիւնը բարձրանալու։

ԿԱՂԱՏՈՂ ՅՈՎՍԷՓ. — Հապա ինչից է որ մեզանում, ուր որ մեքենաները սկսում են մտնել, գործաւորները ժգոհ են։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Դժբաղդաբար մեքենան արհեստաւորի հետ մրցելով՝ մի քիչ ժամանակ վնասում է նորան, բայց շուտով այդ բանի առաջն առնվում է։ Պէտք է միայն օգնութիւն հասնել այն անձանց որոնք առժամանակ վնաս են կրում, որպէս զի այնքան զգալի չլինի նոցա այն փոխանցական միջոցը որով մէկ վիճակից ուրիշ աւելի լաւ վիճակի են հասնելու։»

Մրցում.

Մի երիտասարդ գիւղացի, Վարդան անունով, նոր էր վերադարձել քաղաքից, ուր սովորել էր դերձակութեան արհեստը։ Նա բաց արեց մի խանութ և սկսեց աշխատել, և թէպէտ նա աւելի լաւ էր կարում քան թէ գիւղի առաջուայ դերձակը՝ Ծերունի Պապիկը, բայց և այնպէս գները պակասացրեց։

Դերձակ Պապիկը չկարողանալով մրցել նորեկ արհեստակցի հետ, սկսեց տնէ տուն մտնել և ասել թէ Վարդանը մեքենայի վրայ է կարում, թէ նորա կարը պինդ չէ, և ուրիշ սորա նման բաներ։

Բայց ոչ ոք ականջ չդրեց նորան. ընդհակառակն, բոլոր գիւղը գնաց Վարդանի կարի մեքենան տեսնելու։ Երիտասարդ դերձակը ոտով պտոյտ էր բերում մեքենան, իբրև մի ճախարակ կամ մի անիւ, ցոյց էր տալիս իւր կարը և ապացուցանում էր թէ շատ պինդ է, թէև արագ էր բանում։

Այն ժամանակ խօսք բացուեցաւ մրցման վրայ և նորա տուած օգուտի ու վնասի վրայ, և ամէնքը համաձայնեցան որ վնասը շատ անչնչան է օգուտի հետ համեմատելով։

«Դերձակ Պապիկը, ասաց մէկը, կարող է, եթէ կամենայ, կարի մեքենայ ձեռք բերել։

— Մի՞թէ մենք պիտի միշտ շորերի համար շատ փող վճարենք որ ինչ է՝ դերձակ Պապիկին դուր գանք, աղաղակեց մի ուրիշը։

— Ճշմարիտ յառաջադիմութիւնը այն է՝ որ աշխատութեան արդիւնքները աժան լինին առանց աշխատութեան վարձը պակասեցնելու։

Մրցումը օգտակար է, ասաց ուսուցիչը, երբ նորա կարծիքը հարցրին։ Մտաբերում էք թէ որքան արժէր շաքարը երբ միայն մի մանրավաճառ կար մեր գիւղում։

ՏԻԳՐԱՆ. — Ֆունտը հինգ շայի։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Իսկ ա՞յժմ։

ՏԻԳՐԱՆ. — Մի աբասի։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Մանրավաճառը վճարում է միայն տասնվեց կամ տասնեօթը կոպէկ, ճանապարհի ծախքը արժէ մէկ կոպէկ, ընդամէնը տասնութ կոպէկ։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Սահակ եղբայրը շատ թանգ էր վճարել տալիս մեզ, երբ մէկ ֆունտի համար հինգ շայի էր առնում։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Դուցէ ոչ։ Տեսէք, եթէ դուք գիւղի մէջ միակ շաքար բանեցնողը լինէիք, և կամենայիք քաղաքից հինգ ֆունտ

շաքար բերել տալ, գոնէ 1 մանէթ կը վճարէիք ճանապարհի ծախքի համար, և ենթադրելով թէ հինգ ֆունտ շաքարը կը ստանայիք 85 կոպէկով, ընդ ամէնը կը տայիք 1մ. 85 կ., կամ 37 կ. մի ֆունտ շաքարի համար։ Եթէ աւելի շաքար գնէիք, օրինակի համար, 10 ֆունտ, բերողին դարձեալ մէկ մանէթ կը տայիք, և շաքարը կ'արժէր ձեզ 1 մ. 35 կ. փոխանակ 1 մ. 85 կ.

«Այժմ, յայտնի է որ Սահակ եղբայրը պէտք է իւր առուտուրով ապրի, և ապրելու համար դուցէ նա ստիպուած էր շաքարը 25 կոպէկով ծախել։ Գալիս է մի ուրիշ մանրավաճառ որ պակասով գոհ է լինում, պէտք է որ Սահակ եղբայրն էլ իւր գները պակասեցնէ, թէ չէ՝ նա իւր մուշտարիները կը կորցնէ։ Այս էլ կայ որ նորեկ մանրավաճառը դուցէ հնար է գտնում իւր ապրանքը պակաս գնով բերել տալու։

ՍՕՍ. — Պարզ է որ մրցումը պակասեցնում է ապրանքների գները, և ամէնքը օգուտ են քաղում այդ բանից։

ԿԱԼԱՏՈԶ ՅՈՎՍԷՓ. — Բայց վաճառականին վնաս է բերում մրցումը։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Այդ դեռ յայտնի չէ։ Քա-

նի որ շաքարի գինը պակասեցաւ, մեր գիւղացի եղբայրները աւելի շաքար են բանեցնում, և Սահակ եղբայրը գուցէ առաջուանից պակաս օգուտ չունի։

ՏԱՆՈՒՏԻՐԸ. — Չկարծեմ թէ շաքարը այնքան բերէ նորան որքան նոր մանրավաճառի գալուց առաջ, բայց նա այժմ ուրիշ բաներ էլ է ծախում, երկաթեղէններ, դանակներ, բահեր, մուրճեր, և իսկապէս առաջուանից աւելի է շահում։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Եթէ մրցումը չլինէր, նա առաջուան պէս կը շարունակէր, բայց մրցումը դրդում է մարդկանց աւելի գործունեայ լինելու, և մենք այդ բանից օգուտ ենք քաղում, որովհետև այժմ մեր գիւղում գտնում ենք այն գործիքները որ առաջ ստիպուած էինք գնալ քաղաքից բերել։

ՏԻԳՐԱՆ. — Նոր մանրավաճառն էլ գլքեր է ծախում, նա ընդունում է նոյնպէս յանձնարարութիւններ քաղաքից պէտք եղած բաները բերելու։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Մենք աշխատում ենք միշտ որքան կարելի է աժան գնով ձեռք բերել այն առարկաները որ մեզ հարկաւոր են, գործարանատէրը և վաճառականը այդ բանը գիտեն,

ուստի և ամէն ջանք են անում աժան գնով արտադրելու։ Ով որ ամէնից աժան է ծախում՝ գնողներին իւր մօտ է գրաւում, փող է շահում և այդպէսով վարձատրվում է իւր գործ դրած ջանքերի համար, միևնոյն ժամանակ հասարակութեանն էլ ծառայութիւն է մատուցանում։

«Սակայն, պէտք է աւելացնել որ մարդ առաւել թանգ է վճարում աւելի լաւ ապրանք ձեռք բերելու համար, բայց այդ նոյնն է թէ աւելի աժան գնով առնէր, որովհետև լաւ ապրանքը աւելի երկար է դիմանում։»

Մենավաճառութիւն.

ՏԱՆՈՒՏԻՐԸ. — Խօսք չկայ որ մրցումը լաւ բան է, բայց ի՞նչ անես որ միշտ կարելի չէ մրցել։

ՍՕՍ. — Իհարկէ, եթէ, օրինակի համար, Պ. Շահպազեանը միակ անտառ ունեցողը լինէր մեր կողմերում, և հարկ լինէր երկու հարիւր վերստ տեղ գնալ փայտ բերելու համար, նա միակ փայտ ծախողը կը լինէր մեզանում, ուրեմն և այդ հարկաւոր նիւթի մենավաճառութիւնը կ՚ունենար։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Հարկաւոր չէ անտառ ունենալ մենավաճառութիւն ունենալու համար. եթէ այստեղ միայն մի դարբնի համար տեղ լինի և եթէ մի երկրորդը չկարողանայ նորա կողքին աշխատելով իւր ապրուստը ճարել, առաջին դարբինը ինքնըստինքեան, այսինքն բոլորովին բնականաբար, դարբնութեան մենավաճառութիւնը կ՝ունենար մեր գիւղում:

ՍՄԲԱՏ. — Մենավաճառութիւնը մրցման հակառակն է, այնպէս չէ՞:

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Այո, այդպէս է:

ՍՄԲԱՏ. — Ուրեմն մենավաճառութիւնը վատ բան է, քանի որ մրցման համար ասուեցաւ թէ լաւ բան է:

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Մենավաճառութիւնը լաւ է նորա համար որ այդ արտօնութիւնը վայելում է, որովհետև կարող է գները բարձրացընել:

ՍՕՍ. — Բայց մենավաճառութիւնը լաւ չէ սպառողների համար, որովհետև նոքա են վճարում բարձր գները:

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Կան մենավաճառութիւններ որոնք ինքնըստինքեան են առաջ գալիս, ինչպէս երբ ամբողջ գաւառում միայն մի բժիշկ կայ, կամ երբ երկուսը կան, բայց բոլոր

ժողովուրդը միայն մէկի վրայ վստահութիւն ունի: Կան դարձեալ բնական մենավաճառութիւններ, ինչպէս երբ մէկը մեծ տաղանդ ունի նկարչութեան մէջ, միւսը երաժշտութեան մէջ, երրորդը երևելի ատենաբան է, կամ նաև շատ ճարպիկ արհեստաւոր է, դերձակ, ատաղձագործ, կաղմարար և այլն: Մեզ ցնում է միայն հիանալ այս բնական մենավաճառութիւնների վրայ որոնց դէմ համարեա երբէք չեն գանգատում մարդիկ. տժգոհութիւն պատճառում են միայն այն մենավաճառութիւնները որ օրէնքով սահմանուած են մի քանի երկրներում: Բայց մեղանում տէրութիւնը այլ ևս մենավաճառութեան արտօնութիւնը ոչ ոքի չէ տալիս, եղածներն էլ կամաց կամաց վերացնում է: Այսպէս, օրինակի համար, առաջուան ժամանակները Սալիանից ձուկ որսալու արտօնութիւնը մի մարդու էր տրվում, որ իւր ուզած գներով ծախում էր ձուկն ու ձկնկիթը. բայց մի տարի կայ որ ձկնորսութեան մենավաճառութիւնը վերջացաւ, և այժմ ձուկ որսալու իրաւունքը բաժիններով տրվում է շատ անձանց, որով և կարելի է ասասել որ ձկնեղէնի գինը փոքր ինչ պակասի: Նոյնը պէտք է ասել և Կողբի աղահանքի համար, որի մենավաճառութիւնը տէ-

րութեան հանած նոր օրէնքով շուտով դադարելու է։ Եթէ մեր օրերում մեզ թվում է թէ մի մանաւոր մարդ դեռ ևս մենավաճառութեան արտօնութիւնը վայելում է, եթէ բանը լաւ քննենք՝ կը տեսնենք որ այդ արտօնութիւնը հասարակաց օգտի համար է տրուել, այն էլ որոշեալ ժամանակով։

ՍՕՍ. — Կը ցանկայի լսել մի օրինակ։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Հեռու չգնանք, մեր դաւառի քաղաքներից մինը տալիս է մեզ այդպիսի մի օրինակ։ Որովհետև այդ քաղաքը այնքան միջոց չունէր որ կարողանար մի կամուրջ շինել գետի վրայ, եկաւ մի մանաւոր մարդ և առաջարկեց կամուրջը շինել այս երկու պայմաններով. 1) որ թոյլ չտրուի ուրիշն մի երկրորդ կամուրջ շինել 25 տարուայ ընթացքում. 2) որ իրաւունք տրուի իրան կամուրջի վրայով անցուդարձ անողներից մի բան ստանալ։

«Եւ որովհետև կամուրջի հարկաւորութիւն կար, քաղաքը ուրախութեամբ ընդունեց այդ առաջարկութիւնը։ Ահա մի արտօնութիւն որ հասարակաց օգտի համար է տրրվել։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Այդպիսի մի բան Թիֆլիսումն էլ լսել սորանից մէկ երկու տարի ա-

ռաջ. խօսք կար քաղաքի լուսաւորութիւնը կապալով տալու մի ընկերութեան, բայց թէ ինչ տեսակ լուսաւորութիւն էր կամ ինչ պայմաններով է տրվում, այդ չգիտեմ։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Լաւ մտաբերեցիք ինձ. խօսքը գազի լուսաւորութեան վրայ էր։ Մի ընկերութիւն առաջարկում էր քաղաքային վարչութեանը Թիֆլիսի փողոցները և մինչև խանութներն ու մանաւոր տները գազով լուսաւորել, ի հարկէ այն պայմանով որ ուրիշը իրաւունք չունենար այդ գործով պարապելու, ապա թէ ոչ ընկերութիւնը կարող էր մեծ վնասներ կրել։ Եթէ գործը գլուխ եկած լինէր, քաղաքն անշուշտ այնպիսի պայմաններ կը դնէր որ մենավաճառութիւնը վնասակար հետևանքներ չունենար. նա մի հաստատուն գին կը դնէր գազի համար և կը պահանջէր որ ընկերութիւնը պարտաւորուի հետզհետէ մոցնել այն կատարելագործութիւնները որ ուրիշ տեղերում կարող էին գտնուիլ գազի լուսաւորութեան մէջ։

«Բայց, ինչ և լինի, մենավաճառութիւնը մեծ զգուշութեամբ և միայն մի քանի բացառիկ դէպքերում պիտի թոյլ տրուի։ Կայ մէկ երկու մենավաճառութիւն որ տէրութիւնն է

հաստատել և որոնց դէմ ոչ ոք չէ տրտնջում, որովհետև նոցա օգտակարութիւնը ամէնի համար ակներև է. այսպէս են նամակատան և հեռագրատան հաստատութիւնները, որոնց մենավաճառութիւնը ամէն տեղ կառավարութեան ձեռքին են։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Ես կարծում եմ որ երբ մի մասնաւոր մարդ ինքնըստինքեան մի մենավաճառութեան արտօնութիւնը վայելում է, ինչպէս երբ մի տեղ մի միայն կօշկակար կայ, այդպիսի մենավաճառութեան դէմ կարելի է մի հնար դտնել։

ՍՕՍ. — Ի՞նչ հնար։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Եթէ նա գները շատ է բարձրացնում, ով է արգելում մեզ մօտակայ գիւղը գնալ կօշիկ առնելու։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Արդարև, սպառողը յաճախ կարող է այդ տեսակ մենավաճառութիւնների առաջն առնել, և այն՝ հեշտութեամբ. բաւական է որ նա չկամենայ ենթարկուիլ արտադրողի խիստ մեծ պահանջմունքներին։»

Սպառում.

Մի օր, դասատան մէջ, աշակերտները մի հատուած կարդացին ուր յաճախ կրկնվում էր սպառում բառը, ինչպէս նաև սպառել և սպառող բառերը։ Սմբատը որ այդ բառերի իմաստը լաւ չէր ըմբռնել, հարցրեց. «Ի՞նչ է նշանակում սպառել։

ՏԻԳՐԱՆ. — Ես գիտեմ. սպառել նշանակում է ուտել։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Այդ բառը միայն այն ժամանակ գործ է ածվում այդ առմամբ երբ խօսքը ուտելեղէնների վրայ է, հացի կամ մսի վրայ. իսկ եթէ խօսքը գինու վրայ լինէր, սպառել կը նշանակէր խմել։ Բայց երբ կ'ասէինք թէ մարդը իւր հագուստը սպառեց։

ՏԻԳՐԱՆ. — Հագուստը չէ ուտվում, ուրեմն և չէ կարելի սպառել նորան։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Իհարկէ, ոչ ոք հագուստները չէ ուտում, այլ հագնում է. բայց մի՞թէ չէ կարելի ասել թէ մի մարդ իւր հագուստը սպառում է, եթէ այնքան հագնի նորան մինչև որ մաշուի։

ՏԻԳՐԱՆ. — Ես այդպիսի բան չեմ լսել։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Սովորաբար չէն ասում թէ մարդ սպառում է իւր տունը, այդ շատ խորթ կը դար մեր ականջին. բայց եթէ մէկը այդպիսի մի բան ասէր, ի՞նչ նշանակութիւն կ՚ունենար այդ խօսքը։

ԱՐՏԱՇԵՍ (փոքր ինչ մտածելուց յետոյ). — Թէ մէկը այդ տան մէջ բնակում է։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Շատ լաւ։ Սպառել մի տուն, այդ կարող է միայն մի բան նշանակել, այսինքն թէ այդ տան մէջ բնակում են. և տունը բոլորովին սպառուած համարվում է միայն այն ժամանակ երբ . . .

ՏԻԳՐԱՆ.—Երբ հարկ է լինում նորից շինել։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Այժմ ո՞վ կարող է ասել թէ ինչպէս են սպառում երաժշտութիւնը։

ԱՐՇԱԿ. — Լսելով։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Հապա գիրքը։

ԱՐՏԱՇԵՍ. — Կարդալով։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Ուտելեղէնները պատրաստվում են ուտելու համար, հագուստը՝ հագնելու համար, տունը՝ մէջը բնակելու համար, երաժշտութիւնը՝ լսուելու համար, գիրքը՝ կարդացուելու համար. սպառել մի առարկայ նշանակում է ուրեմն . . . ո՞վ կ՚ասէ, ինձ իսկական բառը։

ԱՐՏԱՇԵՍ. — Գործ ածել մի առարկայ։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Այո՛, սպառել նշանակում է օգտակար կերպով գործ դնել. այդ նշանակում է ամէն մի առարկայից այն գործածութիւնը անել որի համար նա նշանակուած է։

Ասացէք ինձ այժմ. կարել մի հագուստ, արդեօք այդ նշանակում է նորան սպառել։

ԱՐՇԱԿ. — Ո՛չ, կարել մի հագուստ, չէ նշանակում այդ հագուստը սպառել, այլ արտադրել։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Ուրեմն դերձակը չէ՞ հագուստը սպառողը։

ԱՐՏԱՇԵՍ. — Նա սպառում է մահուդը, ասեղները ու թելը որոնցով հագուստը կարում կամ արտադրում է։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Արդարև, քանի որ մարդկանց գործածութեան համար պատրաստուած առարկաները գործարանատիրոջ կամ վաճառականի մօտ են, արդիւնքներ կամ ապրանքներ են. նոքա միայն այն ժամանակ սպառման մէջ են մտնում երբ վերջին գնողի ձեռքն են ընկում։ Երբ մի բան այլևս ծախու չէ, ասում են յաճախ թէ սպառուել է։

«Ես կը ցանկայի գիտենալ թէ արդեօք դերձակի գնած մահուդը սպառուած է։

ՏԻԳՐԱՆ. — Վաճառականի համար, այո՛, բայց ոչ դերձակի համար։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. Դերձակը մահուդը գնում է իբրև նախնական նիւթ (դուք մտաբերում էք թէ այդ ի՛նչ է նշանակում), ձևում, կարում և հագուստի է ձևափոխում նորան. այդ նշանակում է թէ մահուդը գործածութեան մէջ մըտաւ։

«Արդեօք բոլոր արդիւնքները կարելի՞ է ձևափոխել, ո՞վ կ՚ասէ ինձ այդ։

ԱՐԱՄ. — Հագուստը չէ կարելի ձևափոխել։

ԱՐՇԱԿ. — Ոչ էլ տունը։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Դուք հասկանում էք այժմ որ կան՝ 1) արդիւնաւոր սպառումներ (երբ գործ են ածում մի առարկայ). 2) վերարտադրիչ սպառումներ (նախնական նիւթեր և զանազան տեսակ եկամուտներ). և 3) ապարդիւն սպառումներ երբ մարդ փչացնում է առարկաները առանց գործածելու կամ ձևափոխելու նոցա։

«Երբ խօսքը պարզապէս սպառելու վրայ է, այդ նշանակում է միշտ գործածել։»

Հոգայութիւն և խնայութիւն.

Տիգրանը չէր կարող հասկանալ թէ ինչպէս կարելի է առարկաները առանց գործածութեան փչացնել, կամ, ինչպէս ուսուցիչն ասել էր, «պարզապէս էլրպով սպառել» ուստի մի քանի բացատրութիւններ խնդրեց։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Զգէտք է բառական մըտքով ընդունել «էլրպով» բառը, խօսքը միայն նորա վրայ է երբ օգտակար առարկան ոչինչ ծառայութիւն չէ անում մեզ։ Զոր օրինակ, եթէ մէկը մի գիրք գնէ, և առանց կարդալու մի անկիւն ձգէ նորան, գիրքը (կամ նորա արժէք փողը) ապարդիւն կերպով սպառուած կը լինի, թէև նորա էջերը ամբողջ մնացած լինին։

ՍՄԲԱՏ. — Այդ նոյնն է թէ ինձ համար մի տիկին առնէին. ես տիկին չեմ խաղում, ուրեմն այդ խաղալիկը ինձ համար անպէտք կը լինէր և ես դէն կը ձգէի նորան։

ԱՐՇԱԿ. — Դու կարող էիր տիկինը քրոջդ տալ, այդ զուարճութիւն կը պատճառէր նորան, քեզ էլ նոյնպէս։

ՏԻԳՐԱՆ. — Բայց չէ կարելի արդիւնաւոր կերպով գործածել մի տիկին։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Ինչպէս չէ, կարելի է։ Նախ՝ ներելի է զբօսնել կամ խաղալ, եթէ մարդ աշխատել և իւր պարտաւորութիւնը կատարել է. դարձեալ, տիկինները փոքր աղջիկների համար մի զուարճալի միջոց են կարել սովորելու. վերջապէս, մէկին մի բանով զուարճութիւն պատճառել, ինչպէս որ ասում էր Արշակը, այդ էլ կարող է յաճախ արդիւնաւոր գործածութիւն համարուիլ։

ՏԻԳՐԱՆ. — Պարոն ուսուցիչ, դուք ասում էք յաճախ. կը նշանակէ թէ ուրիշին մի բանով զուարճութիւն պատճառելը միշտ արդիւնաւոր գործածութիւն չէ՞։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Դիցուք թէ մի մարդ իւր աշխատութեամբ 2 մանէթ է ձեռք բերել մի օրուայ մէջ. եթէ նա փոխանակ հաց և ուրիշ անհրաժեշտ բաներ գնելու իւր երեխաների համար՝ քաղցրեղէններ առնէր նոցա համար, ի՞նչ ես կարծում, Տիգրան, իւր եկամուտը արդիւնաւոր կերպով գործածած կը լինէր.

ՏԻԳՐԱՆ. — Ի հարկէ ոչ, որովհետև մարդ պէտք է նախ այն բաները գնէ որ հարկաւոր են. բայց այդ մարդը շատ աւելի վատ բան արած կը լինէր եթէ քաղցրեղէնները ինքը կերած լինէր։

ՈՒՍՈՒՑԻՉԸ.—Այդ շատ աղնիւ զգացմունք է քո կողմից, Տիգրան։ Իսկապէս, երբ մարդ մի եկամուտ ունի, պէտք է ամէնից առաջ հարկաւոր կամ օգտակար բաները գնէ, իսկ մնացած փողի մի մասը կարելի է զուարճութեան վրայ մսխել և մի մասը խնայել։

ԱՐԱՄ. — Ամէն մարդ միևնոյն եկամուտը չունի. կան հարուստ մարդիկ, կան էլ որ ամենևին հարուստ չեն։

ՏԻԳՐԱՆ. — Հարուստները գեղեցիկ ու լաւ բաներ շատ ունին. նոքա ճոխութեան մէջ են ապրում։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Եթէ մէկը բաւական մեծ եկամուտ ունի, կարող է մի որոշեալ դումար մսխել զուարճութեան համար, այդ բոլորովին ներելի է։ Բայց չպէտք է կարծել թէ բոլոր ծախքերը որոնք հացի ու մսի վրայ չեն գընում շռայլութեան ծախքեր են։ Բացի մարմնաւոր պիտոյքներից ուրիշ պիտոյքներ էլ կան. կրթեալ մարդու համար շատ անգամ մի գիրք համարեա նոյնքան կարևոր է որքան և հացը։ Ամէն մարդ ինքը գիտէ թէ ինչպէս պէտք է գործ դնէ իւր եկամուտը. եթէ վատ է գործածում իւր փողը, եթէ պէտք եղածից աւելի է մսխում, եթէ, ինչպէս ասում են, մի

բան յետ չէ դնում սև օրուան համար, դառն կերպով կը զղջայ։ Մարդս, վաղ թէ ուշ, պատժվում է իւր գործած սխալների համար։

ԱՐԱՄ. — Բայց աղքատները չեն կարող խնայութիւններ անել։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Աղքատ կարելի է անուանել միայն այն անձանց որոնք աշխատութիւն չունենալով՝ մի քիչ ժամանակ ապրուստի ամէն աղբիւրներից զուրկ են. բայց ով որ չափաւոր վարձ է ստանում, չէ կարող աղքատութեան վրայ խօսք անել։ Ես ճանաչել եմ այնպիսի անձինք որոնք թէև թեթև վարձ էին ստանում, բայց անօգուտ բաների վրայ փող չվատնելով՝ կարողացել են խնայութիւններ անել։»

Վաճառականութիւն.

Մի կիրակի երեկոյ, մի քանի հարևաններ ըստ սովորութեան հաւաքուել էին կակղի ծառի տակ. այս անգամ խօսքը զանազան արհեստների ու զբաղմունքների վրայ էր, և ամէն մէկը բնականաբար իւր արհեստը ամէնից օգտակարն էր համարում։

Ուսուցիչը լսում էր ժպտալով, բայց երբ

վէճը սկսաւ տաքանալ, խօսակցութեան մէջ խառնուեցաւ։

«Ես ձեզ կը պատմեմ մի առակ, ասաց նա, որ ամէնիդ կը համոզէ ու կը համաձայնեցնէ.

«Մի օր մարմնի անդամները, — ձեռքերն ու ոտքերը, — ապստամբեցան ստամոքսի դէմ։ Այդ ի՞նչ է, ասում էին նոքա, ծոյլ ստամոքսը ոչինչ չէ շինում, և բոլոր աշխատութիւնը միայն մեզ վրայ է բարձած. մենք նորան կերակրում ենք, իսկ նա հանգիստ մարսում է։ Այս ասելով, նոքա վճռեցին անգործ մնալ. ոտքերը այլևս չէին շարժվում սնունդ դնելու համար և ոչ ձեռքերը՝ սնունդը բերանը տանելու համար, և թոյլ տուին որ ստամոքսն ու աղիքները իրանց գլխի ճարը տեսնեն։ Բայց շուտով անդամները սկսան տկարանալ, և մի քանի օրից յետոյ նոքա խոստովանեցան թէ յաղթըված են և թէ բաղդաւոր կը լինէին որ ստամոքսը շարունակէ իւր աշխատութիւնը, որ թէև աննշմարելի է՝ բայց անհրաժեշտ է ամբողջ մարմնի գոյութեան համար։

«Տեսնում էք ուրեմն, աւելացրեց դաստիարակը, որ բոլոր արհեստներն ու զբաղմունքները օգտակար են հասարակութեան համար, և թէ չպէտք է աշխատել մէկը միւսից դերա-

զանց դասել։ Միթէ կարելի՞ է վերձել այն մասին թէ մարդու համար ո՞րն է աւելի վատ, սրբունդից թէ բազկից զրկուիլ։ Խուլ թէ կոյր լինել։ Բայց ինչ կ՚ուզէ լինի, լաւն այն է որ ամէն մարդ իւր գործին կպած լինի և իւր արհեստը պատիւ համարի իրան։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Ամէն արհեստները լաւ են, միայն «անուստայ փէշակը հարամ է,» ինչպէս ասում է առածը։

ՍՕՍ. — Շատ ուղիղ է. բայց ես կը ցանկայի իմանալ թէ ի՞նչ օգուտ ունի վաճառականութիւնը։ Վաճառականը աւելորդ միջնորդ է արտադրողի և սպառողի մէջ. նա թանգացնում է արդիւնքները՝ իւր աշխատութեան համար հատուցում պահանջելով։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Դուք կարծում էք թէ վաճառականութիւնը անօգուտ արհեստ է։ Տեսնենք։ . . . Արտաշէս, սուրճը ո՞ր տեղից է գալիս։

ԱՐՏԱՇԵՍ. — Մոկայից՝ որ Արաբիայումն է գտնվում, Բրազիլիայից՝ որ Հարաւային Ամերիկայումն է, Բուրբոնեան կղզուց՝ որ արևելեան Աֆրիկայումն է, Ջավայից՝ որ Ասիայումն է։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Շատ ճիշտ է։ Այժմ տե-

սէք, Սօս, որովհետև դուք միջնորդի հարկաւորութիւնը չէք տեսնում, երբ սուրճի պէտք ունենաք, փոխանակ ձեր հարևան մանրավաճառին դիմելու, կ՚երթաք Բրազիլիա, կամ Ջավա և կամ Բուրբոնեան կղզին։

ՍՕՍ.— Տեսնում եմ որ դուք կատակ էք անում։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Կատակ անողը ես չեմ, քանի որ դուք էք ցանկանում միջնորդները մէջ տեղից վերացնել։ Եթէ միջնորդները աւելորդ են երևում ձեզ, պէտք է ուրեմն ինքներդ ամէն բան անէք։ Ահա, օրինակի համար, դուք հագած ունիք բամպակէ շապիկ, և յայտնի է որ բամբակը մեծ քանակութեամբ գալիս է Ամերիկայից, Հնդկաստանից, Եգիպտոսից. ընտրեցէք, ո՞ր տեղ կը կամենաք գնել։ Բայց տեսնենք նախ թէ բամբակ ցանողը յանձն կ՚առնէ երեք-չորս ֆունտ բան ծախել ձեզ. հասկանալի բան է որ նա աւելի լաւ կը համարի մէկ վաճառականի ծախել իւր բոլոր բերքը, որ 5,000 ից մինչև 10,000 փութի է հասնում։ Եւ եթէ կամենար ծախել ձեզ ձեր ուզած քանակութիւնը, ո՞վ յանձն կառնէր բերել բամբակը. և ի՞նչպէս կը մանէիք և կտաւ կը գործէիք այդ բամբակից։

ՍՕՍ. — Դորա համար գործարաններ կան։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Այդպէս է. Բայց այդ մեծ գործարանների տէրերը, ուր յաճախ 1,000 և աւելի գործաւոր է աշխատում, ուր մեծամեծ մեքենաներ են բանում, ուր հաղարաւոր փուԹերով նախնական նիւԹեր են պատրաստում, ուր օրէնը 4,000 և աւելի մանէԹ է մխվում վարձերի և նախնական նիւԹերի վրայ, ժամանակ չունին մի քանի արշին կտաւ ծախելու։ Նոքա պէտք է մեծ քանակուԹեամբ ծախեն, և շատ քիչ վաստակով գոհ լինին՝ արշինի վրայ քառորդ կամ կէս կոպէկ ստանալով։

ՍՕՍ. — Քառորդ կամ կէս կոպէկ միայն։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Սովորաբար այդպէս է։ Նոքա կարող են շատ քիչ վաստակով գոհ լինել որովհետև նոցա մեքենաները միջոց են տալիս նոցա կարճ միջոցում շատ մեծ քանակուԹեամբ ապրանք պատրաստել, օրէնը հաղարաւոր արշիններ, և մի անգամից մեծ քանակուԹեամբ էլ ծախել։ ենԹադրենք, օրինակի համար, ԹէԹ աշխատուԹեան մեկ ժամը արժէ 40 կոպէկ. եԹէ ես մի ժամուայ մէջ միայն չորս արշին ծախեմ, պէտք է արշինի վրայ 10 կոպէկ շահեմ. իսկ եԹէ մի ժամում հարիւր արշին ծախեմ, կէս կոպէկը իսկապէս բաւական է։

ՍՕՍ. — Բայց գործարանի տէրը կարող է շտեմարաններ հաստատել, խանուԹներ բանալ։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Այդ անհնարին է, որովհետև միևնոյն գործարանից դուրս եկած ապրանքները շատ տեղեր են գնում, ուրեմն և հարկ կը լինէր հաղարաւոր շտեմարաններ բանալ։ Բացի սորանից, գիւղում երբեմն տասն արշին մետաքսեղէն են գնում մի տարուայ ընԹացքում, կարելի՞ է այդքան քիչ բանի համար խանուԹ բանալ։

ՄԻ ՀԱՐԵԻԱՆ. — ԵԹԷ այդքանի համար շտեմարաններ ու խանուԹներ բանային, ամէն մի գիւղում յիսուն կամ հարիւր անգամ աւելի վաճառականներ կը լինէին քան այսօր. իսկ եԹէ այդ շտեմարանները միայն քաղաքներում հաստատուէին, մենք ստիպուած կը լինէինք այնտեղ գնալ մեր ուզած ապրանքներն առնելու։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Ես աւելի լաւ եմ համարում մի քանի կոպէկ աւելի տալ արշինի վրայ քան մի ամբողջ օր կորցնել քաղաք գնալու համար։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Իհարկէ այդպէս է։ Բայց դիցուք ԹէԹ քաղաք երԹայիք 10 արշին գնելու համար, մինչդեռ վաճառականը 300 ար-

շեն մի անգամից է գնում, չէ՞ որ ճանապարհի ծախքը արշինի վրայ, երեսուն անգամ պակաս կը լինի վաճառականի համար քան ձեզ համար։

«Մի՞ւս կողմից, միթէ շտեմարաններ հաստատելը ոչինչ չարժէ։ Ամէն մի շտեմարան զանազան ծախքերի պէտք կ՚ունենար, որպիսի են տան վարձը, մէկ կամ մի քանի գործավարների ռոճիկը, լուսաւորութեան և վառելիքի ծախքերը։ որ գնողը պիտի հատուցանէ՝ ապրանքի համար աւելի թանգ վճարելով։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Այս էլ կայ որ մի քանի նոյնատեսակ ապրանքներ առնելու համար՝ պէտք կը լինէր մի քանի խանութ մտնելու որովհետև ոչ մի տեղ ամէն ուզած բաներդ չէիր գտնիլ։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Մենք ընդունում ենք ուրեմն որ վաճառականութիւնը մեծամեծ ծառայութիւններ է մատուցանում։ Նա բերել է տալիս ապրանքները հեռաւոր և մօտիկ տեղերից, և մաս առ մաս ծախում է նոցա յօգուտ մեզ ամէնիս։

ՏԻԳՐԱՆ. — Ո՞րն է ապրանքների մաս առ մաս ծախուելու օգտակարութիւնը։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Քիչ անձինք կան բաւական հարստութիւն ունեցող որ մեծ քանակութեամբ ապրանքներ կարողանան գնել, և եթէ կարողանային էլ բաւական տեղ չէին ունենալ իրանց բնակարաններում ամէն տեսակ պաշարեղէններ պահելու համար. ուր մնաց որ կան ապրանքներ որոնք կը փչանային եթէ շուտով չսպառուէին, այդպիսի ապրանքներ պէտք է մաս առ մաս ծախուին որ նոյն օրը կամ մի քանի օրուայ մէջ գործածուին. վերջապէս կան բաներ որ արտադրողը միայն մեծ քանակութեամբ կարող է ծախել, իսկ սպառողը միայն մաս մաս կարող է դնել. պէտք է ուրեմն մի միջնորդ լինի արտադրողի ու սպառողի մէջ։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Օրինակի համար, երկրագործը իւր եղները ողջ ողջ ծախում է մանավաճառին. մանավաճառը մորթում է այդ եղները և մաս առ մաս ծախում է մեզ ամէնիս. որովհետև մեզանից ամէն մէկը կը դժուարանար մի եղը միանգամից ուտել, կամ մինչև անգամ գնել։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Ես միշտ այնպէս եմ համարել որ եթէ միջնորդները օգտակար չլինէին, մենք չէինք դիմել նոցա. օրէնքը ոչ ոքին չէ սոխպում այդ բանն անելու։ Ես կարծում եմ թէ մենք վաճառականի մօտ նորա համար ենք գնում որ այդ մեզ համար օգտակար ենք համարում։

Վաճառաշրջիկներ և շահատես վաճառականներ.

Կորեկի հունձը անյաջող էր եղել գինը բարձրացել էր, և շատ մարդիկ նեղանում էին։ Գիւղացիք շատ էին գանգատում, և մի կիրակի երեկոյ տաք տաք խօսում էին այդ մասին։

Սօսը սաստիկ մեղադրում էր հողագործներին, որոնք բարձրացնում են գները և, ինչպէս ինքն ասում էր, ժողովրդի թշուառութիւնից օգուտ են քաղում։ Նա սաստիկ խօսում էր նոցա դէմ և անպիտան չարչիներ էր անուանում նոցա։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Զուր ես տաքանում, բարեկամ։ Հանդարտուէ, ես քեզ ցոյց կը տամ որ անիրաւ տեղն ես խօսում։

ՍՕՍ. — Այդ անկարելի է։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Ընդհակառակն, այդ շատ հեշտ է։ Դիցուք թէ ես մի օրավար հող վարձու եմ առել և մէջը կորեկ եմ ցանել։ Ես մրսխեցի արտը մշակելու համար 12 մանէթ, սերմի համար 1 մանէթ, և վճարեցի 12 մանէթ հողատիրոջը. բոլորը անում է 25 մանէթ։ Որպէս զի չափաւոր օգուտ ունենամ և իմ

աշխատութիւնը վարձատրուի, պէտք է որ արտը 20 թաղար կամ 200 փութ կորեկ տայ, որ 2 մանէթից՝ կ'անէ 40 մանէթ։

«Եթէ արտը 25 թաղար է տալիս, գինը 2 մանէթից պակաս է լինում, օրինակի համար 1 մ. 80 կ. այն ժամանակ ես ստանում եմ 45 մանէթ. այդ ձեռնտու է գնողներին, որովհետև 2 մանէթի տեղ 1 մ. 80 կ. են վճարում, ձեռնտու է և ինձ, որովհետև 40 մանէթի փոխանակ 45 մանէթ եմ ստանում բոլոր կորեկի համար։

ՍՕՍ. — Դիցուք թէ այդպէս է. դիցուք թէ երկրագործները որոնք իրանց սեպհական արդիւնքները ծախում են՝ չարչիներ չեն, և իսկապէս այդ անարգ անունը տրվում է այն վաճառաշրջիկներին որոնք գիւղէ գիւղ մանդալով պակաս գնով ցորեն և ուրիշ բերքեր են հաւաքում և պահում են մինչև որ գները բարձրանան։

«Սոքա ժողովրդին հարստահարում և նոցա թշուառութեան պատճառն են լինում։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Արդարև, այդ մարդիկը իրանց օգուտը աչքի առաջ ունին և անգութաբար իրանց շահերի եաևից են լինում։ այդ իհարկէ պախարակելի է. սակայն նոքա էլ եր-

բեմն ծառայութիւններ են մատուցանում, ինչպէս դառն դեղերը որ բժիշկները ստիպում են մեղ խմել. ուրեմն անիրաւութիւն կը լինէր հալածել նոցա։

ՍՕՍ. — Դժուար կը լինի ձեզ ապացուցանել թէ չարչիները կարող են ծառայութիւններ մատուցանել։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Ոչ այնքան որքան դուք կարծում էք։ Թոյլ տուէք ինձ նախ մի նկատողութիւն անել։ Դուք միշտ չարչի էք ասում, և ես էլ հետևելով ձեզ գործածեցի այդ բառը։ Չարչի ասելով դուք հասկանում էք այն վաճառաշրջիկներին որոնք հանգամանքներից օգուտ քաղելով զեղծումներ են անում։ Իմ խօսքը այդ տեսակ մարդկանց վրայ չէ, այլ այն շահատես վաճառականների վրայ որոնք պատուաւոր կերպով գործ են տեսնում։ Արդ, շահատես վաճառականները այնպիսի մարդիկ են որոնք աշխատում են նախատեսել ապագայի պիտոյքները, և իրանց գործը այնպէս են բռնում որ կարողանան այդ պիտոյքները լրացնել։ Ես միայն այս կարգի վաճառականների վրայ եմ խօսում, և դիւրին է ցոյց տալ որ նոքա օգտակար ծառայութիւններ են մատուցանում։ Տեսէք, Տանուտէրը արդէն պարզ կերպով ցոյց

տուեց թէ՝ երբ հունձը անյաջող է, պէտք է որ գինը բարձրանայ, որպէս զի արտադրողը իւր ծախքերը հանէ։

«Բայց ի՞նչ ազդեցութիւն կ՚ունենայ գների բարձրանալը սպառողի վրայ։ Բարձր գները կը յորդորեն կամ կը հարկադրեն նորան իւր սպառմանը չափ ու սահման դնել։ Նա միշտ միևնոյն դումարը կը մսխէ, դուցէ մի բան էլ աւելի, բայց այդ դումարի համար պակաս ապրանք կ՚ունենայ։

»ենթադրենք թէ փոխանակ 25 թաղար կորեկի միայն 8 թաղար է ստացուել, և գները այնու ամենայնիւ ցած մնացին, ի՞նչ կը պատահի։ Կորեկը առաջուան պէս կ՚ուտուի, և շուտով ութ թաղարը կը սպառուի, և յետոյ... էլ ոչինչ չի մնալ։ Իսկ եթէ գները բարձրացան, ամէն մարդ զգոյշ է լինում, և աշխատում է պակաս կորեկ բանեցնել։ Նախ առաջուան պէս չէ վատնում, յետոյ կենդանիներին էլ չէ տալիս, այլ կորեկի տեղ ուրիշ բան է ուտեցնում, և վերջապէս օղի քաշելու և ուրիշ բաների համար չեն գործածում կորեկը, այլ միայն տան համար հաց են թխում։

«Եթէ այս խնայութիւնները բաւական չը լինին, և գները շարունակեն բարձրանալ, (ո-

րովհետև 25 թաղաթից 5 ը կարելի է խնայել, բայց ոչ 15 ը,) այն ժամանակ ի՞նչ կը պատահի։ Մարդիկ կ՚երթան ուրիշ տեղերից կորեկ բերելու, ուր այդ բերքի առատութիւն կայ. որովհետև քանի որ մի ապրանք թանգ է, կարող է ճանապարհի ծախքերը վերցնել։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Ճանապարհի ծախքը կորեկի համար բաւական թանգ է նստում. պէտք է որ թաղաթը 2 մանէթի տեղ 5 մանէթ արժենայ, որ ձեռնտու լինի բերել։ Կորեկը միայն 2 մանէթ արժէ ուրիշ տեղ, բայց ճանապարհի ծախքը 2 մ. 50 կ. է նստում, այդ անում է 4 մ. 50 կ., և բերողն էլ պէտք է դոնէ 50 կ. օգուտ ունենայ։

ՍՕՍ. — Ես ընդունում եմ որ գների բարձրանալը կրկնակի օգուտ է տալիս, մէկ կողմից յորդորելով մարդկանց խնայող լինել և միւս կողմից բերքեր բերել տալով, բայց չեմ հասկանում թէ, չարչիներից ինչ շահ կայ։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Այն մարդիկը որոնց դուք շարունակում էք չարչի անուանել, և որոնց պէտք է շահատես վաճառականի անունը տայիք, շեմարանների պաշտօնն են կատարում։ Նոքա պահպանում են բերքերը, հոգս են տանում որ չվատնուին, պէտք եղած ժամանակը

օտար տեղերից բերում են, և յաճախ շատ հեռաւոր երկրներից։ Միթէ ապրանքը ուրիշ տեղից բերելը ծառայութիւն մատուցանել չէ՞։ Միթէ դուք աւելի լաւ չէ՞ք համարում մի բանի համար փոքր ինչ աւելի թանգ վճարել քան բոլորովին զուրկ մնալ այդ բանից։ Դուք կ՚ասէք թէ նա այդ իւր շահի համար է անում. բայց եթէ նորա շահը պահանջում է ձեզ ծառայութիւն մատուցանել այդ աւելի լաւ է։ Դուք օգտվում էք այդ բանից, թոյլ տուէք որ նա էլ մի չափաւոր օգուտ ստանայ։

ՍՕՍ. — Այո. բայց բանն այն է որ չափազանց մեծ օգուտների ետևից են լինում։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Այն մարդիկը՝ որոնք խիստ մեծ օգուտների ետևից են լինում, պատժվում են իրանց ագահութեան համար։ Նախ՝ նոքա ատելի են դառնում այն հասարակութեան մէջ ուր ապրում են. յետոյ, միայն մի կէտ յիշելու համար, նոքա որոնք շատ են ուզում շահել, վերջիվերջոյ մեծամեծ վնասների տակ են ընկնում։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Անշուշտ։ Նոքա սպասում են որ գները բարձրանան ու բարձրանան, և չեն ծախում մինչև որ գները սկսում են իջնել։ Այն ժամանակ միայն շտապում են ծախել մեծ

քանակութեամբ ապրանքներ են առաջարկում մի անգամից. այդ նպաստում է գները աւելի էլ պակասեցնելու, և այդպէսով նոքա բռնվում են։»

Հահասաններ.

Այդ միևնոյն տարին որ հունձը վատ էր եղել, առուտուրը լաւ չէր գնում, և ամէնքը դանդատաւոր էին։ Ցանցանքը ոչոքինը չէր, ամէն մարդ աշխատում էր, որքան հնար ունէր, իւր ապրանքները ծախելու. բայց հանգամանքները անյաջող էին։

Գոնեա այս կարծիքն էր յայտնում Տանուտէրը մի քանի հարևանների առաջ, որոնք առուտուրի անյաջողութեան պատճառները ուրիշ բաների մէջ էին փնտռում։

«Տեսէ՛ք, ասում էր նա, ահա Արամն ու Արտաշէսը որ խաղում են այնտեղ, երկու բառով, և առանց հասկանալու, բացատրեցին ինձ թէ ինչի գործերը լաւ չեն գնում։

— Այդ ի՞նչպէս, հարցրին հարևանները։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Ահա ինչպէս. Արամն ասաց Արտաշէսին. «ես երեք ֆռիկ ունիմ, կամենում ես մէկը գնել և նորա փոխարէն վէգեր

տալ ինձ։» Բայց Արտաշէսը վէգեր չունէր, և բանը գլուխ չեկաւ։»

Ուսուցիչը եկաւ խառնուեցաւ այդ խմբի մէջ. և երբ յայտնեցին նորան թէ խօսքը ի՞նչ բանի վրայ էր, իրաւունք տուեց Տանուտէրին։

Բայց հարևանները կարծես դեռ լաւ չէին հասկացել, և Տանուտէրը շարունակեց խօսել այսպէս.

«Ասացէ՛ք, ի՞նչ է հարկաւոր ձեզ երբ կամենում էք մի լաւ շոր գնել ձեր կնոջ համար կամ մի հրացան ձեզ համար, կամ մի ուրիշ օգտակար կամ զուարճալի առարկայ։

— Փողը, ասացին ամէնքը միաբերան։

— Լաւ։ Բայց ոչ ոք փողը չէ գտնում փողոցում. պէտք է ձեր բերքերը ծախէք որ փող ունենաք. այնպէս չէ՞։

— Այդպէս է։

— Ուրեմն երբ քիչ բերքեր ունիք, քիչ փող էլ կարող էք ձեռք բերել, և այն քիչն էլ որ ունիք, պահում էք անհրաժեշտ բաների, կարևոր ծախքերի համար, իսկ մնացած ամէն տեսակ ծախքերը ուրիշ աւելի յաջող ժամանակների էք թողնում։»

Հարևաններից մէկը, Պաղտօնց Կարապետը, նկատեց որ բերքերը երբեմն այնքան շատ

են լինում որ չէ կարելի ծախել նոցա, թէ չափազանց մեծ առատութիւնը գները շատ է կոտրում, և թէ արժանութիւնը միշտ ձեռնտու չէ արտադրողին։

«Բայց երբ բերքերը խիստ առատ են լինում, ասաց ուսուցիչը, այդ ժամանակաւոր անյարմարութեան առաջ կարելի է առնել նորանոր շահաստաններ կամ վաճառատեղիներ որոնելով։ Որքան մարդիկ աւելի են արտադրում, այնքան աւելի շահաստանների պէտք ունին. երբ բերքերի առատութիւնը գները պակասեցնում է, յաճախ ինքնըստինքեան նորանոր շահաստաններ են բացվում։

«Եթէ, օրինակի համար, մեր գիւղում գինու չափը 1 մանէթ արժենար, այդ շատերի համար թանգ կը լինէր. իջեցրէք այդ գինը 50 կոպէկի, և այն ժամանակ ոչ միայն մեզանում շատ գնողներ կը գտնուէին, այլ և ուրիշ տեղեր կարելի կը լինէր գինի ուղարկել։ Նոյնը պէտք է հասկանալ և ուրիշ ամէն տեսակ ապրանքների համար։

— Այդ բոլորը ուղիղ է, ասաց Պաղտօնց Կարապետը, բայց երբ կորեկի առատութիւն կայ, գները պակասեցնելով չէ կարելի աւելի կորեկ ուտել տալ. մէկ մարդ չէ կարող

օրէնը մի փութ կորեկ ուտել, եթէ ձրի էլ տային նորան։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Բայց կորեկից կարելի է օղի հանել (արաղ քաշել), կարելի է նոյնպէս կենդանիներին ուտեցնել. հարկ չկայ անպատճառ կորեկը բնական ձևով ուտել։

— Շատ ճշմարիտ է, պատասխանեց ուսուցիչը։ Որքան էլ առատ լինի մի բերք այսօր եթէ մարդ նոր վաճառատեղի է գտնում նորա համար մեզանում կամ ուրիշ երկրներում, կարող է համարձակ աւելացնել նորա արտադրութիւնը։ Այն օրից որ ճակնդեղից շաքար և օղի են շինում, շատ աւելի են մշակում քան երբ ճակնդեղը գործ էին ածում լոկ ուտելու համար։

«Կարճ ասեմ, մարդիկ սովորաբար ուրիշների արդիւնքները այն ժամանակ են գնում երբ իրանք էլ արտադրում են, և որքան շահաստանների կամ վաճառատեղիների թիւը մեծ է, այսինքն ուրիշ խօսքով, որքան գնողները (կամ սպառողները) շատ են լինում, այնքան աւելի արտադրողները խրախուսվում են։ Մարդ սիրով աշխատում է երբ իւր աշխատութիւնը լաւ է վարձատրվում։»

Հաղորդակցութեան ճանապարհներ.

Երկաթուղու աշխատութիւնները արագութեամբ առաջ էին գնում և գիւղացիք շատ էին խօսում այն նոր ճանապարհի վրայ որ անցնելու էր իրանց գիւղի մօտով։ Այսպիսի մի խօսակցութեան ժամանակ, երկաթուղու պաշտօնեաներից մէկը ասաց թէ երկաթուղին հաղորդակցութեան ամենակատարեալ ճանապարհն է։ Տիգրանը հարցրեց.

«Ի՞նչ է հաղորդակցութեան ճանապարհը։»

Երկաթուղու պաշտօնեան բաւականացաւ ասելով թէ այդ այնպիսի ճանապարհ է որ հեշտացնում է մարդիկն ու բերքերը մէկ տեղից միւսը տեղափոխելու։

Ուսուցիչը հարկաւոր համարեց մի քանի բացատրութիւններ տալ։

«Կան հաղորդակցութեան ճանապարհներ ջրի վրայ և ցամաքի վրայ, ասաց նա։ Մեծ կամ փոքր գետերը որոնց վրայ նաւերը գնում են՝ հաղորդակցութեան ճանապարհներ են. գետը, ինչպէս ասաց մի երեւելի մատենագիր, գընացող ճանապարհ է, որովհետև ջուրը հոսելով՝ նաւը առաջ է մղում։ Ձրանցքները, որոնք

մարդուս աշխատութեամբ փորուած գետեր են, և ծովը նոյնպէս հաղորդակցութեան ճանապարհներ են։

«Ցամաքի վրայ, ամենափոքր ճանապարհը կոչվում է . . .»

ՏԻԳՐԱՆ. — Շաւիղ։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Շաւիղը շինուած է հետաքրքիրների համար, կամ շատ շատ մի բեռնակիր անասունի համար. բայց հէնց որ կամենում են կառքով գնալ, պէտք է լինի մի ճանապարհ, որ շատ աւելի լայն է քան շաւիղը և որ շատ տեղ քարած ու լաւ պահպանուած է։ Երկաթուղին այնպիսի ճանապարհ է որի վրայ պնտացրած են երկաթագծեր. այդ երկաթագծերի վրայ անիւները աւելի հեշտութեամբ ու արագութեամբ են գնում և չեն կարող ճանապարհից ծռուիլ։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Երկաթագծերի վրայ գնացող անիւները ոչինչ դարուփոս տեղերի մէջ չեն խրվում։

ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՊԱՇՏՕՆԵԱՆ. — Ես խոստացայ ձեզ ապացուցանել որ երկաթուղին ամենակատարեալ ճանապարհն է. մի համեմատութիւն կ'անեմ որ պարզ ցոյց կը տայ ձեզ իմ ասածի ճշմարտութիւնը։

«ենթադրենք թէ մի մարդ յանձնառու է լինում 3 փութ (կամ 120 ֆունտ) ապրանք շալակին տանել Թիֆլիսից Աղէքսանդրապոլ. նա այդ ճանապարհը հաղիւ 10 օրում կ՝անց կենար, և օրէնը գոնեա 3 մանէթ կը պահանջէր, որ շատ թանգ չէր լինիլ: Ապրանքի տեղափոխութիւնը կ՝արժէնար ուրեմն 3 անգամ 10 կամ 30 մանէթ, կամ փութի վրայ 10 մանէթ:

«Բեռնակիր մարդու տեղ առնենք մի կառք և ձի: Կառքի վրայ կարելի է գոնեա 30 փութ բարձել. ձին այդ ճանապարհը հեշտութեամբ կ՝անէր 6 օրում, և ծախքը կը լինէր օրէնը 6 մանէթ. այդ կ՝անէ ընդամէնը 36 մանէթ, կամ փութի վրայ 1 մ. 20 կ: Եթէ ճանապարհը վատ է, կառապանը 8 կամ 10 օրում իւր տեղը կը հասնի և աւելի վարձ կը պահանջէ. որովհետև վատ ճանապարհների վրայ ձիաները շատ են յոգնում և կառքերը շուտ շուտ նորոգուելու պէտք ունին:

«Իսկ եթէ մի երկաթուղի շինէինք որ հազարաւոր փութեր մի անգամից տանում է, փութը միայն մի քանի կոպէկ կ՝արժենար, և ապրանքը մի օրում տեղը կը հասնէր:

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Գետերի և ջրանցքների

վրայ ծախքը նոյնպէս շատ քիչ է լինում, բայց ջրի վրայ կամաց են գնում:

ԱՐՏԱՇԷՍ. — Ինչի՞ ճանապարհի ծախքը քիչ է լինում ջրի վրայ:

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Որովհետև երկու կամ երեք մարդ կարող են դետի կամ ծովի վրայ տանել մի մեծ նաւ ապրանքներով բարձած:

ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՊԱՇՏՕՆԵԱՆ. — Այսպէս ուրեմն երկաթուղին թէ արագ է գնում և թէ աժան է նստեցնում և կարող է շատ բան տանել մի անգամից. ահա այս պատճառով նա հաղորդարցութեան ամենակատարեալ ճանապարհն է:

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Պարզ է թէ որքան ճանապարհի ծախքը թանգ արժէ, այնքան ապրանքների գինը բարձր է լինում, որովհետև ճանապարհի ծախքերը ապրանքների գնի վրայ են աւելացվում:

ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՊԱՇՏՕՆԵԱՆ. — Ճանապարհի ծախքերը այնքան բարձր են լինում, որ թոյլ չեն տալիս շատ հեռու տանել ծանր կամ մեծ տեղ բռնող նիւթերը: Այսպէս, օրինակի համար, դիցուք թէ մի երկաթի կտոր հանքից դուրս գալով և գործանոցում ձողի փոխարկուելով արժէ 1 մ. 50 կ: Ասենք թէ

ոչ ոք չէ կամենում երկաթի համար 4 մանէ-
թից աւելի վճարել, այն ժամանակ ճանապար-
հի ծախքի համար կը մնայ 2 մ. 50 կ. բայց
մինչև որ տեղ կարելի է երկաթը տանել 2 մ. 50
կոպէկով. սայլով գուցէ 150 կամ 200 վերստ,
նաւով կամ երկաթուղով 500 կամ 600 վերստ,
ծովային մեծ նաւով 5 ից մինչև 6,0000 վերստ։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Որքան ճանապարհի ծախ-
քը պակաս է լինում, այնքան աւելի հեռու
կարելի է գնալ, և որքան հեռու են գնում,
այնքան աւելի շահաստաններ կամ վաճառա-
տեղիներ են գտնում, ուրիշ խօսքով գնողների
թիւը աւելացնում են։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Այս է պատճառը որ աշ-
խատում են գիւղային ճանապարհներն էլ լա-
ւացնել։ Երբ ճանապարհը վատ է, երկու ձիով
կառքի վրայ կարելի է միայն 30 ից մինչև 35
փութ բան բարձել. իսկ երբ ճանապարհը լաւ
է, 50 ից մինչև 60 փութ են բարձում, և ճա-
նապարհի ծախքը, փութի վրայ, կիսով չափ
պակաս արժէ։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Լաւացնենք ուրեմն միշտ
մեր հաղորդակցութեան ճանապարհները, այդ
բանի վրայ գործ դրուած փողն ու աշխատու-
թիւնը ապարդիւն չեն լինիլ։»

Ապահովութիւն.

Գիւղի շրջակայքում մի սպանութիւն էր
գործուել մի քանի շաբաթ առաջ. մարդա-
սպանը բռնուել, դատուել ու դատապարտուել էր։

Այս զարհուրելի դէպքը մեծ սարսափ
էր բերել գիւղի վրայ. գիւղացիքը շատ էին
խօսում այդ մասին, և ուրախ էին որ մար-
դասպանը իւր արժանաւոր պատիժը ստացաւ։

«Եթէ պատժած չը լինէին նորան, ոչ ոք
ապահով չէր լինիլ դուրսը և իւր տան մէջ,
ասաց Տանուտէրը իւր հարևանին։ Ամէն օր
գողութիւններ կը պատահէին մեր արտերում,
բանն այն տեղ կը հասնէր որ գուցէ գիշերով
մեր տները կոտրէին, մեր կեանքն անգամ ա-
պահովութեան մէջ չէր լինիլ. ո՞վ կարող է
իմանալ թէ չար մարդիկ ինչ վատութիւններ
կարող են անել։

ՀԱՐԵՒԱՆԸ. — Եթէ արտերում չարա-
գործներ լինէին, ես չէի համարձակիլ աշխա-
տանքի գնալ։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Եւ ի՞նչ օգուտ այն աշխա-
տութիւնից, եթէ ապահով չպիտի լինինք որ
ժամանակին վայելելու ենք նորա արդիւնքները։»

Ուսուցիչը խօսակցութիւնը շարունակելով՝ ասաց.

«Կարգը և ապահովութիւնը համարեա նոյնքան հարկաւոր են աշխատութեան համար որքան և առողջութիւնը. եթէ ձեր ձեռքերն ու ոտքերը թոյլ լինէին, դուք անկարող կը լինէիք արտադրելու. իսկ եթէ աշխատելուց յետոյ՝ արգիլէին ձեզ վայելելու ձեր աշխատութեան պտուղը, այդ աւելի վատ կը լիներ, որովհետև զուր աշխատած կը լինէիք։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Առանց ապահովութեան, ոչ ոք արհեստանոց կամ խանութ չէր բանալ, էլ ոչ արհեստներ կը լինէին և ոչ վաճառականութիւն։

ՀԱՐԵԻԱՆԸ. — Էլ ոչ ոք ծառեր չէր տնկիլ։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Ոչ էլ երկաթուղիներ կը շինէին։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Ապահովութիւնը պահպանելու համար երկրի մէջ հաստատուած է իշխանութիւնը, որի գործն է հսկել որ գողութիւններ ու սպանութիւններ չլինին, և նա պէտք է ամէն հարկաւոր զգուշութիւնները գործ դնէ հասարակաց ապահովութեան համար։

ՀԱՐԵԻԱՆԸ. — Օրինակի համար, նա պի-

տի աշխատի որ վարակիչ հիւանդութիւնները չտարածուին մարդկանց ու անասունների մէջ։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Ոչ, այդ մարդկային կարողութիւնից բարձր է, այլ նա պէտք է զանազան զգուշութեան միջոցներ ձեռք առնէ և հսկէ որ այդ միջոցները գործադրուին ախտերի սաստկութիւնը պակասեցնելու կամ աւելի չտարածուելու համար։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Խօսք չկայ որ իշխանութիւնը շատ բան ունի անելու՝ նահանգներից ու դաւառներից սկսած մինչև ամենափոքր քաղաքների ու գիւղերի մէջ։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Անշուշտ, և շատ բան կը գտնէինք ասելու, եթէ կամենայինք ամէնը հաշուել, պատերազմի պատրաստութիւնից սկսած երկրի պաշտպանութեան համար մինչև կառավարների համար գրուած կանոնները՝ որ փողոցում անցուդարձ անողներին ոտնակոխ չանեն։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Հարկաւ շատ երկար կը լինէր իշխանութեան կատարելիք գործերը մի առ մի թուել, մանաւանդ որ այդ բոլորը ամէնին յայտնի է։ Միայն ամէն մարդ դեռ բաւական լաւ չէ ըմբռնում որ իշխանութիւնը պաշտօնատէրների օգտի համար չէ, այլ ժողովրդի օգտի համար։»

Հարկեր.

Այդ միջոցին անց էր կենում հարկ ժողովողը, և խօսակցութիւնը բնականաբար եկաւ հարկերի վրայ։ Պետութիւնը, նահանգները, իւրաքանչիւր քաղաք ու գիւղ ծախքեր ունին, այդ ամէն մարդ գիտէ, քանի որ ամէն մարդ հարկ տալով մասնակից է լինում այդ ծախքերին. բանն այն է միայն որ հարկը միշտ յօժարութեամբ չէ վճարվում։

Այդ յանդիմանութիւնը չէր կարելի անել մեր Տանուտէրին, ոչ նորա համար որ գիւղի մեծն էր և պաշտօնի տէր մարդ, այլ որովհետև գիտէր որ հարկ տալով ամէն մարդ մասնակից է լինում այն ընդհանուր ծախքերին որ լինում են հասարակաց ապահովութեան, ճանապարհների պահպանութեան, կրթութեան և ուրիշ շատ օգտակար բաների համար։

Նա ասում էր.

«Եթէ կարգն ու ապահովութիւնը չեշխէին մեր երկրում, ես ստիպուած կը լինէի իմ պաշտպանութեան համար զէնքեր գնել, իմ պատուհաններին երկաթէ վանդակներ գնել և դռներին մեծ մեծ կողպէքներ։ Բայց այդ

դեռ արգելք չէր լինիլ չարագործներին իմ խոտի դէզերն այրելու, իմ եզները գողանալու և մինչև անգամ իմ տունը կրակ տալու։ Դորանից իհարկէ շատ մեծ վնասներ կը կրէի, այնպէս որ այդ դժբաղդութիւններից ազատ մնալու համար նշանակած հարկը վճարելով, ես շատ աժան եմ պրծնում։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Եթէ կարելի լինէր մի հարկ վճարել բժշկին որպէս զի նա ամէն տեսակ հիւանդութիւնների առաջն առնէր, ամենայն խելացի մարդ ուրախութեամբ յանձն կ'առնէր այդ բանն անելու։ Արդ, հարկը վճարվում է այն նպատակով որ անկարգութեան և պատերազմի պատճառած չարիքների առաջն առնուին։

ՀԱՐԵՒԱՆԸ. — Միայն, հարկը շատ ծանրը է վճարելու, որովհետև գումարը շատ մեծ է։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Չէ՞ որ մեր ընտրած անձինքն են բաժանում հարկերը և որոշում թէ իւրաքանչիւր մարդ որքան պիտի վճարէ, — գիւղական վարչութեան անդամները գիւղերում, քաղաքային վարչութեան անդամները քաղաքներում, և եթէ այնպիսի անձինք էք ընտրել որոնք միայն հասարակաց օգուտը աչ-

քի առաջ ունին, հարկերը արդարութեամբ են բաժանվում։

ՀԱՐԵՒԱՆԸ. — Բայց քանի՞ տեսակ հարկեր կան. բացի գլխահարկից կայ կալուածական հարկը, առևտրական վկայականի հարկը, դրուագաւոր թղթի, խմիչքների (օղի), ծխախոտի և ուրիշ հարկերը։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Հարկերի այսպէս բաժանուելու պատճառն այն է որ ամէն մարդ իւր միջոցների համեմատ վճարէ։ Խօսք կայ մինչև անգամ որ կառավարութիւնը մօտիկ ժամանակներումն նոր օրէնք պիտի հրատարակէ, որի զօրութեամբ ամէն մարդ, ազնուական և ոչ ազնուական, քաղաքացի և գիւղացի իւր ստացած եկամուտների համեմատ հարկ պիտի տայ։

«Օրինակի համար. դուք ունիք մի տուն կամ մի հող, վճարեցէք կալուածական հարկը. ստանում էք զանազան եկամուտներ, վճարեցէք շարժական կայքի հարկը. վաճառականութիւն էք անում կամ մի արհեստ էք բանեցնում, վճարեցէք վկայականի հարկը. օրական աշխատանքով էք ապրում, վճարեցէք մի թեթև գլխահարկ, որովհետև ամենայն քաղաքացի պարտաւոր է մասնակից լինել տէրութեան ծախքերին։ Ոչ մի պատուաւոր մարդ չի կամենալ

քաղաքական իրաւունքները վայելել առանց քաղաքացու պարտաւորութիւնները կատարելու։

«Վերոյիշեալ բոլոր հարկերը կոչվում են ուղղակի հարկեր, բայց կան նոյնպէս կողմնակի հարկեր, որոնց մեծ մասը սպառողների վրայ է ընկնում։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Այսպէս են, օրինակի համար, օղիի և ծխախոտի վրայ դրուած հարկը, ինչպէս և այն հարկերը որ վճարվում են դրրուագաւոր թղթերի և նոտարների ձեռքով եղած արձանագրութիւնների համար։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Այդ բաւական չէ։ Մենք իսկապէս հարկ ենք վճարում այն բոլոր ապրանքների համար որ օտար երկրներից բերվում և մեզ վրայ ծախվում են։ Այդ տեսակ հարկերը տրվում են մաքսի ձևով, որ վաճառականը միանգամից վճարում է տէրութեանը և յետոյ մեզանից մաս առ մաս ստանում է։ Դիցուք թէ մի փութ անգլիական շաքարը վաճառականին արժէ 5 մանէթ, և թէ նա 2 մանէթ մաքս է վճարել, շաքարը 7 մանէթի կը դայ վաճառականին, և եթէ նա կամենում է փութի վրայ վեց շայի շահել իւր աշխատութեան համար, մի փութ շաքարը կը ծախէ 7 մ. 30 կոպէկով. կամ ֆունտը 18

կոպէկ, կէս ֆունտը 9 կոպէկով լայլն։

«Եւ որովհետև սպառողը այս հարկը ուղղակի տէրութեանը չէ վճարում, այլ անուղղակի կերպով, այսինքն վաճառականի միջնորդութեամբ է տալիս, այս պատճառով շաքարի համար տրուած հարկը կոչվում է կողմնակի հարկ։ Նոյնը պէտք է հասկանալ մնացած բոլոր ապրանքների համար, որոնց համար վաճառականը մաքս է վճարում։

ՏԱՆՈՒՏԷՐԸ. — Որովհետև կողմնակի հարկերը քիչ քիչ են վճարվում, և հարկը այստեղ ապրանքի գնի վրայ է գալիս, ուրեմն այս տեսակ հարկերը համարեա անզգալի կերպով են տրվում։ Կարելի է մինչև անգամ ասել թէ մարդ ազատ է մի քանի կողմնակի հարկեր վճարելու կամ չվճարելու. ոչ ոք ստիպուած չէ, օրինակի համար, ծխել կամ օղի խմել։

ՀԱՐԵԻԱՆԸ. — Հապա դրուագաւոր թղթի համար ի՞նչ կ՚ասէք։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Դրուագաւոր թղթի վրայ գրվում են առևտրական և ուրիշ տեսակ պայմանները, որ շատ անգամ նոտարը իւր ստորագրութեամբ հաստատում է, և այսպիսի բաների համար վճարուած հարկը անտեղի չէ։ Նոտարը իւր մատեանի մէջ արձանագրում է

պայմանագրերը և վաւերացնում է երկու կողմի ստորագրութիւնները, այնպէս որ ոչ ոք չէ կարող ոչ խաբուիլ, ոչ էլ ուրիշներին խաբել։ Այսպիսի ապահովութեան համար միթէ չարժէ՞ մի քիչ բան վճարել, մանաւանդ երբ խօսքը մեծ գումարների վրայ է որ ոչ չի կամենալ վտանգի ենթարկել։

ՀԱՐԵԻԱՆԸ. — Բայց այդպիսի հարկեր շատ անգամ է պատահում վճարել տարուան մէջ, այնպէս որ եթէ բոլորը միասին առնուի՝ մեծ գումար կը կազմէ, մանաւանդ մեզ պէս գիւղացոյց համար։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Ճշմարիտ է. բայց տէրութեանն էլ շատ փող է հարկաւոր, որովհետև մեծ ծախքեր ունի։ Այս պատճառով նա հարկերի տեսակները բազմացնում է, քննում գըտնում է եկամուտի բոլոր աղբիւրները և ամէն մէկի համար հարկ է առնում, համարեա ամէն մի մատուցած ծառայութեան համար առանձին վճարել է տալիս։

«Ուրիշ երկրներում ասողներ եղել են թէ արդեօք այդքան տեսակ տեսակ հարկերի տեղ՝ աւելի լաւ չէ՞ր լինիլ մի միայն հարկ ունենալ, որ ամէն մարդ իւր ստացած եկամուտի համեմատ վճարէր։

«Այս հարցին պատասխանել են այսպէս.

«Նախ՝ դժբաղդաբար շատ անձինք կը գըտնուէին որոնք իրանց եկամուտի ճիշտ թիւը չէին յայտնիլ, այնպէս որ աղնիւ մարդիկը որոնք ճշմարիտ խօսած կը լինին աւելի կը վճարէին քան սուտ խօսողները։

«Երկրորդ, շատ արուեստների և առուտուրների մէջ, մարդ երբէք առաջուց ճիշտ չէ իմանում թէ որքան պիտի շահի. ուրեմն և անկարելի կը լինէր ճշմարիտն ասել։

«Վերջապէս, եթէ Ֆ Ֆոյն հարկ լինէր, մի անգամից վճարելի գումարները խիստ մեծ կը լինէին շատերի համար. այդ կարող էր գործերը խանգարել։

«Զանազան հարկեր հաստատելով, տէրութիւնները յոյս ունին քիչ շատ հաւասար կերպով բաժանել հարկերը և միևնոյն ժամանակ հարկատուների բեռը փոքր ինչ թեթևացնել։»

Լաւ և վատ կողմերը.

Մովսէսը դիտաւորութիւն ունենալով Թիֆլիս գնալու, եկաւ ուսուցչի մօտ այդ մասին խորհուրդ հարցնելու համար։ Այդ մեծ

քաղաքում, մտածում էր նա, լաւ վարձ են վճարում և մարդիկ այնտեղ բաղդաւոր են։

Ուսուցիչը հասկացրեց նորան թէ ամէն բան իւր լաւ ու վատ կողմերն ունի, որ պէտք է քննել, իրարու հետ բաղդատել և, եթէ կարելի է այսպէս ասել, կշեռքի երկու թաթերի վրայ դնել, որ տեսնենք թէ ո՞ր կողմն աւելի ծանր կը լինի։

Այս բանին Մովսէսը պատասխանեց թէ՝ մեծ քաղաքներում անշուշտ լաւ կողմը վատից աւելի է։

«Լաւ, ասաց ուսուցիչը, ահա Սօսը դալիս է, նա երկար ժամանակ ապրել է քաղաքներում և ծանօթ է այդ կեանքի լաւ ու վատ կողմերին։»

Մովսէսը մէկ մէկ շարեց նորա առաջ, թէ քաղաքներում մեծ մեծ վարձեր են տալիս, թէ աշխատութիւնը այնտեղ այնքան ծանր չէ, և ուրիշ սորա նման բաներ։

Սօսը պատասխանեց.

«Կասկած չկայ որ աշխատութեան վարձը աւելի մեծ է քաղաքում քան գիւղում. բայց բանն այն է որ միշտ չէ կարելի գործ ճարել, և ապրուստը թանդ է քաղաքներում։ Եթէ մարդ աւելի է վաստակում, աւելի էլ մսխում է և վերջիվերջոյ մի քայլ առաջ չէ գնում։

ՄՈՎՍԷՍ. — Բայց ես անտեսութեամբ կ՝ապրիմ և կ՝աշխատիմ քիչ քիչ փող յետ դընել։

ՍՕՍ. — Բայց դու յաճախ կը սխալուիս յետ դրած փողերդ ուտել, որովհետև տարին տասներկու ամիս աշխատանք չես ունենալ։

ՄՈՎՍԷՍ. — Յաճախ, այո՛, բայց ոչ միշտ։ Այս էլ կայ որ կեանքը աւելի զուարճալի է քաղաքում։ Կան գեղեցիկ տներ . . .

ՍՕՍ. — Ուր թանգ կը վճարես մի մութ ու խոնաւ անկիւնի համար։

ՄՈՎՍԷՍ. — Եւ գեղեցիկ պարտէզներ . . .

ՍՕՍ. — Ուր դու ժամանակ չես ունենալ գնալու։

ՄՈՎՍԷՍ. — Հապա թատրոնը . . .

ՍՕՍ. — Հապա՞ այն խնայութիւնները որ պիտի անէիր։ Ի՞նչպէս, դու կամենում ես գընալ քաղաք ապրել և զուարճութիւնների վրայ ես մտածում։ Թէ այդպէս է, կորած ես։ Ով որ խելքը միտքը զուարճութեան է տալիս, շուտով անգործութեան է սովորում։ այդպիսի մարդու վերջը լաւ չի լինիլ։

ՄՈՎՍԷՍ. — Բայց ես միայն գործս կատարելուց յետոյ կը զուարճանամ աշխատութիւնից հանգստանալու համար։

ՍՕՍ. — Երբ մարդ ամբողջ օրը ինչպէս հարկն է աշխատում է, շատ անգամ այնպէս յոգնած է լինում որ ոչ մի զուարճութիւն աչքումը չէ գալիս. ուր թողնենք որ զուարճութիւնը համարեա միշտ թանգ է նստում։

ՄՈՎՍԷՍ. — Ես կարող եմ զուարճանալ առանց փող մսխելու. օրինակի համար, գիրք կարդալով, բարեկամներիս հետ խօսելով և ըզբօսնելով։

ՍՕՍ. — Գիւղումն էլ կարելի է գիրք կարդալ, խօսակցել և զբօսնել, դորա համար հարկ չկայ քաղաք գնալ. այս էլ կայ որ մեծ քաղաքներում մարդ աւելի է հիւանդանում քան գիւղում։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Սիրելի Մովսէս, պէտք է միշտ ամէն բանի լաւ ու վատ կողմերն առնել և իրարու հետ բաղդատել, որ սխալ բան չը բռնենք։ Զոր օրինակ, մի ապրանք որ քիչ արժէ՝ սովորաբար քիչ էլ կը դիմանայ, որովհետև վճարած փողիդ համեմատ կը ստանաս. այս ինչ պարապմունքը կարող է յոգնեցուցիչ լինել, բայց առողջութեան համար անվնաս է. այն ինչ պարապմունքը թեթև է, բայց առողջութեան վընասակար է։ Մի արհեստի մէջ մարդ մեծ վարձ է ստանում, բայց երեք կամ չորս ամիս անգործ

է մնում, այնպէս որ յաճախ աւելի լաւ կը լինէր պակաս վարձ ստանալ և մի հաստատուն գործ ունենալ։

ՄՈՎՍԷՍ. — Ուրեմն ես կը ցանկայի հարուստ լինել։ Հարստութիւնը վատ կողմեր չունի։

ՈՒՍՈՒՑԻՉԸ. — Սխալվում էք, բարեկամ։ Հարուստը միշտ հոգսերից ազատ չէ, նա շատ անգամ իւր ունեցածը վտանգի է ենթարկում, և այդ այնպիսի մեծ հոգս է որ նորա ախորժակն ու քունը կտրում է. պահպանելը երբեմն այնքան դժուար է որքան և ձեռք բերելը։ Դարձեալ հարուստը միշտ հեռու չէ կարող պահել իրան սնապարծութիւնից, փառասիրութիւնից ու հպարտութիւնից, որ մենք մեր համեստ դրութեան մէջ չունինք, և այս բաները մեծ ցաւ են պատճառում, շատ աւելի մեծ ցաւ քան այն մանր մունր զրկողութիւնները որոնց կարող ենք հանդիպել մեր ամէնօրեայ կեանքում։ Հարուստը չգիտէ թէ ինչ բան է պակասութիւնը, բայց աւելորդն էլ երբեմն ցաւ է պատճառում։ մարդ միշտ ախորժակ չունի ուտելու այն թանկագին կերակուրները (որ միշտ նոյնքան առողջարար չեն որքան թանկագին), որոնք բերվում են իւր սեղանի վրայ, և եթէ զօրով ուտում է, հիւան-

դանում է . . . մարդիկ չափազանց շատ ուտելուց նոյնքան յաճախ են մեռնում որքան և բաւական բան չուտելուց։ Զնայելով այս բոլորին, ես չեմ ասիլ ձեզ թէ աւելի լաւ է աղքատ լինել քան հարուստ, բայց կ՝ասեմ և կը կրկնեմ, որ ամենայն հարստութեան սկիզբը աշխատութիւնն է։ Ուրեմն եթէ կամենում էք հարստանալ, աշխատեցէք։ Միայն, այդ նպատակով աշխատելու ժամանակ՝ մի մոռանաք որ փողը մենակ չէ կարող բաղդաւորութիւն տալ այլ կարող է օգնել մեզ բաղդաւոր լինելու, եթէ այնքան խելացի կը լինինք որ իմանանք պատուաւոր ու օգտակար կերպով գործ դնել մեր հարստութիւնը։

ՄՈՎՍԷՍ. — Ես կը մտածեմ ձեր ասածների վրայ, և մի բան անելուց առաջ կը քննեմ նորա լաւ և վատ կողմերը։»

ՎԵՐՋ

ՑԱՆԿ

ԳՐՔՈՅԿԻՍ ՄԷՋ ԳՈՐԾԱԾՈՒԱԾ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ

առաջարկ	offre	предложеніе
արժէք	valeur	цѣнность
արժէթուղթ	billet de valeur	цѣнная бумага
արդիւնք	produit	продуктъ
արտադրել	produire	производить
արտադրող	producteur	производитель
արտադրութիւն	production	произведеніе
բաժնեխտում	action	акція
բանթող	grève	забастовка
բաշխ	dividende	дивидендъ
գին	prix	цѣна
գործակցական ընկ.	société coopérative	кооперативное общество
դաշնակապ	coalition	стачка
դրամագլուխ	capital	капиталъ
— հաստատուն	— fixe	—постоянный
— շրջաբերելի	— circulant	—оборотный
— մտաւոր	— intellectuel	—умственный
դրամատէր	capitaliste	капиталистъ
զեղչ	escomte	вычетъ,дисконтъ
զեղչել	escomter	вычитать
ընթացք	cours	курсъ
բռնի ընթացք	cours forcé	принудительный курсъ

ընթացիկ հաշիւ	compte courant	текущій счетъ
ծախք	frais	издержки
— արտադրութեան	— de production	—производства
կանխիկ	comptant	наличными деньгами
հարկ	impôt	налогъ
— ուղղակի	— direct	—прямой
— կողմնակի	— indirect	—косвенный
մենավաճառութիւն	monopole	монополія
մրցում	concurrence	конкуренція
նիւթ	matière	предметъ
նախնական նիւթեր	— s premières	сырье, сырыя произведенія
շահ, օգուտ	bénéfice	выгода
շահել, վաստակել	gagner	заработать
շահաստան	débouché	сбытъ
շտեմարան	dépôt	складъ
շրջաբերութիւն	circulation	обращеніе
պահանջ	demande	спросъ
պարտատոմս	obligation	облигація
սպառել	consommer	потреблять
սպառող	consommateur	потребитель
վարկ	crédit	кредитъ
տոկոս	intérêt	процентъ
փոխանակութիւն	échange	мѣна
օգտակարութիւն	utilité	полезность

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՑՈՒՇԱՑՈՒՑԱ 3
Օգտակարութիւն և արժէք 7
Իրական և երևակայական օգտակարութիւն 10
Սեպհականութիւն 14
Ի՞նչ է նշանակում աշխատել 18
Աշխատութիւնը կարիք է 21
Աշխատութիւնը պատուաւոր է 23
Աշխատութեան բաժանում. — 1) Իրողութիւնը . . 26
Աշխատութեան բաժանում. — 2) Պատճառը . . . 30
Փոխանակութիւն 34
Փող 38
Գին. — Արտադրութեան ծախքերը 43
Գին. — Առաջարկ և պահանջ 45
Գին. — Ոչ աւելի աղբիւրութիւն ունի գնի վրայ, գնողը թէ ծախողը 50
Ոսկի և հարստութիւն 55
Թղթադրամ 59
Պարտամուրհակ. — Բանկ 62
Վարկ 69
Դրամագլուխ 73
Ջանազան տեսակ դրամագլուխներ 78
Դրամագլխի տոկոսը 83

Դրամաղլխի տոկոսը և շահը 91
Վարձի զանազան տեսակները 98
Դաշնակապ. — Բանեթող 103
Գործակցական ընկերութիւն 110
Մեքենաները 114
Մրցում 121
Մենավաճառութիւն 125
Սպառում 131
Շռայլութիւն և խնայութիւն 135
Վաճառականութիւն 138
Վաճառաշրջիկ և շահատես վաճառականները . . . 146
Շահաստանները 152
Հաղորդակցութեան ճանապարհները 156
Ապահովութիւն 161
Հարկը 164
Լաւ և վատ կողմերը 170
ՑԵՆԿ ՏՆՏԵՍՏԿԱՆ ԲԱՌԵՐԻ 177

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏՐԳԱՅ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

«Ազգային գրադարան»
NL0240369